

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
Organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԱԿ

№ 10
OCTOBRE
1931
PARIS (France)

«ՀՈՅ ՅԵՂՈՓՈՒԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՊՐԻՆ

ԻՆՔՆԱՄՓՈՓՈՒՄ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔ

Տագնապները յաջորդում են իրար անսովոր արագությամբ: Պատերազմից ի վեր մարդկությունը չի տեսել գործերի, յարաբերությունների ու տրամադրությունների այսպիսի նսաստիկ ու համատարած լարում: Տագնապից ազատ չէ եւ ո՛չ մի երկիր, Հին ու Նոր Աշխարհների եւ ո՛չ մի մաս: Արդիւնաբերությունն եւ առեւտրի աննախընթաց կրճատում ու միլիոնաւոր գործազուրկներ Ամերիկայում, Անգլիայում, Գերմանիայում եւ ամէն կողմ: Բիւզջէտային աճաւոր բացեր ու դրամական ճգնաժամ: Անդլիական ոսկու թաւալըր փլուզում: Ներքին անհանգստութիւն ու ջլալի դալարումներ ժողովուրդների մէջ ամէն տեղ, փոխադարձ անվստահութիւն ու կասկածներ եւ ծանր մտահոգութիւններ այսօրայ ու վաղայ համար: Ահա աշխարհի պատկերը:

Ի՞նչ է այս — դրամատիրութեան մի ժամանակաւոր հիւանդութի՞ւն, թէ հոգեվարքի վերջին ջրածուցութիւններ: Եթէ լսելու լինենք Մոսկուայի թմրակահարներին, Գաբրիէլ հրեշտակապետն արդէն մահւան սիողն է փշում բուրժուազիայի ականջներին: Անգլիական ոսկու անկումը Մեծ Բրիտանիայի կայսերապետութեան վախճանն է աւետում: Իսկ բրիտանական զօրութեան խորտակումով կը փակւի եւ բուրժուազիայի տիրապետութեան դարաշրջանը: Համաշխարհային յեղափոխութիւնը երկաթէ աւելով կը սրբէ—կը տանէ դրամատիրութեան նեխած մնացորդները: Տեղը կը հաստատուի « բանւորա-պիղաղիական » իշխանութիւն:

Որքան եւ պարզ, թուում է թէ, այս անգամ էլ առ նւազն «չափազանցւած է» դրամատիրութեան մահւան մարգարէութիւնը: Որ ժամանակակից հասարակակարգը վաղուց արդէն բռնւած է անյոյս հիւանդութեան տենդով, դրա դէմ հաղիւ թէ կարելի լինի առարկել: Այսօրայ տապնապը այդ տենդի սուր արտա-

յայտութիւններից մէկն է: Որ դրամատիրութեան աւերակների վրա հաստատուել է աշխատաւորութեան իշխանութիւնը, այդ նոյնպէս առարկութիւն չվերցնող ճամարութիւն է: Կասկածից դուրս է եւ այն, որ բովանդակ աշխատաւորութիւնը անձկութեամբ սպասում է այդ օրան: Այդ օրը, անտարակոյս, փրկարար կը լինի եւ հայ աշխատաւորութեան համար: Իայց այս բոլորով հանդերձ միամտութիւն է մտածել, թէ դրամատիրութեան զարգացումը հասել է հոգեվարքի վերջին կէտին: Ո՛չ, դժբախտարար. բուրժուազիայի տիրապետութիւնը զեռ այնքան ամուր է, որ, անկասկած, այս ճգնաժամից էլ դուրս կը դայ յաղթական: Վաղաժամ է եւ յուղարկաւորութեան պատրաստութիւնը անգլիական կայսերապետութեան համար, որքան եւ խճճւած լինի նրա ներքին վիճակը:

Այս իրատես գնահատութիւնն ունենալով ծաւալող դէպքերի մասին, հայ աշխատաւորութիւնը եւ նրա իղձերի ու կամքի արտայայտիչ Հ. Յ. Դաշնակցութիւնը չեն կարող ու չպէտք է օրորեն չափազանցւած յոյսերով ու վարդազոյն պատրանքներով: Ո՛չ թէ անմիջական յաղթանակ եւ ազատագրում է բերում աշխարհի տաղնապը, այլ, թերեւ, նոր փորձութիւններ ու նոր յուսալարութիւններ մեզ համար: Որքան գործերը արեւմուտքում խառնեն ու ծանրանան, ինչքան ժողովուրդները հարկադրւած լինեն ամփոփել ու կենտրոնանալ սեփական կաշու մէջ, Հայաստանը կաշկանդող շղթաները այնքան կը մնան ամուր ու նեղիչ: Եւրոպական տաղնապը, մասնաւորապէս, ձեռնտու է այսօրայ Թիւրքիայի համար, որի բռնատիրութիւնը՝ ապահով արտաքին միջամտութիւններից՝ ազատօրէն կը շարունակէ աւերի գործը:

Ի՞նչպէրը ինքնամփոփում են թեյադրում եւ մեզ համար: Աշխարհ՝ շատ է ետապաշտ ու

բազմազբաղ, որպէսզի իրաւունք ունենանք սպասելու նրանցից որիէ օգնութիւն: Մեզ օգնողը մէնք պէտք է լինենք, մեր յոյսը՝ մենք: Ինչպիսի ընթացք եւ ստանան տազնապի հետունքները, մենք պէտք է լինենք զօրաւոր, ամուր կազմակերպութեամբ ու ներքին համերաշխութեամբ. մէկ ճակատ սպաննացող վտանգի հանդէպ, մէկ միտք, մէկ կամք, մէկ գործ: Այս պէտք է լինի հայ ժողովրդի օրւայ նաւաբական ճիգը, ընդհանրական նշանաբանը — ազգային ուժերի համախմբում գոյութեան պայքարի եւ վաղւայ անակնկալների համար:

Գոյութեան պայքար դուրսը, հիւժող ու աշխատող տարագրութեան մէջ: Ազգային տնտեսական ինքնապաշտպանութիւն, սոսճային մշակութիւն, պարզացման սպանովութիւն, նոր սերնդի դաստիարակութիւն ու կապի ամրացում ազգային կոճղի հետ. մի խօսքով, հաւաքական կեանքի, բարդաւաճման ու յառաջդիմութեան երաշխաւորութիւն արտասահմանում:

Աշխատանք ներքը՝ Հայաստանում եւ Հայաստանի համար: Իրական ներգաղթ տարագիր բազմութիւնների, բայց, մանաւանդ, հոգեկան ներգաղթ: Որքան եւ պաղ ու անհրապոյր լինի խորհրդային իրականութիւնը, ինչքան եւ անտանելի համարւեն Հայաստանում տիրող կարգերն ու աշխատանքի եւ ապրուստի պայմանները — մարմնաւոր ու հոգեկան ներգաղթը հրամայական ու անյետաձգելի անհրաժեշտութիւն է եւ ամենաարժատարկան միջոցը գաղութահայ զանգուածների փրկութեան ու երկրի վերաշինութեան ուժեղացման:

Յարտուեալ ու յարաճուն պայքար հայրենիքի ազատութեան համար՝ ներդաշնակ ու համերաշխ բոլոր այն ուժերի հետ, որոնք նոյնպէս ճնշւած են թիւրք բռնակալութեան դատան լծի տակ եւ ձգտում են ազատել այդ լըծից: Ինչ եւ լինեն թիւրքական հաշիւները «Արեւելեան վերայթիւնների» վերաբերմամբ, հայ ժողովուրդը երբեք չի հաշուի Հայաստանի գերութեան ու թիւրքացման ծրագիրների հետ: Հայաստանը՝ հայ ժողովրդին: Այսօր ամայի եւ աւերակ Հայաստանը վաղը պէտք է լեցուի հայ ժողովրդով: Արդարութեան պահանջն է այս, այլ եւ պատմական անհրաժեշտութիւն: Պէտք է միայն արթուն մնանք, շարունակենք կամենալ ու ձգտել ու դիտմանք արժեքներ մեր կամքը անդուլ պայքարի ձեւերով:

Հայ ժողովրդի առջ մէկ ճանապարհ միայն կայ — պայքարի ճանապարհ: Պայքար բոլոր ճակատների վրա: Պայքար յանուն ինքնապահպանութեան: Պայքար ազատութեան համար: Եւ այս պայքարի մէջ ժողովրդի զբոխաւոր գէնքը՝ հաւատարմով ու փորձած՝ Հ. Յ. Դաշնակցութիւնն է: Պահել ու զօրացնել Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ նշանակում է ծառա-

յել հայ ազատագրական դատին: Որքան կուռ, ուժեղ եւ ամուր լինի Հ. Յ. Դաշնակցութիւնը, այնքան վճռական կը դառնայ հայ ժողովրդի մղած պայքարը, այնքան արդիւնաւէտ կը լինեն ազգային ինքնապաշտպանութեան ճիգերը:

Ինչպէս բովանդակ հայ ժողովրդի, Հ. Յ. Դաշնակցութեան առջեւ էլ այսօր, բացի պայքարի անմիջական պարտականութիւններից, դուռն են մի շարք կարեւոր խնդիրներ, որոնց լծւած պէտք է լինեն կուսակցութեան բոլոր անդամները: Առաջին հերթին գալիս է անոյս անքանի՜ պատանկութեան ու երիտասարդութեան ազգային-քաղաքական դաստիարակութեան գործը: Միակ վստահելի միջոցառում, ուր գաղութահայ երիտասարդը չի կորուի ազգային պորտից, Հ. Յ. Դաշնակցութեան շարքերն են: Միակ դպրոցը, ուր կարելի է մտաւոր-հասարակական լայն պաշար ստանալ, հոգու եւ կազմակերպւած նկարագրի տէր գործունեայ քաղաքացի եւ ամբողջական անհատ դառնալ, Հ. Յ. Դաշնակցութեան դպրոցն է: Միւս կողմից, գլխաւոր աղբիւրը, որտեղից մեր կուսակցութեանը պիտի լրացնէ պակասող անդամները ու գործիչները թիւը, պիտի ստանայ կենսական նոր հիւթ, երիտասարդական խանդավառութիւն ու անձնագոհութիւն, նոր սերունդն է: Հաւաքել այդ սերնդի ցուն ու ցիր բեկոյնները, մարդկ ու դաստիարակել, լեցնել մեր շարքերը — ահա այն մեծ ու հրատապ աշխատանքը, որ զօրաւոր թափով պէտք է կատարել բոլոր ընկերների կողմից:

Չուզրնթացաբար եւ համահաստար ետանդով պէտք է հետապնդուի եւ կուսակցական բոլոր զանգւածների ազգային — դաշնակցական դաստիարակութեան աշխատանքը: Գլխաւոր ու պարտաճանաչ դաշնակցականը մեր յեղափոխական շարժման հիմքն է: Անդիտակցաբար, միայն զգացմունքից դրդւած մեր շարքերը մտնող անհատները պատահական հիւրեր են՝ ենթակայ ամէն հովի ու հոտանքի ազդեցութեան. այսօր կան, վաղը չեն լինի: Իսկական դաշնակցականը նա՛ է, որ ո՛չ միայն յուզում ու ողբերգում է, այլ եւ քննում, դատում ու կշռում է, գիտէ, թէ ինչի է ձգտում ինքն ու իր կուսակցութիւնը եւ պատահող դժարութիւններից չի ընկճել ու չի լքի կուրճակաւոր: Մեր կուսակցութեան քառասուն տարւայ փոթորկայոյց կեանքում հարիւր հազարներ են եղել Դաշնակցութեան աւազանում մկրտածները, բայց տանեակ հազարներով են հաչուում մինչեւ մահ իրենց որդեգրած գաղափարին հաւատարիմ մնացողները: Հեռանում են թոյլերը, նպատակի յստակ գիտակցութիւնը չունեցողները, արտաքին ազդեցութիւններին ենթարկուողները: Մնացողներն են այն զբանիտէ պատանդանք, որի վրա կառուցել է ու շարունակում է կերտել հայ յե-

դափոխութեան հոյակապ շէնքը: Եւ մնացողները թիւը այնքան շատ կը լինի, նրանց հաւատը այնքան ամուր ու դործը, այնքան մեծ, որքան խորունկ ու բազմակողմանի կուսակցական դաստիարակութիւն տրւի նրանց:

Եւ այսպէս, ամբողջ աշխարհի օրինակով, թէ՛ ընդհանուր-ազգային ճակատում եւ թէ՛

մեր կուսակցութեան ներսը՝ ինքնամփոփումի, ուժերի հաւաքման, ներքին կազմակերպութեան եւ զօրացման աշխատանք են թելադրում դէպքերը: Այս պէտք է լինի մեր օրւայ մտահոգութեան առարկան, մեր բոլորիս յարատեւ ու անյողնում աշխատանքի ճիգը: Իրանից է կախած մեր այսօրւայ յարձակումների եւ վաղւայ գրոհների յաղողութիւնը:



Նստած՝ Կաթից Զրդը՝ ԵՓՐԵՄ, 3. ՄՈՒՐԱՏ, 4. ՍՏ. ՍՏԵՓԱՆԵԱՆ (Բալա Զան), 5. ՄԱՐԶՊԵՏ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ

«Քանի դեռ կայուն է բուրժուազիայի ոյժը եւրոպայում, Ռուսաստանում սոցիալիստական յեղափոխութիւնը անհնարին է՝ շնորհիւ իր սոցիալական յետամնաց դրութեան — մի բան, որի վրա ռուս յեղափոխականները պահանջած չափով ուշադրութիւն չեն դարձրել, և եթէ սոցիալիստական յեղափոխութիւնը

նայն իսկ յաջողւր Ռուսաստանում, այդ դէպքում հէնց եւրոպան կը խեղդէր նրան»:

ՌՈՍՏՈՄ

(Լ.Յ.Գ.Նրդ Ընդհ.ժողովի 28 օգ. նիստում արտասանած ճառից)

« Դառն, ճշմարտութիւնների խստովամարտիւնը յուսահատութիւն չէ »:

ՔՐԻՍՏԱՓՈՐԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Հ. Յ. Դաշնակցութեան Դիւանի պատմական նիւթերի մէջ պահած է Քրիստոսափորի ձեռքով գրւած հետեւեալ երկու ոտանաւորը: Առաջինը, թւում է թէ, Քրիստոսափորի իր յօրինածն է և այնպէս հարազատորէն յատկանշում է մեր մեծ վարպետի հոգին: Երկրորդը Քրիստոսափորի կատարած թարգմանութիւնն է ուսուրանաստեղծ Պ. Վէյնրիպից: Այս թանկագին նշխարները ներկայացնում ենք ընկերներին, իբրև անակնկալ ներք Հ. Յ. Դ. Օրւայ տոթիւ: ԽՄԲ.

I

Կայ մի բան — քաղցր ու վիեհ ամենից, Այս փուշ կեանքի մէջ քանզ և ընկերից. Օ՛ր, նա երկնատուր պարգև է մարդկանց, Որ ամփոփում է վըշտերը նըրանց:

Ասուած ուղարկեց աշխարհը հարան — Կորուսած դրախտի տեղը գրաւել. Դա՛, հայրենիքն է իմ այն սըրբազան, Որին սիրում եմ մօրից առաւել:

II

Ես երգեցի ծովի ափում
Իմ վըշտերը անազն,
Մովը դողաց յար անդրնդում,
Մըլիքարեց անբախտիս:
Ես յայտնեցի ազատ հողմին,
Որ յեղդում եմ այս կեանքում,
Նա քաղցեւեց գով իմ սրտին,
Նար ոյժ կուել յաւարում:
— Ես յոգնած եմ, քառուտ անտառ,
Ես հիւանդ եմ, ասացի...
Օր-օր յըշշաց նա ինձ համար
Եւ ես անդորր նընջեցի:
Ես յնդրեցի արեգակից
Տա՛ք ու պայծառ ճաճանջներ,
Նա ինձ փայլեց ամպի տակից,
Տա՛քաջըրեց իմ ջեր:
Ես ասացի ընկեր մարդկանց,
Որ յիստ նեղ է իմ ճամբան,
Նո՛քա քքու դէմքը իրանց
Խոժոռեցին և անցան:

ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ԴԱՅՔԱՐԸ

«Մեր տգէտ և վատասերած կեանքին մէջ աղաւաղւել է և քաղաքական կուրի դադարաբար, կուրի շիտակութեան սկզբունքը:

Ինչպէս վայրենիները, կամ միջնադարեան «սպեռները քաղաքական կուրի մէջ գործ կը զննին թոյն, դաշոյն, նեղ և խարէութիւն, մեղ մօտ և սակաւ շնն եղած սպանութիւնները անհատական, թայֆայական հաշիւներէ դըրւած և քաղաքական բարձր քաղաքական նպատակներով:

Մոռնալու չէ, թէ այն տարակարծութիւնները որ կան ժողովրդի ու կուսակցութիւնների, տարբեր կուսակցութիւնների և կուսակցական գանազան խաւերի կամ անհատների միջև, — պանազան արտայայտութիւններն են մարդկային ազատ և յառնադիմող մտքի: Այդ կարծիքներն են ո՛չ մին կարող է բացարձակ և մշտական ճշմարտութեան յաւանութիւնն ունենալ: Փոխադարձ համադրմէն և մտքի կատարեալ ազատ արտայայտութեան միայն կարող է ծնիլ իսկական ճշմարտութիւնը. անոր վրա միայն կարող է հաստատուել մարդկային յառաջագիւծութիւնը:

Քաղաքակիրթ հասարակութիւնները վաղուց ըմբռնած են, այս մտքի ճշմարտութիւնը, և կուսակցական պայքարը եւրոպացիների մէջ ունի մերիննէն տարբեր դոյն: Ընկերվարականներն ու դրամատէրները լինելով հակաուսկողմ չեն մոռնար, որ աւստրականութեան ու բոնակալութեան դէմ անոնք մէկ են և դաշնակից, որ արտաքին թշնամու դէմ աշխատաւորը, բուրժուան, ազնական և կղերականը զործելու են ձեռք ձեռքի:

ուսած: Իսկ կենսական բարիքների առատութեան, գեղարեւոտի և գիտութեան նւաճումների գերադոյն հարցերի մէջ — շահակից, դաշնակից և եղբայրներ են մարդկային ցեղի բոլոր անդամները:

Եւրոպացի գիտակից կուսակցականը չի մոռնար երբեք, որ եթէ մի կէտով, մի շահով ան կապած է կուսակցութեան հետ, երկու շահով կապած է իր ազգի, իր հայրենիքի հետ, աւելի մեծ ու բարձր շահերով — Մարդկութեան հետ:

Այն ժամանակ, երբ Եւրոպացի գաղափարական անհատը ներդաշնակութիւն կը մտցնէ իր կուսակցական, ազգային և մարդկային ըմբռնումներու ու պարտականութիւններու միջև, մեր մօտ ամէն բան կը շիտակէ:

Իբրև արդիւնք տգիտութեան, «ցեղական» մտայնութեան՝ կուսակցութիւնները, հասարակական տարբեր խաւերը մեր մէջ բաժնուած են միջնադարեան ազնակալականութեամբ. — «մաքուր» են կամ «պղծ», «ընկեր» են կամ «թշնամի»՝ անկարող՝ սահման գծել տարբեր շահերի միջև, անընդունակ համագործակցութեան և «հակաուսկողմի» մէջ ազգակիցը, մարդը զնահաստելու:

Երէկւայ սորուկների գաւազներ՝ մենք զուրկ ենք տակաւին մարդկային շիտակութենէ, ճակատ առ ճակատ կուլել, ղեկավարը զործեքէն, դաշնակիցը թշնամիէն տարբերել:

Մենք հեռու ենք ատողջ, ուժեղ, ազնիւ ազգ լինելէ...

Ս. ԶԱՒԱՐՅԱՆ
(«Բիւք-անիա», 1913թ. 12 յունու.)

ՀՊԱՐՏ ԵՒ ՅԱՂԹԱԿԱՆ

1926 թ. հոկտեմբեր 19 ին, Երևանի Պետական Թատրոնի շէնքի առաջ, հաւաքել էր խուան բազմութիւն: Քաղաքային այգու՝ Թատրոնին մօտ ծառուղիները, պարտանոցի հրապարակն ու կից փողոցները անկեանները լեփ լցուն էին բազմութեամբ: Փողոցներում երթեւեկը դադարել էր: Ասեղ ձգելու տեղ չկար:

Պորտուգալացի, անադուլու ու լուս՝ Ժողովուրդը սպասում է: Բոլորի հայեացքները յարած են Թատրոնի դռներին: Իւրաքանչիւրի դէմքը գնալով աւելի ու աւելի է լրջանում: Միայն աչքերի անհանդիստ ցոլքն ու մկանունները ջղախն դողը ցոյց են տալիս ինչ որ անսովոր հետաքրքրութիւն ու լարւած վիճակ:

Շատերը սպասում են կէսօրից ի վեր: Ընթրիքի ժամն է, բայց ոչ ոք տեղից չի շարժւում: Ընդհակառակը, նորանոր հետաքրքրուողներ են գալիս միանալու հազարաւոր ամբոխին: Անհանգստութեան ու ջղախնութեան նշաններ է ցոյց տալիս նաև ոռու հեծեանները ջրհատը, որը սուրբեր մերկացրած, պատրաստ դնդապիներով շրջապատել է դատարանի շէնքը՝ արդեւելով սեւէ մէկին անցնել մայրիկ կողմը:

Մտնեռում է գիշերը իր ուժը ու համր խորհրդաւորութեամբ: Հոկտեմբերեան մեղմ զովը աստիճանաբար զրգոտում է մարդկանց ջրերը: Մթութեան մէջ շողացող սիւններն ու մերկ սուրբեր աւելի խորհրդաւորութիւն են տալիս տեսարանին ու մահաւան սառսուրը Թափանցում է ամենքի ներքը: Այլևս համբերելու ոյժ չկայ:

Սկսում է փսփսուկ: Յետին շարքերը մեքենայօրէն խուժում են առաջ: Ռուս զինւորները կոպիտ հայ հոյանքով յետ են մղում առջևը կանգնածներին: Փոթորիկ բռնւած վիթխարի ծառի նման ամբոխը սկսում է տարուբերւել: Եւ այդ ալեկոծ գանդուածի առաջ մէկ հարց է ցցւած՝

— Կը գնդակահարե՞ն, թէ ոչ...

Ժամը տասն անց է: Յանկարծ, մարդկային ալիքն այնպիսի ուժգնութեամբ է մղում առաջ, որ ոռու պտահակների կուռ շղթան հազիւ է դիմանում: Էլ չեն աղղում ոչ սրածայր սիւնները, ոչ էլ փայլատակող սուրբերի սպանալիքը: Ամենքը համակւած են միայն մէկ ցանկութեամբ՝ ինչ դժով էլ լինի, գէթ մէկ ակնթարթով տեսնել մահապարտներին, որոնց զուրս էին բերում դատարանի շէնքից:

... Հանդարտ, բայց վճռական քայլաւորով, առջևից դնում է գլխաւոր մեղադրեալը՝ Սահակ Ստեփանոսեան: Մահաւան ու յաղթանակի ապրումները պարուրել են նրա հոգին և գունատ դէմքին Թառած ժողտացող գեղեցիկ աչքերը սեւեռած են դէպի անյայտութիւն...

Յանդուզն, խրոխտ ու գայրացած՝ յետևից քայլում են Սասնոյ հոյարտ կորիւնները՝ Պետրոսն ու Արտաշէսը: Հայ Ժողովրդի յեղափոխական սլաքարի ու Դաշնակցութեան զոհարերող ոգու մարմնացումն էին

այդ երկու նորահաս երիտասարդները: Դատական վճռից աւելի, այդ վարկեանին, նրանց միտքը կրանած էր դատաւարութեան ընթացքին յայտնաբերւած երեւոյթներով: Երիտասարդ հօգիները դեռևս չէին ազատագրւած դատարանի մթնոլորտից ու կուսակցական յեղափոխական ապրումներից: Արդեօք, այդպէս էլ պէտք է՝ լինէր...

Գէս գիշերից անց էր, բայց դեռ Ժողովուրդը ամբողջովին չէր վերադարձել տուն, և խօսակցութեան միակ նիւթը օրւայ դատաւճիւրն էր: Անգամ կոմունիստներից շատերի համակրանքը մահապարտների կողմն էր:

Հետեւեալ օրը նոյն բազմութիւնը հաւաքեց Կենդանութեամբ տան առջև՝ իմաստու, թէ արդեօք կը բեկանի՞ մահաւան վճիռը: Հայիկենադրձկոմի որոշումը ընդհանուր ցնձութիւն առաջացրեց: Գնդակահարման որոշումը փոխարինւում էր տասնամեայ բերդադէլութեամբ:

Իսկ 1927 թ. մայիս 27 ին, երբ շատ ուրշներ է հետ այդ երեքին էլ զըջեան Ռուստամանի արեւելեան աքսորավայրերը, Ժողովուրդը մծծ ցոյցերով ճանապարհեց նրանց մինչև կայարան: Նոյն ցոյցերը կրկնեցին Ալեքսանդրապոլում և ուրիշ կայարաններում:

Հ. Յ. Դաշնակցութեան հարածելու հրապարակային երրորդ փորձն էլ մատնեց անյայտութեան:

Առաջին փորձը՝ Դաշնակցութեան դատն էր: Մեղադրական աթոռին նստեցրել էին... լուսժողովուրդը Յովհաննիսեանին:

- Նախագահ.— Զեբ անո՞ւնը:
- Մեղադրեալ.— Հ. Յ. Դաշնակցութիւն:
- Նախագահ.— Հօբ անո՞ւնը:
- Մեղադրեալ.— Քրիստափոր:
- Նախագահ.— Մօբ անո՞ւնը:
- Մեղադրեալ.— Մարօ:
- Նախագահ.— Քանի՞ տարեկան էք:
- Մեղադրեալ.— 31 տարեկան:
- Նախագահ.— Պատմէք ձեր կենսագրութիւնը:

Այս գաւեշտով սկսեց 1921 թ. վերջերին Երևանում կազմակերպւած զրական-քաղաքական դատը, որը վերջացաւ Դաշնակցութեան Թաղման հանդիսաւոր արարողութեամբ: Դատախազների մեղադրական ճառերից յետոյ, Աշտո Եովհաննիսեանը գիմեց դատարանին.

— Եղէք մեծահօգի, որովհետև մեռելներին չեն դատում:

Մեռելներին չեն դատում, այլ թաղում են: Եւ թաղեցին: Աշտո Եովհաննիսեանը գոհ սրտով վերադարձաւ Յեկա և ստանձնեց կուսակցութեան գլխաւոր քարտուղարի պաշտօնը:

Արդեօք նա նախազգայ, թէ իր ձեռնարկած գաւեշտը, եօթը տարի յետոյ, ողբերգութիւն է դառնա-

լու և նորից զլիսաւոր դերակատարն ինքն է լինելու: Արդեօ՞ք, կը մտածէր, որ 1928թ. ինքը պէտք է մեղադրէր որպէս զազայնական ու զո՞հ գնար Քրիստոսփորի ու Մարտի գաղափարներին: Այո՞, ճակատագիրն անսոցք գտնուեց. «Ճեղազրիւայ» Աշուտ Յովհաննիսեանը աքտորւած է Ռուսաստան, «ղաշնակ մտայնութեան» ամբաստանութեամբ:

Երկրորդ փորձը՝ Դաշնակցութեան ինքնալիկւկացիան էր:

Մեռելը յարութիւն էր առել: Այս անգամ թաղումը պէտք է կատարուէր իրենց՝ դաշնակցականների ձեռքով: Սա էլ զաւելու էր: Դեկլարացիա ստորագրող չորս հազար նախկին դաշնակցականներից երկու հազարն այսօր բնտերում ու քարտայայտուած Հերոսարար րաթձր պահում է Դաշնակցութեան դրօշը: Եւ այլ կերպ չէր կարող լինել, որովհետեւ, ինչպէս Անդրկովկասեան Երկրային Կոմիտէն յայտարարեց. «Ինքնալիկւիզացիոն համագումարը Դաշնակցութեան վերածնունդի մի ժողով էր...»

Երրորդ փորձը եղաւ դաշնակցական տերորիստների գործը:

1926թ. Հոկտ. 8ին, Պետական Թատրոնում դատուող դաշնակցականների մեղադրական երբակացութիւնը սկսուած է՝ «1925 յուլիսի 26ի լոյս 27ի զիշերը ներքին Աղջաղայս գիւղում կատարուել է տերորիստական ակն նոյն զիշի խորհուրդի քարտուղար Մամուկ Ուուչոյեանի գէմ, որը և սպանել է զլիւից ստացած ճամուղէր» սխտեմի ատրճանակի երեք գնդակներից...» :

Այս անգամ դատարանը մեղադրական աթոռին նըստեցրել էր ոչ թէ Դաշնակցութեան գաղափարը, այլ գործոն անդամների, որոնք մեղադրուած էին որսչ փաստերի հիման վրա: Իսկ փաստն այն էր, որ իրօք սպանութիւն էր կատարուել և այն էլ դաշնակցականի կողմից:

Նորից կարգաչէք դատական այդ գործը: Որքան որ Հիցամունք է պատճառում դատող դաշնակցականների յեղափոխական կեցւածքն ու բարձր գաղափարականութիւնը, նոյնքան դարձանք է ստալինցիւմով դատաւորների թեթեամտութիւնն ու ախմարութիւնը: Եւ, իրօք, առէք ամենաբարտաբար մեղադրեալ Արտաշէս Մտեհիսեանին և հասարակական մեղադրող Արամայիս Երզնկեանին: Հարցաքննութեան ժամանակ, 23 տարեկան Արտաշէսի տաւծ պատասխանները որքան որ զգոյշ, չափած, անհուն զոհաբերութեամբ սողողուած ու գանգաւածներէ արդար բողբոջ արտայայտութիւն են, նոյնքան Երզնկեանի կողմից ուղղուած հարցերը շարուն, պարզութեամբ ու անուշը բնոյթ են կրում: Անլընութիւնն այն աստիճանի է հասնում, որ մեղադրեալները կամ չեն պատասխանում և կամ հեգնանքով յետ են մղում:

Բայց խնդիրը հարց ու պատասխանի մէջ չէր: Այլ այն նպատակի, որը հետապնդում էին դատավարութիւն կազմակերպողները:

Այն հանգամանքը, որ մինչև այս տեղի ունեցած գտտերը զուտ գաղափարական-տեսաբանական բնոյթ

էին կրում, ցոյց է տալիս, որ պայքարը Հ. Յ. Դաշնակցութեան և հայ բուլճարական կուսակցութեան միջև եղել է գաղափարական: Բնականաբար, իր գաղափարները տարածելու համար, Դաշնակցութիւնը պէտք է և կազմակերպութիւն ունենար և դրականութիւն տարածէր և թէ օգտագործէր բոլոր հնարաւոր միջոցները: Այդ բոլորով մէկ տեղ, Դաշնակցութիւնը խուսափել է բռնի միջոցներից և աշխատել է պայքարի գաղափարական սահմաններից դուրս չլալ:

Պարզ է, որ երբ մենատիրական մի վարչաձեւի տակ նման աշխատանքներ են տարւում, իշխանութիւնը էլ չպիտի հանդուրժէր և պէտք է հալածէր ու պայքարէր այսպիսի գործունէութեան դէմ: Այս բանը շատ լաւ գիտակցել են ընդարտակէս աշխատող տանողները և նախօրօք յանձն առել ամէկ մէկ զոհաբերութիւն:

Ուրեմն, Հայաստանում գոյութիւն ունին պայքարող երկու կողմեր՝ Հ. Յ. Դաշնակցութիւն և խորհրդրդային իշխանութիւն: Առաջինը պայքարի միակ գէնքը ընտրել է գաղափարը, իսկ երկրորդը և գաղափարը և բռնի ուժը: Դատավարութեան նախորդող վեց տարիների պայքարը ցոյց տուեց, որ յաղթանակը Դաշնակցութեան գաղափարի կողմն է: Իսկ իշխանութիւնն էլ եկաւ այն եղբակացութեան, որ Ֆիդիլքական հալածանքը բաւ չէ գաղափարը մեռնելու համար: Գաղափարը կը մեռնի առէլ ուսէլ և ժողովրդի շահերին օգտակար գաղափարի հարածների տակ: Բուլճարիկներն այդ հարածը չկարողացան հասցնել: Հետեւաբար, մնում էր դիմել ուրիշ գէների: Բուլճարիկներն ընտրեցին վարկարեկումը: Եւ փորձեցին այդ նպատակով օգտագործել Ուուչոյեանի սպանութեան գործը: Դատավարութիւնը պէտք է ապացուցանէր, որ՝ Հ.Յ.Դաշնակցութիւնը խորհրդային Հայաստանի հանդէպ միայն գաղափարական պայքարի մէջ չէ, այլ և յարձակողական քաղաքականութեամբ փորձում է ստապել իշխանութիւնը: Եւ Դաշնակցութեան գործոն քայլերի ներշնչողը միջազգային դրամատիրութիւնն է և, վերջապէս, միայն գաղափարական ճակատում պարտուելուց յետոյ է, որ Հ.Յ.Դաշնակցութիւնը դիմում է նման քայլերի:

Այդ ամենը ապացուցանելու համար առէլի անյաշող գործ, քան Ուուչոյեանի սպանութիւնը, դժուար էր գտնել: Ուուչոյեանի գործի հետապնդումը իշխանութեան պարտականութիւնն էր, քանի որ սպանութիւն էր կատարուել: Բայց Ուուչոյեանի պաշտպանել որպէս իշխանութեան հարցառող ներկայացուցչի՝ կը նշանակէր վարկարեկել տիրող վարչաձեւը:

Ո՞վ էր Ուուչոյեանը: Անբարոյական, կաշառակեր, խտնակիչ ու կեղեքող մի պաշտօնեայ: Մէկը, որի համար գոյութիւն չունէր ուէ բարոյական սկզբունք: Մէկը, որ յանդէմուտ էր ոտնահարել լեռնարձակ նահապետական մի ժողովրդի կենցաղն ու ընտանեկան սրբութիւնները: Մի պաշտօնեայ, որը յայտարարելով, թէ «Իշխանութիւնը ես եմ»՝ դիմում էր ամենաստոր շահատակութիւնների: Երբ Արազածի բնակչութիւնը հաւաքական բողբոջով դիմել էր Երևան հեռացնելու համար իրենց չըթանջ հասարակական այդ վիճածքին, կառավարութիւնն անտեսելով ամբողջ չըթանի խնդրանքը, առէլ էր բարձրացրել Ուուչոյեանի պաշ-

սօնը: Եւ ժողովրդի համբերութեան բաժակը լեցելուց յետոյ, կառավարական սլաշտօնեան գտնել էր սպանւած:

Այս էր, որ պարզեց դատարանում: Իսկ այն, որ իբր թէ Խուշոյանը սպանել է Հ. Յ. Գալանդեան Քիւրթի յորդորանքով ու Հայաստանի Կենտրոնական Կոմիտէի թելադրանքով, մնաց որպէս բոլշեկեան դարչնի սուտ: Մի բան, որ շատ զերեցիկ ու համոզեցուցիչ կերպով ապացուցեց Ստեփանոսեանի պաշտպան՝ Տիգրան Հախումեանը (Հակադաշնակցական, նախկին ժողովրդական ու այժմ բոլշեկի):

Դրա դիմաց, դատապարտեալները մեղադրական աթոռով հարաւորութիւն ունեցան լսելի դարձնելու ամբողջ Հայ ժողովրդին իրենց ձայնը: Նրանք յայտարարեցին, թէ իրենց նպատակն է դարկ տալ երկրի վերահիւնութեան, սլաշարել յանուն խօսքի ու մտքի ազատութեան, վատ պահել ազգային ուղին և առաջնորդել ժողովուրդը դէպի ազատ կարգեր ու անկախ հայրենիք:

Դատարանի, Կենտրոնականի, բանտի ու կայարանի մօտ եղած համակրանքի ցոյցերը եկան ասելու, որ ժողովուրդը համախոս է և ընդունում է այդ նշանաբանները:

Եւ այն, ինչ որ տեղի ունեցաւ դատավարութիւնից յետոյ, այս հինգ տարիների ընթացքում, հաստատում է միայն մէկ բան, որ՝ մի կողմից խորհրդային իշխանութիւնը շարունակում է խուշոյանեան քաղաքականութեան և միւս կողմից՝ Գալանդեան դադարեցրած նորանոր նաճուճներ են անում երկրի մէջ:

Թէ՛ հինգ տարի առաջ կատարւած մէկ սպանութիւն այդքան ազդու հանց Գալանդեան շուրջը, այս ինչով բացատրել այն զանազանային ըմբոստութիւններն ու կռիւները, որոնք տեղի ունեցան 1929-30 թեւերին, և շարունակում են մինչև այժմ: Դարաջրի դեպքի, Չանդեգորի, Շամչադինի, Կոտու, Կոտայքի, Արազածի ու Ախտաշի գիւղացիական ապստամբութիւնները, յամենայն դէպս, Գալանդեանները չէր, որ կազմակերպեց: Նոյն իսկ ամէն ստի ու պրօպագանդիստին

սովոր խորհրդային մամուլը չի համարձակուում այդպիսի մեղադրանք դնել: Ո՛ւմ վրա է ծանրանում երկուստե՛ք ընկած հարիւրաւոր զօճերի սպանութեան յանցանքը: Ահա և հետևանքը խուշոյանական քաղաքականութեան:

Եթէ 1926թ. դատավարութեան ժամանակ Գալանդեանները մեռաւ դադարեցրած, այս ինչպէս է լինում, որ այդ դատիք երկու տարի յետոյ Հայկոմկուսի Կենտրոնը մեղադրում է ազգային թե՛ ջման մէջ և փոխարինում Մոսկուայից ուղարկւած մարդկանցով: Ի՞նչ պատահեց, որ Գալանդեանները փոխարինուին Ալտո Յովհաննիսեանը աքսորում է Հայաստանից որպէս դաշնակցական մտայնութեանը վարակաճծների հոլանուորդ: Վերջապէս, ինչով բացատրել թէ՛ Երբրում և թէ՛ զաղութներում օրէջցօր սաստկացող սլաշարը Գալանդեաններին դէմ: Ձէ որ, եթէ «մեռելներին չեն դատում», այս նրանց դէմ չեն էլ պայքարում:

Հետաքրքրականն այն է, որ դատի ժամանակ Գալանդեանները քաղաքականութիւնը մերկացնող դաւաճան Բուդաչկօն էր: Չանցաւ երկու տարի և միևնոյն մեղադրական աթոռին նստեցեց նոյն այդ զլխաւոր վկան այս անգամ, սակայն, որպէս զիջածաբար ու դրամաշորթ: Միւս «կարեոր» վկան՝ աւաղակ Արամ Դաւթեանն անցաւ տարի զնրակահարեց բոլշեկներին կողմից, որպէս «բանդիտ»: Մէկ ուրիշ «խոստովանող» վկայ՝ Սիմոն Սարգսեանը աքսորումն է: Ահա թէ ինչպիսի տարրերի վրա յենւած Երզնկեաններն ու Ալտո Յովհաննիսեանները փորձում էին դադարեցրած հարւած տալ Գալանդեաններին: Ահա թէ ինչու դատարանում վարկաբեկողը եղաւ ոչ թէ Գալանդեանները, այլ խորհրդային վարչաձեւը:

Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի բոլշեկեան դիկտատուրայի յենարանները Խուշոյաններն ու Բուդաչկօններն են:

Իսկ Հ. Յ. Գալանդեանները հպարտ և ու յաղթական իր Սահակներով, Պետրոսներով ու Արտաշէսներով:

ԱՇՈՏ-ԱՐՄԻՐՈՒՆԻ

Դաճակցութեան դերը գաղութներու մէջ

Աւելի քան ջատարկ դար երկրի մէջ դժոյզակ այլ չէր անցնել իր երեսնէ ետք Հ. Յ. Գալանդեանները այսօր, իբրևոս ծանր հարկադրանքին տակ, իբր կազմակերպութիւն, իր խուշոյանութեամբ, նետուած է տարազրութեան մէջ, աշխարհի չորս անկիւնները սիրուած կէս միլիոնէ աւելի տարագրի, դարձական հայութեան հետ: Ունի՞ր ան դեր իսն ցիրուցան, անկազմակերպ զանազաններուն մէջ. ի՞նչ զլխաւոր առաքելութիւն է վիճակուած իրեն նոր պայմաններու, նոր կացութեան բերումով. իրմէ դուրս կա՞ն ուժեր, որոնց վրա հիմնադրել իր յոյսը արտասահմանեան հայութիւնը, — ահա՛ հարցեր, որոնք չեն կրնար չդրադեցնել հայ հանրային միտքը:

Գալանդեանները այսօր իբր կազմակերպութիւն, իր մեծ զանազանով տարազրուած է երկրէն: Արդէն աւելի քան 10 տարի է Հայրենիքի դուռները ամբողջ են փակուած: Ինչպէս բովանդակ զաղութահայրութեան, այնպէս և Գալանդեաններն առջև. ներթափանցումի կամ աքսորի գործունէութեան յենարաններ յօրինելու հարաւորութիւնները դժարացած և անհրաժեշտութիւնը սահմանափակուած է: Ի հարկէ, սակիւ չի նշանակեր, որ ան իբր Ֆիդիքական դոկտրինա և, մասնաւոր, իբր քաղաքական-ընկերային մտածում անհետացած, իսկաւ չքացած է երկրի մէջ. ո՛չ. ոչ միայն բանտերու, աքսորավայրերու մոռալ նկուղներուն մէջ, այլ և ամբողջ ժողովուրդի հոգիներու և ուղեղներու զաղտուկ

ծաղիւրուն տակ, ստորերկրեայ հազար ու մէջ անիմանալի խորշերու խորքը կայ ու կենդանի կապրի ան: Բայց դուրս աշխարհ գալու, արտայայտուելու, իբր ուղղութիւն և իբր հոսանք արժէքաւորուելու, իբր կամք և իբր շարժիչ ոյժ ժողովրդական զանգուածի մէջ գործօն խթան հանդիսանալու ուղիները փակած են կամ ինք գիտակցօրէն փակած է իբ առջև:

Եթէ Երկիր խօսքով պատկերացւած աշխարհագրական ըմբռնումը բաժնենք երկու մասի, պիտի տեսնենք որ ա) Հայաստանի տանկական մասին մէջ հայութիւն չկայ և թրքական յոռի, այլամերձ, ջարդարար բռնապետութիւնը, թէ և հանրապետական վարչակարգի պետակով, չի հանդուրժեր ունէ ոչ-թուրք տարրի գոյութեան, իսկ բ) Ռուսական հողամասին մէջ, որ ինկած է խորհրդային լուծի տակ, կիչխէ «պրոլետարական» անունով ծանօթ մշակիս աններող, բիրտ, դաւադիր սակաւապետութիւն մը, որու ճնշիչ կնուտը թոյլ չի տար, որ ունէ ազատ մտածում ծնի ուղիներու մէջ, ունէ ազատ գաղտնու բարախէ սրտերու մէջ և ունէ ազատ կեանք հասակաւորի արեւի տակ: Ի հարկէ, այստեղ կայ հայ ժողովուրդ՝ իբր յենակայ, գործելու, դէր կատարելու: Պ հարկէ, այստեղ հայութիւնը անվիճելիօրէն դէմ է իշխող կարգերուն իբ սարումներով, քաղաքական տնչերով, յոյսերով և մտածողութեամբ: Բայց Դաշնակցութիւնը հակախորհրդային շարժումներու զրդիչ չի հանդիսանար չուն: Ազատագրութեան պայքարը ոչ մէջ աստե՛ն Դաշնակցութեան համար չի կրնար աւելի դերակաշիւ մղում հանդիսանալ քան գոյութեան պայքարը:

Այս հանգամանքները պարզ ցոյց կուտան, որ, այսօր կազմակերպւած և իբր Ֆիզիքական ոյժ սարող Դաշնակցութեան գործի մէջ կարևոր մասը փոխադրուած է տայպիկի հայութեան մէջ: Մնալով հանդերձ, իբր դաւանանք և իբր յեղափոխական-քաղաքական ազգակ, ամենէն առաջ երկրով կայրող, երկրին համար ճնշող, երկրի պատասխանի և հայրենիքի վերստեղծման, կառուցման, կազմաւորման գործօն, հանդիսանալով հանդերձ հայ ժողովուրդի քաղաքացիական նկարագիրը ձևաւորող, իբր ազգ և իբր պետութիւն անոր հողային, ազգային-մշակութային և ընկերային-քաղաքական ձգտումներու խտացումը, կանգնելով հանդերձ արթուն պահակ հայ հայրենիքին՝ Դաշնակցութեան առջև այսուհանդերձ գաղութներու մէջ բացւած է, իբ կամեցողութեան անկախ և իրականութեան հրամայականներէն բխող, աշխատանքի լայն գալու մը:

Եւ տարագիր, երկրէն դուրս նետած, պաշտօններու հայութեան հոտառութեան, քնազգական ողջամտութեան պէտք է վերագրել այն փաստը, որ այսօր կայ կազմակերպւած Դաշնակցութիւն ամենուրեք ուր կայ ափ մը տարաբարձ հայութիւն: Չուր չէ, որ երկրագունդի ամենահեռաւոր անկիւններուն մէջ իսկ զբխուտ տակ հազիւ բարձի տեղ գտնող քանի մը հայեր կը մտածեն քաղաքականօրէն իրարու մօտ դալ, անուցանել իտէայ, պատրաստ մնալ, կազմակերպել ու խտանալ իրենց պատահութիւնը վայելիլով կուսակցութեան մէջ:

Այս հանգամանքները, սակայն, միւս կողմէն չափով մը կը փոխեն Դաշնակցութեան զերն ու կոչումը արտասահմանի մէջ եթէ ոչ Հիմնական գծերու, պէթ

գործունէութեան անմիջական մարդերում մէջ: Պահելով հանդերձ մէջ կողմէն հայրենիքի վերաբերմամբ իր Հիմնական ընկերային աշխարհայեացքը և քաղաքական դաւանանքը, միւս կողմէն՝ ան կը կոչուի պաշտօններու մէջ խաղալու դեր մը, որ նոր է, որ երէկ, 10 տարի առաջ, չունէր, —Արտասահմանի հայութիւնը՝ իբր տեղաւորւած գաղութներ՝ առաջնորդելու, ներքնապէս կազմակերպելու, հայրենիքին համար իբր պետանի նիւթ պահպանելու, զարգացնելու, և որ պիտաւորն է՝ անոնցմէ հայրենիքին համար դիտակից, նկարագրով և սպրումներով կազմաւորւած քաղաքացիներ կերտելու դերը:

Տասը տարի առաջ, կամ աւելի ճիշտ, նախքան մեծ պատերազմը՝ արտասահմանի հայութիւնը շտեղաւորւած կամ կէս-տեղաւորւած զանգուած էր, ցերեցան, հիւր զինք ընդունող երկիրներու մէջ, սեւակ մը ժամանակաւոր գաղթականութիւն կամ պանդխտութիւն, որ, կորսւելու, ձուլուելու, աղոյլին անհետանալու անմիջական վտանգն զիմ, պիտի վերադառնար երկիր առաջին իսկ նպատակաւոր վայրկեանին: Այդ ցանկւածներու բաղկացուցիչ անդամներու կապը բնաշխարհին հետ խզւած չէին այն չափով ու խորութեամբ, ինչպէս այժմ: Ծնող մասով պանդխտներ, ո՞մանք առևտրականներ, ո՞մանք ալ տարալիւրներ կամ հայածականներ՝ իւրաքանչիւր ոչ ունէր երկրի մէջ ընտանեկան պարագաներ, ջոնախ, ճոնախ, ճոնախ օտարականութիւն և սո՞րբարար ինք կը վերադառնար տուն: Նախքան պատերազմը՝ արտասահմանի հայութիւնը առաւելապէս պանդխտութիւն էր և ոչ թէ ձևաւորւած, նստած դաղութ:

Այսօր պատկերը հիմնովին փոխւած է, մանաւանդ, 1920 էն առջին: Այլևս պանդխտութիւն չէ որ ունիւք, այլ նստած գաղութներ, եթեմալայ միջնալայրի ազգացութիւններուն ու ձևապիպուելու, այլասերելու վտանգին, զրկւած վերադարձի անմիջական հեռանկարէն: Ծանկահայաստանէն գաղթածներու համար, քանի կարգերը չեն փոխւած, ոչ մէջ յոյս վերադառնալու զէպի իրենց նախկին բնակավայրերը, իսկ Պորհրդային Հայաստան մտնելու ամէն դուռ ու պատուհան՝ կղզւած: Ներգաղթի անունով մամուլի և հրատարակի մէջ աստե՛ն աստե՛ն բարձրացած ազմուկ շատ բան չի փոխեր այս ընդհանուր պատկերին: Երեսանի մէջ նստած մարդիկ չեն ուղեր, և իրենց աշխարհայեացքով չեն ալ կրնար համատարած թափով արտասահմանան հայութիւնը շարժել զէպի երկիր: Եւ միլիոն ժողովուրդ հայրենիք վերադարձնելու համար ուրիշ վարչակարգ, ուրիշ պայմաններ անհրաժեշտ են:

Հայ բոլշևիկներու համար ներգաղթը ուրիշ բովանդակութիւն և իմաստ ունի. աննք՝ մերժելով և մերժուելով հանդիսանալ «ամենայն հայաց կառավարութիւն», իրենց իսկ ընկերային-քաղաքական դաւանանքով դէմ են արգահանաւորման, հայկական սեփական հայրենիք կառուցանելու դադալարին, հայ տարրը իրենց իշխանութեան տակ ինկած վայրերու մէջ ուժեղացնելու, սիրական դարձնելու, իրական ինքնիշխանութեան ստորդէլիներով օժտելու ձգտումին: Ներգաղթը անոնց համար պարզապէս պատահակ է, իսպծ է նետուել դրսէ հայութեան առջև և ստով խանդարե-

լու անոր կազմակերպման թափը, պահելու դայն ինքն իր մէջ պատահում, ցիրուցան, ւշերտաւորւած»:

Ասիկ գտա՞մ Դան և ուրիշ արգելիչ պատճառներ, որոնք չեն կրնար արդիւնաւորել ներգաղթը. առաջին՝ խորհրդային վարչակարգի տակ իշխող բեթիմը երբեք դուրսիչ չէ արտասահմանէն հոծ գանդաւածներ իրեն քաշելու. երկրորդ՝ խորհրդային Հայաստանի սահմանային անձկութիւնը կը խախտէ իրական ներգաղթի կարելիութիւնը. երրորդ՝ աւելի քան տասը տարիներու փաստը ցոյց կուտայ, որ այժմեան Հայաստանէն արտագաղթի հոսանքը աւելի ծաւալուել է քան ներգաղթը. և չորրորդ՝ արտասահմանի պարտ ժողովրդական կարգերու տակ ապրող, տեղաւորող, ճիւղաւորող և ընտանեկան ու այլ հոգեբով ծանրաբեռնուող հայութեան մեծ մասը հոգեբանօրէն տրամադրիչ է տեղէն շարժելու, թափառակականի ցուպը նորէն ձեռք առնելու և ինքզինքը ենթարկելու խորհրդային բեթիմի բռնատիրութեան:

Այս տւեալներէն կը հետեւի, որ հայ գաղութները առաջիմ կը մնան, կամրանան, և բնականաբար կառաջադրեն պահանջներ, իրենց նոր կացութենէն բխած նոր կարիքներ: Այս նոր կարիքներուն հարգնիթաց Դանակցութեան դերն ալ կընդարձակի ու նոր ճիւղեր կարծակէ:

Որդէսդի կարելի ըլլայ պարզել, թէ ի՞նչ է այս նոր դերի բնոյթը, ցոյց տանք թէ ի՞նչ էր արտասահմանի հայութեան սղերը Նախքան 1920ը, այժմեան կացութենէն առաջ:

Առաջ, գաղութներու հայութիւնը և անոնց մէջ գործող կուսակցութիւնները մէկ հիմնական առաքելութեան, մէկ գլխաւոր հոգ ունէին, — օժանդակել Երկրի ժողովուրդին: Միւս բոլոր մտահոգութիւնները կը դառնային այս կեդրոնական դերին շուրջ: Օգնել Երկրին, առաւել կամ նազ չարիով, ամէն կազմակերպութիւն ըստ իր կարողութեան, զբաժ զրկել, մարդով, զէնքով, բարակնութեամբ սատարել բնաշխարհի շարժումներուն: Գաղութը ինքը իրեն համար արանմէն հոգեր չունէր, բացի տեղ տեղ կրօնական կարիքներու համար պահուող եկեղեցիներէ. այլատերութի, ձուլումի վտանդը ամէն հայու գլուս ափ չէր. առած տիրական թափով, ինչպէս այժմ. հայ գիտելիներ օտար նախակարգները չէին խոնարհ, հայ բնութեան օճայններ սփռուած չէին ամէն կողմ, ուր հնչէին հայերէնի տեղ ֆրանսերէնը կամ անգլիերէնը. խառնակեցութիւնը, օտար ամուսնութիւնները սովորական երեւոթներու կարգ անցած չէին: Եւ որ զլիւսաբեր է՝ հայ մարդը կարուած չէր իր բնաշխարհէն, կը մտածէր անոր վրայ, կը շնչէր անով, իր հոգեկան սպրտմաներուն միակ արանցքը դայն կը համարէր: Եւ եթէ Թիֆլիսի կամ Պոլսոյ նման կեդրոններու մէջ կային հայկական հոծ գաղութներ, այսուհանդերձ անոնք կապէին հայկական կենդրով, մշակոյթով, բարեգրով. և ոչ միայն կորուած չէին Երկրէն, այլ ընդհակառակը անմիջական մաս ու շարունակութիւնն էին Երկրի հայութեան, նոյն իսկ ստանձնելով անոր բարձրագոյն հոգերու ղեկավարութիւնը:

Այսօր, գաղութներու հայութիւնը և անոր մէջ ապրող կուսակցութիւններն ու զանազան կազմակերպութիւնները ոչ միայն օժանդակողի դերին մէջ չեն —

բնական աղէտի մը առթիւ երբեմնակի քանի մը հաղար փութացնելը դեռ շըջափելի աշակցութիւն չի նշանակեր, թէ և Երկրի ու գաղութներու միջև ողբի ու բարոյական կապի տեսակով յատկանշական — այլ իրենք ծանրաբեռնուած են տեղական նոր պահանջներով, ընդհանրական կազմակերպութեան մը մէջ խտանալու, ներամփոփելու, իբր հայ քաղաքացի և իբր հայութիւն ձեւաւորելու, կրթական-մշակութային ինքիբնակր բոտ արժանտոյն կազմաւորելու կարիքներով:

Այսպիսի դեր է վիճակուած Դանակցութեան: այսպիսի ղեկավարութեան խաշն է զբւած անոր ուսերուն՝ անկախ իր ցանկութենէն: Ի հարկէ, ան երբեք ալ թերացած, կլուած ու պակաս գտնուած չէ գաղութահայութեան մէջ իր կատարած դերով: Ան դիտակցած է ու կը շարունակէ գիտակցել իր առաքելութեան: Իր կազմակերպական ցանցով, իր մամուլով, իր հրատարակային խօսքով, ժողովրդական խաւերու մէջ իր գրաւած վստահութեամբ, իր գաղափարներու և ողբի ու ժով առաջնակարգ ազդակի, առաջնորդող ոյժ է հանդիսացած և իբրև այդպիսին կը մնայ: Բայց իր առաքելութեան բնոյթը այսօր փոխուած է, որովհետև փոխուած է Երկրին աշակցութիւն ցոյց տալու հիմնական ձևը: Քաղաքական դաստիարակչութեան իր գործն ալ որոշ չափով դիւրացած է. յեղափոխական ողբ, ազգային արժէքներու ճանաչողութիւն, հայութեան կազմաւորման աշխատանքները մտած են որը հուել մէջ: Այսօր այլևս հրատարակային բեմէն յեղափոխիչ խօսք մը կարենալ արտասանելու համար աթոռ նետելու, գլուխ պատռելու մտավիճակը վերացած է:

Կենսքը զգալի չափերով բիւրեղացուցած, յստակացուցած է գաղութներու մէջ մեր կուսակցութեան նոր առաքելութիւնը: Ղեկավարել գաղութներու ժողովուրդը իրեն կազմակերպուած, ներքին հոգ ու պահանջներով ապրող համայնք. չթողուլ որ ան կորուի իբր ֆիզիքական ու հոգեկան հարստութեան աղբիւր Երկրին համար. երկարածակ ձուլում վտանդը անմիջականորէն իրենց վրա կրող հաւաքականութիւններու հոգեվարքը, եթէ ոչ խափանել: Թոյլ չտալ որ ապագային, հակադրային ազդեցութիւններ թաթարեն հայ դիմագծութիւնը արտասահմանի մեր ժողովրդին: Որոնք միջոցներ օտար երկինքներու տակ սփռուած գանգաւանները իբր հայ պահպանելու, հայութեան համար մեծցնելու, Հայաստանով ապրեցնելու և թոյլ չտալ որ անոնք մակադին աշխարհի շարս անկիւններուն փուլած փարսիներու մէջ, որպէս մտրդկային նախիր, և գործարկել ալք միջոցները անվարան, նոյնիսկ գինւորական կարգապահութեամբ:

Ի՞նչու է Դանակցութեան վիճակուած այս ծանր առաքելութիւնը. չկա՞ն գաղութահայ կենսքի մէջ ուրիշ օրկաններ, որ տէր կանգնին այս դերին: Ունի՞ արտասահմանի հայութիւնը Դանակցութեանն զուրս իրեն տէր, առաջնորդ:

Եթէ այսօր ուրեք բովանդակ հայութեան մտքի և ապրումի շերտաւորումը բնորոշել, կը գտնենք որ կայ կազմուած հիմնական երկու ճակատ. 1) Աղգային-գաւանակական և 2) Ապագային-բուշխեման: Հայ կենսքի միւս բոլոր հոսանքներ, կազմակերպութիւնները, միութիւններն ու հաստատութիւնները աւելի կամ պա-

կաս չափերով պտտյա կուգան այս ճակատներուն շուրջ : Բոլշևիկեան-ապագային ճակատը չի կրնար, և հայոց շահերու տեսակետէն բարձարի չէ, որ ստանձնէ մեր առաջարկած առաքելութիւնը գաղութներու մէջ : Եւ ասիկա շարք մը պատճառներով : Առաջին՝ հայ բուլշևիկները արտասահմանի մէջ կը ներկայացնեն արհամարհելի քանակ : ոչ կուան, ոչ միջովար, ոչ ալ անհրաժեշտ ուժն ու լրջութիւնը ունին այսպիսի պատասխանատու դերքի վրա անցնելու : Գաղութներու մէջ անոնց բրածը խոտնակազկան պղտոր փորձերէ անդին անցած չի ու շանցիր : Երկրորդ՝ իրենք ալ չեն ձգտիր այդպիսի ղեկավարութիւն կը դերին, որովհետեւ դաւանանքով, շահերով, գաղափարաբոսութեամբ՝ հակառակ են գաղութներու ցանդածներու իրր հայութիւն կողմաւորման : Երրորդ՝ անոնք մտածողութեամբ հայկական կան զիծ չունին, այլ պարզ կամուխասար հետեողներ են ուսական մտածողութեան զիծին : Իրենց աշխարհայեացքը չի բխիր մեր իրականութեան տեսանկէն, այլ կը թելադրուի, կը պատահուի զրոյն : Հայ գաղութներու հանդէպ անոնց մտակերտ ունէ քաղաքականութիւնը պիտի ձևաւորի ո՛չ թէ՛ հայութեան և Հայաստանի, այլ ընդհանուր իտորձարկելի Միութեան չափերու վրա :

Հայ Ռամկավար կուսակցութիւնը նոյնպէս չի կրնար և ի վիճակի չէ տիր կանգնելու դրսի հայութեան : Նախ՝ սա եւ իր կազմակերպութիւնն աչքառու ոյժ չէ և չունի հեղինակութիւն Ժողովրդական զանաւորներ իր ետևէն քաշելու : Երկրորդ՝ երբեք արժան ձգելով Երկրի մէջ և միշտ սնանելով գաղութային միջոցաւորման տակ, իրր մտայնութիւն և իրր գաղափար հետու, իտրձէ մնացած հայութեան : ոյրին խաթարած է, մտածողութիւնը շիծով ու անկերպարան : Երրորդ՝ անոնք, մտա 10 տարիէ ի վեր, մամուլով ու խօսքով կը թաւալին բոլշևիկեան-ապագային ճակատին տակ, շունեն սեփական անկախ հայեացք, քաղաքական այժմեան գոյալիճակէն գոհ են, որով ինքիդեռին կղզիացուցած են թէ՛ Երկրի հայութեան, ուր ոչ մէկ շիւղ չունին կառչելու և թէ՛ արտասահմանի հայութեան ստա ար դանպաճներէն, որոնց աչքին դարձած են իրաւամբ բուլշևիկներու դուրսի մուսնետիկները : Չորրորդ՝ Լոգանի Դաշնագրին կնքումէն ադին՝ անոնք կրամադրայէն հրաժարելով հայկական հարցէն և պահանջներէն, վերածուած են այժմ ապաքաղաքական միութեան մը, դուրի խտացած, ազգային-քաղաքական աշխարհայեացք սնուցանող շարքեր : Գարգապէս զորավարներ են սուանց զօրքի և կատարելապէս գոհ են իրերու կացութիւնէն :

Ի հարկէ, գժբախտութիւն է, որ մեր մէջ հայ բուրժուական կամքի և մտքի արտայայտիչը հանդիսանալու կոչուած այս կուսակցութիւնը երբեք չէ եղած և չէ իրր այդպիսին : Ռամկավարութեան համար, իրր մտայնութիւն, հոյ կայ հայութեան մէջ, բայց

այս մտայնութիւնը իրր դործ չէ արտայայտած կուսակցութեամբ մը, որ գար և այդ պակասը զոգէր ու իր դերը կատարէր : Ռամկավարները, չկարենալով թարգմանը ըլլալ հայութեան որոչ մէկ շերտին, գարմանալի չէ որ այսօր չեն վարանիր սուանց այլ և այլի ծաւրիլ բուլշևիկեան ճակատի տիղմին մէջ :

Հնչակեանութիւնը դարձած է կուսակցութիւն ըլլալէ, հոս հոն պատահական խմբարտումներ, անհարհնչակեաններ, որոնցմէ մէկ մասը յարած է հայութեան ապագային-բուլշևիկեան ճակատին և միւս մասը կրնայ քալել ազգային-դաշնակցական ճակատին հետ : Ասոնք չէ որ պիտի կոչէին ուղղութիւն տալու և տէր կանգնելու գաղութներու կեանքին :

Արտասահմանի հայութեան մէջ հայ եկեղեցական կազմակերպութիւնը թերեւս կոչուր ստանձնելու առաջարկած դերը, եթէ երկու անյաղթահարելի խոչընդոտներ չարգելիլ են այլ : Առաջին՝ հայութիւնը, կէս դարէ ի վեր մտաւորապէս և հոգեպէս վերածնած, կերպարանափոխուած ըլլալով ազատագրական շարժումներու տիրական քուրային մէջ, և ապրելով այսօր արտասահմանեան իրմէ աւելի քաղաքակիրթ միջավայրերու տակ, նախկին հեղինակութիւնը, ստաջայ գարաւոր հմայքն ու իշխանութիւնը չընծայեր հայ եկեղեցական կազմակերպութեան : Երկրորդ՝ հայ կղերքինը, սակաւաթիւ բացառութիւններէն դուրս, չի գիտակցիր այդպիսի առաքելութիւն, կարողական ուժն ալ չունի ստանձնելու գաղութահայութեան առաջնորդութիւնը և պարգապէս կը զոհանայ հայ քրիստոնեայ հօտի հոգեւոր պէտքերը — կնուք, թաղում, պոակ, եկեղեցական արարողութիւն — մատակարարելով, սուանց անոնց ներքին բովանդակութիւն, իմաստ հազցնելու և միմիայն ծառայեցնելով զայն իրր եկամտու ծորակ :

Ալ չենք խօսեր այն մասին, որ շնորհիւ մէկէ աւելի յարանախոթիւններու գոյութեան հայութիւնը այլևս դուրս եկած է կրօնական սահմաններէն :

Ասոնցմէ դուրս մնացող բոլոր միւս կազմակերպութիւնները, միութիւնները, ուսումնասիրաց, հայրենակցական, վերաշինաց, բարեգործական, Կարմիր Պաշկէն — միւս բոլոր հաստատութիւնները, իրենց գործունէութեան մասնակի մարդերուն մէջ կը կատարեն որոչ դերեր, բայց չեն կրնար կազմաւորել գաղութներու հայութիւնը մեր առաջադրած առաքելութեան համար, չեն կրնար ղեկավարութեան դերք վրաւել : Անոնք միայն կրնան, իւրաքանչիւր իր մարդին մէջ, աջակցել, ստաարել ընդհանրական գործին, որուն ստաջնորդութիւնը, ստաարակալան կացութեան մղումով, կը վիճակուի Հ. Յ. Դաշնակցութեան, որ կանգնած է միտակը ազգային ճակատին գլուխ՝ իր լայն շրջապատով, իր կազմակերպական կուտ ցանցով և ղեկավարութեան փաստուած, անտարակուսելի ցէնցով :

ԱՍՏՈՒՐ

ԲԱՆՈՒԹԻ ՀՈՍՈՒՆՈՒԹԻՒՆԸ

Որհնորդային Միութեան սահմաններում, և՛ Հայաստանում, ամենէն Հրատապ Հարցը այսօր «բանութի հոսունութիւնն» է: Ամէն կողմից ճիշդ ու աղաղակ է լուում. «բանութը հոսում է», «բանւոր հասցրէք»:

Ի՞նչ է նշանակում այս:

«Բանութը հոսում է», այսինքն՝ բանւորները փախչում են բոլշեակեան զործարաններից ու հանքերից, և «հնգամեայ պլանը» ճաքճեղում է բոլոր մասերով: Որհնորդային արդիւնաբերութիւնը աշխատող ձեռքերի սուր ճղնածամ է ապրում. անտեսական կեանքի բոլոր սպաւորեցիներում այսօր բանւորական ուժի պակասութիւն կայ:

Մասնաւորապէս ծանր է դրութիւնը Հայաստանում: Կառավարական պաշտօնավարները ամէն օր ահագանգ է հնչեցնում՝ «բանութ հասցրէք»: Իշխանութիւնները դատան միջոցներ են ձեռք անում «բանութի հոսունութիւնը» կանգնեցնելու համար — անօդուս: Բանւոր փախչում է արդիւնաբերական ձեռնարկութիւններից, իսկ գիւղացին չի ուզում, առաւելայ պէս, բանւոր դառնալ: Մի քանի քաղաքներ «Որհնորդ. Հայաստան» պաշտօնավարների վերջին ամուսայ համարներից բաւական են պատկերացնելու համար կացութեան բովանդակ լրջութիւնը:

Ալլահվերդիի պղնձահանքերում «Չրդ եռամսեակում 1700 բանւորի կարիք ունէինք, գանդատում է հանքերի կառավարիչ Քալլաթեանը: Սակայն, գիւղական աշխատանքներն սկսւելուն պէս, սերոնային բանւորութեան մի մասի հեռանալուց յետոյ, պահանջն աւելացաւ: Այսօր 3320 բանւորի պահանջ կայ»: Այժմ Շամլուղում մնում է 270 բանւոր, մինչդեռ պլանով պահանջւում է 519 բանւոր... Վերջերս Շամլուղից մարդիկ մորթիկացիայի ենթարկեցին և ուղարկեցին հարևան գիւղերը՝ Ծնող, Արճիս և Խոճկան բանութ հաւաքելու, սակայն, նրանք դատարկաձեռն վերդարձան»:

Հանքերին օգնելու համար ուղարկւում են 600 կոմերիտականներ, բայց «600 կոմերիտականների մէջ ևս նկատուց որոշ հոսունութիւն»: Բացի այդ, «մորթիկացիայի ենթարկեցին Երևանի համալսարանից ու բանֆակից, ինչպէս և Լեինականի բանֆակից մօտ 800 ուսանողներ, որոնք յունիսից աշխատում են Ալլահվերդու հանքերում ու զործարաններում: Կոմերիտսի դրծով, նոյնպէս մորթիկացիայի կարգով, յունիսիս աշխատանքի են հրաւիրւել 300 կոլյոնտեսական և անհատ անտեսներ» («Ու. Հ.», 8 օգ.):

Արշան սկիզբը, սակայն, զօրակոչի ենթարկւած կոմերիտականները և ուսանողները հեռացել են, իսկ «կոլյոնտեսականների ու «անհատ անտեսների» մի մասը փախել է, որով «բանութի» բացը մնում է չփակւած և արտադրութեան «թերակատարումներն» ու «ճեղքաձեցները» շարունակւում են աճել. «Յրդ կվարտայի համար նախատեսւած ծրագրով Ալլահվերդին պէտք է

տայ 22,000 տոն պղնձաքար, դումարած այդ թիւն անցեալ կվարտայներից մնացած 9000 տոն պարտքը»: Պարզ է, որ ծրագիրը չպիտի զործարդի:

Ալլախի կացութեան հետեւանքով Ալլահվերդու հանքերի հասոյթի պլանը յուլիս 28ին կատարել է 101 տոկոսով, օգոստոս 10ին՝ 75% և մի քանի օր յետոյ՝ 43-45%: Շամլուղի հանքերի հասոյթի պլանը յուլիս 28ին կատարել է 103 տոկոսով, օգոստոս 9ին՝ 76.1 տոկոսով, իսկ մի քանի օր յետոյ իջնում է մինչև 38—45 %: Պղնձի ձուլման պլանը յուլիս 29ին կատարել է 93.7 տոկոսով, օգոստոս 5ին՝ 28,61%, իսկ մի քանի օրից յետոյ իջնում է մինչև 12%: Եւ այսպէս, ամբողջ կամբինատի պլանների կատարումը տատանւում է 40—100 տոկոսի միջև: Անժխտելի է, որ բանւորական ուժի պակասն ու նրա հոսունութիւնն ազդել է և ազդում է պլանի կատարման վրա» («Ու. Հ.» 22 օգ.):

«Բանութի հոսունութեան» և «պլանների թերակատարման» տեսակէտից դրութիւնը աւելի «խայտառակ» է Ղափանի պղնձահանքերում, ուր «ճեղքաձեցները» աւելի լայն են, «բանւորական կարգերի» պակասը՝ աւելի սուր, ուր «հանքերի հանոյթի» և «պղնձի ձուլման» տոկոսները աւելի «ահագանդող» են և «բուքսիթի» պէտքն են չեղում: Հայկոմկոսի քարտուղարութիւնը իր 29 օգոստ. որոշումով նշում է, որ «Ալլահվերդու և Զանգեզուրի պղնձարդիւնաբերութեան ձեռնարկութիւններում բանութի հոսունութեան հսկայական տոկոսը հանդիսանում է աշխատանքի ցածր արտադրողականութեան և պղնձարդիւնաբերութեան արգֆինպլանի թերակատարման հիմնական պատճառներից մէկը»: Իսկ «Որհնորդ. Հայաստան»ը ահագանգ է հնչեցնում այդ առթիւ, թէ՛ «Մար պղնձարդիւնաբերութեան սապարիզում բանութի հոսունութիւնը հասնում է հրակայական շափի՝ իսկական չարիք դառնալով արտադրութեան համար»: Եւ պահանջւում է «վերացնել աշխատավարձի հաւասարեցման այն սիւստեմը, որ տիրում է թէ՛ արդիւնաբերութեան առանձին ճիւղերում և թէ՛ պղնձարդիւնաբերութեան մէջ», ինչպէս և «բանութի հաւաքազրում ու ամբացում» («Ու. Հ.» 2 սեպ.), այսինքն՝ բունի ուժերով ստիպել բանւորներին աշխատել այս կամ այն զործարանում կամ հանքում:

«Որհնորդ. Հայաստան»ը, սեպտեմբեր 8ին, տալիս է հետեւեալ գունազոյ թերքը. «Ղափանի հանքերում» հոսունութիւնը կէս տարւայ ընթացքում հասնում է բանութի քանակի 70%ին, իսկ որ կարևորն է՝ կոմերիտսի աւելի շատ բանւոր է կորցրել, քան ընդունել: Մարտ ամսին ընդունել է 215 բանւոր, իսկ հետացել 384. ամբողջ առաջին եռամսեակում ընդգրկել է 572 բանւոր, հետացել է՝ 558, իսկ երկրորդ եռամսեակում ընդունել է 683 և հետացել է 725. ընդամենը 6 ամուսայ ընթացքում աշխատանքի է ընդունւել 1,255 բանւոր և նոյն ժամանակում հետացել՝ 1,283 բանւոր: Հոսունութեան այսպիսի ուղիղորդային թերք, երեկ, չունի և ոչ

մի ձեռնարկութիւն: Հոսուճութիւնը... դիտարարպէս արդիւնք է աշխատավարձի «ձախ» հաւասարեցման և բանւորների միխիմով պահանջները շրաւարարելուն (կօշիկ, արուհադուստ, սնունդ, բնակարան)... Զուլարանի 24 թւի 150 բանւորներից այժմ մնացել են միւսին 8 հոգի»:

Տարբեր չէ վիճակը և երկրի տնտեսական կենսոքի միւս բնագաւտներում. «Լենինականի հիււսածեղէնի» կոմբինատի բոլոր գործարաններում պլանները թերակատարելու պատճառներից մէկն էլ բաճուժի հոսումութիւնն է:

Հոսունութեան միջին տոկոսն ըստ տարիների տալիս է հետեւեալ պատկերը. (տոկոսները միջին ամսական են՝ բանւորների ընդհանուր թւի համեմատութեամբ).

Գործարաններ

	1929—30թ.	1930թ. յատուկ եռամսեակ	1931թ. առաջին կիսամսեակ
Մանարան	2.17	2.17	2, 0
Գործւածքային	2.24	2.23	4.58
Տրիկոտաժ	1.19	1, 2	1.65
Ելմիկցեի	1.96	1.79	1.98
Արտ.-ու.-բաժին	2.89	2.83	4.43

Ինչպէս տեսնում ենք, 31 թւի առաջին կիսամեակում կոմբինատի հիմնական վճռող դեր կատարող գործարաններում աճում է հոսունութիւնը: Գործւածքային և արտադրական բաժիններն այն բաժիններն են, որոնք աշխատանքը աւելի պատասխանատու է և հէնց այդտեղ է, որ հոսունութեան տոկոսը բարձր է: Եւ ոչ միայն բարձր է, այլ և ամէն ամիս և տարւէ տարի հոսունութիւնը մեծանում է» (ՁՊ. 2. 20 օգ.):

Անի-Պէմդալում էլ «պլանների թերակատարման ամենազրկաւոր պատճառն այն է, որ ներկայումս 50.0 բանւորի փոխարէն աշխատում է 90 բանւոր: Երջանի գիւղկազմակերպութիւնները հարկ եղած ուշադրութիւնը չեն դարձնում պէմդալի արտադրութիւնը բանւորական ուժով պահանջելու գործին»: Որով «Անի-Պէմդալն յուլիս ամսւայ պլանը խախտատակ կերպով թերակատարեց-պլանով նախատեսած 550 տոն աղացած պէմդալի փոխարէն արտադրեց 73 տոն, կամ պլանի 15.5 տոկոսը. 40.000 խորանարդ մետր շինարարական պէմդալի փոխարէն՝ 5000 խ. մետր, կամ պլանի 12.5%... Յուլիս ամսւայ ընդհանուր արտադրանքը նախատեսւած 155.500 բուլբու փոխարէն կազմում է 39.630 բ., կամ պլանի 25.5%» (ՁՊ. 2. 27 օգ.):

Երկաթուղու վրա բանւորների հոսունութիւնը համարեա թէ վերացած էր, սակայն, վերջերս, թոյլ աշխատանքի շնորհիւ, ուժեղացել է, դարձել փախտականութիւն, այն էլ ոչ թէ ցեխից ցեխ, այլ նոյն իսկ երկաթուղուց դուրս» (ՁՊ. 2. սեպտ. 5):

Ցեմէնտը պահանջուող 1100 բանւորի փոխարէն շինարարութեան մէջ ներկայումս աշխատում են միայն 230(240) հոգի: Յուլիս ամսին 600ի փոխարէն աշխատել

են 400 հոգի... Հոսունութիւնը մեծ չափեր է ընդունել... Պահանջում են վառարան պատրաստողներ վեց հոգի, ձեւիող (պլադիչ)՝ 20, հողագործ՝ 70 և ներկարար 2 հոգի: Չոր շրջանի համար շտապ պահանջում է 100 հոգի գուրգար, հիւսն և բետոնադրոներ: Յրդ շրջանի համար՝ 200 քարտաշ ու որմնադիր» (ՁՊ. 2. 15 օգ.):

Ցեմէնի այս «խախտակ» վիճակի առթիւ աշխտողները ստիպւած եղաւ, յուլիս 28ին, պաշտօնական յատուկ որոշում կայացնել «պետական, կօպիւրատիւ և տնտեսական շինարարական ու արդիւնաբերական ձեռնարկութիւններում ու հիմնարկութիւններում բանուժի հոսունութեան դէմ պայքարն ուժեղացնելու մասին»: Այդ որոշումով աշխտողները առաջարկում է «աշխատանքի տեղական բոլոր մարմիններին (աշխատուցիւններին և կադրերի վարչութիւններին) ընդունել յատուկ հաշտման արդիւնաբերական ձեռնարկութիւնների ու հիմնարկութիւնների (մասնաւորապէս Ցեմէնի) նախկին այն բանւորներին ու ծառայողներին, որոնք ինքնակամ թողել են աշխատանքը հիմնարկ-ձեռնարկութիւններում, նախազուշացնելով իրենց հեռանալու մասին հիմնարկութեան կամ ձեռնարկութեան ազմինիստրացիային և չսպասելով, որ իրենց փոխարինեն ուրիշ բանւորներով»: «Արդեւում է ձեռնարկութիւններին ու հիմնարկութիւններին, առանց աշխատանքի մարմինների գիտութեան աշխատանքի ընդունել այն անձանց, որոնք աշխատանքը նախկին տեղում թողել ինքնակամ կերպով»: Աւելին դեռ. աշխատանքի մարմիններն այդպիսիներին, «էրբեք արտադրութեան չարամիտ քայքայողներին, ընդունում են յատուկ հաշտման և վեց ամսւայ ընթացքում չեն ուղարկում աշխատանքի արդիւնաբերութիւն և տրանսպորտ» (ՁՊ. հրդրային Հայաստան» 9 օգ.):

Այս որոշումով բանւորն ու ծառայողը զրկում են իրենց ազատ կամքով աշխատանքը թողնելու իրաւունքից. նրանք ամբողջապէս դրւում են ձեռնարկութիւնների ու հիմնարկութիւնների վարիչների տրամադրութեան տակ, «կապում են» ձեռնարկութեան հետ: Վարիչը կամենայ՝ կազատէ, թէ չէ բանւորն ու ծառայողը պարտաւոր են աշխատել առանց արտադրութեան և հեռանալու հնարաւորութեան: Կտարեալ ճորտատիրական կարգեր. բանւորն ու ծառայողը խորհրդային անտեսութեան մէջ վերածւած են ճորտերի:

Սակայն, այս քայլն էլ, ըստ երևոյթի, չի դարմանել հիւսնողութիւնը. երեք շաբաթ անցած, օգոստ. 19ին, աշխտողները մի նոր «որոշում» է արձակում, այս անգամ աւելի գաժան պայմաններով, յատկապէս, «Ղափանի և Այլահիւրդու պլանագործարարութեան մէջ, Երկաթագիւղի արտադրարտում և Լենտեքալի արդիւնաբերութեան մէջ նկատուող բանւորական ուժի հոսունութեան դէմ պայքարն ուժեղացնելու մասին»:

Այդ որոշումը մի խիտ հետաքրքրական փաստ է արձանագրում. խորհրդային արդիւնաբերական ձեռնարկների վարիչները իրար ձեռքից բանւորներ ու պաշտօնականներ են խլում. «նյալած բանուժի հոսունութեան դէմ պայքարելու և բանուժի վարձման ու արձակման գործի կանոնադրման մասին դուրսութիւնն ունեցող մի շարք որոշումներին և կարգադրութիւններին, այնուա-

մեկուսիքն հիմնարկներն ու ձեռնարկութիւնները գլխաւորող պայտօնական անձերից շատերը, անտես առնելով արդիւնարեութեան հիմնական ճիւղերի շահերը, շարունակում են ապօրինաբար գրաւել, իրենց մօտ տանել Ղափանի և Ալլաւսիկերու պղծարարիւնաբերութեան, երկաթիցի տրանսպորտի և Լեւոնեքստիլի որակեալ բանուրներին, ստեղծելով ժողովրդական անտեսութեան վերջնական գլխաւոր ճիւղերում բանուրական ուժի հոսունութիւնը:

Նման «միանգամայն անհանդուրժելի դրութիւնը վերացնելու համար» աշխտողութեամբ որոշում է «բերուտի արդեւել պետական-կոօպերատիւ բոլոր ձեռնարկութիւններին ու հիմնարկութիւններին, նոյնպէս և հասարակական բոլոր կազմակերպութիւններին, առանց աշխատիմներին թոյլտուութեան և յատուկ գործուղման, վարձել Ղափանի և Ալլաւսիկերու պղծարարիւնաբերութեան կոմբինատի, երկաթիցի տրանսպորտի և Լեւոնեքստիլի կոմբինատի այն բանուրներին, որոնք աշխատանքը նախկին տեղում թողել են ինքնակամ, չնախազգուշացնելով իրենց հեռանալու մասին կոմբինատին կամ տրանսպորտի վարչութիւններին»: Այդպիսիները, 5 օրւայ ընթացքում պէտք է արձակեն գործից և վերադարձեն իրենց աշխատանքի նախկին վայրը: Այս որոշումը խախտող անձինք կենթարկեն վարչական և դատական պատասխանատուութեան» («Պ» Հ» 20 օդ.):

Ուրեմն, արդիւնաբերութեան, հանքագործութեան, պետական աւտոբի ու կօօպերացիայի, երկաթուղու, այսինքն՝ երկրի անտեսական կեանքի մեծ մասի բնագաւառում բանուրները «ամբացուած», պինդ կապերով կապուած են գործարարի, հանքի, խանութի ու զբոսանեակի հետ: Եթէ մի բանուր պէտք ունենայ հրանալարու, պարտաւոր է արտօնութիւն ստանալ կառավարչից: Վերջինս կարող է արտօնել, կարող է և շարտանել, նայելով թէ իր քմահաճօքը ինչ է թելադրում: Եթէ բանուրը փորձէ չենթարկուել կառավարչի կարգադրութեան և հեռանալ «ինքնակամ», շարաւար կը պատժուի վարչական կամ դատական եղանակով:

Կարելի է երևակայել, ուրեմն, թէ ի՞նչ պայմաններ են ստեղծուել, Որոհրդային Միութեան մէջ, որ կառավարութիւնը հարկաբարձ է նման դաժման միջոցների դիմելու: Կարծես, երկու թիւում բանակներ լինեն. բանուրը ձգտում է մի կերպ ապստիլ պետական հիմնարկութեան ու ձեռնարկութեան լծից, իսկ կառավարութիւնը աշխատում է պահել նրան լծի տակ: Բանուրը արտապարզ միջոցների է դիմում խուսափելու համար կառավարութեան բռնութիւններից, իսկ կառավարութիւնը, գանապան հնարագիտութիւններով, աւելի և աւելի կապանքների մէջ է առնում նրան:

Ի՞նչ է այս տարօրինակ երևոյթի պատճառը: Ինչով է քաջատրուած բանուրական ուժերի այսպիսի պսական ու հոռուութիւնը: Մինչ ամբողջ աշխարհ տառապում է գործազրկութիւնից, իսկայ՛էս խորհրդային սահմաններում ամենքը աշխատանք ունին ու կուշտ են. իրօք Հայաստանի ամբողջ գիւղացիութիւնը այնքան զբաղած է գիւղում, որ այլևս քաղաքային կեանքը նրան չի գրաւում: Զէ՛, ի հարկէ: Ո՛չ միայն գիւղում, քաղաքներում է՛լ կան մեծ քանակութեամբ ան-

գրաղ մարդիկ, որոնք թէև որէ՛ն տեղ արձանագրւած չեն, բայց փաստորէն գործազուրկ են, և, առհասարակ, թէև «գործազրկութիւնը լուծարել է ենթարկւած», բայց երբք էլ վերացւած չէ Հայաստանում, միայն թէ մարդիկ չեն ուզում աշխատել բուլեղիկեան արդիւնաբերութեան մէջ: Նոյն ձեռնարկը. Հայաստանը բազմաթիւ փաստեր է արձանագրում, թէ բանուրները գործարաններից ու հանքերից փախելու են գիւղ կամ մէկ ձեռնարկից անցնում են միւս ձեռնարկը: Հազարուոր ու տասնեակ հազարուոր գիւղացիներ իրենց գիւղերում պտտում են անգործ, գեթապատու են կէս-կուշտ, կէս-քաղցած մնալ տանը, բայց չեն ուզում բռնել «սոցիալիզմի կառուցման հնարագիտութիւն» ու իրենց վիզը դնել խորհրդային «չինարարութեան» լծի տակ: Ինչո՛ւ, ի՞նչ է դրա պատճառը:

Պատճառը, ի հարկէ, ո՛չ գիւղացիների բթամտութիւնն է, ոչ էլ «կուլակի իզդէրոզ դաշնակները պրովոկացիան», այլ հէնց խորհրդային անտեսութեան էութեան մէջ է: Գիւղացին յօժար կամբով չի գնում քաղաք աշխատելու, որովհետև քաղաքը նրա համար ոչ մի հրապուր չի ներկայացնում: Գործարանում բանուրը աւելի կուշտ է, քան գիւղում: Խոճիկը անշուն է, աշխատանքի, ապրուստի ու կենցաղի պայմանները գրաւել չեն: Բանտային կարգեր են տիրում ամէն տեղ: Գիւղացին ինչո՛ւ պիտի թողնէ, համեմատաբար, աւելի ազատ կեանքը ու երթայ ճորտ գրել բուլեղիկների մօտ:

«Որոհրդ» Հայաստանում գտնում ենք առատ նիւթեր, որոնք լիովին բացատրում են բանուրների գանգաւածային փախուստը գործարաններից ու հանքերից: Աշխատանքի և ապրուստի պայմանների բուլեղիկեան արդիւնաբերութեան մէջ, վարձարարութեան շտիք, արեւուշի և արողջապահական միժճիւր, ներքին փոխարարեութիւնները, ընդհանուր մթնոլորտը—այդ ամենը այնպէս է, որ առանց բուն հարկադրանքի, ի հարկէ, ազատ դաշտի գիւղացին չի գայ ու բանուր չի դառնայ:

Որոհրդային հիմնարկներում և ձեռնարկութիւնների մէջ աշխատող բանուրութեան միժճիւր ամենացաւոտ կողմերից մէկը վարձարարութիւնն է. ոռճիկը նախ՝ անբաւարար է. բանուրների ստացած ամենաբարձր ամասական անգամ, կեանքի ծալքայեզ սղութեան համեմատութեամբ, անբաւական է ապրուստի ամենատարական պահանջներն իսկ գոհացնելու: Երկրորդ՝ այդ ոռճիկից ահապին գանձուածներ են կատարում յօգուտ պետութեան, Կոմունիստական Կուսակցութեան, արհեստակցական միութեան, Եղբայրութեան Օգնութեան Միջազգային Կոմիտէի (ՄՕՊԻ), ՊԱՅը — Աշխաղիմի, Դանադան կազմակերպութիւնների, պարտադիր փոխառութիւնների և այլն: Ո՛չ մի երկրում բանուրը այնքան պարտադիր վճարումներ չունի, որքան խորհրդային էլիտանութեան տակ: Վերջապէս, ոռճիկի բախումն էլ չի կատարում արդար սեղբուներով. և՛ սե աշխատանք կատարողը, և՛ երկար ստախների աշխատանքով հմտութիւն ձեռք բերած բարձրորակ մասնաղէտը, յաճախ, միևնոյն շափով կամ շատ անշուն տարբերութեամբ և վարձատրում: Եւ զարմանալի չէ, որ ամէն անգամ, երբ խօսք է լինում «բանութիւն հոսու-

նութեան» մասին, նախ և առջ, ոտճիկի խնդիրն է առաջ քաշուում: Այսպէս, Լեւոնեղատիլի «բանուժի հոսունութեան» պատճառները զննելիս «մեր առաջ կը ծառանայ առաջին հերթին աշխատակարարի պրոբլէմը» (Պ. Հ.՝ 20 օգ.): Յատկապէս բարձրակի բանւորները փախչում են գործարանից, որովհետեւ իրենց ստացած ոտճիկը չնչին է: Այս երեւոյթի դէմ բողոքում են արդիւնաբերութեան մասնագէտ ղեկավարները: Նոյն իսկ Հայկումկուտի քարտուղարութիւնը, Ստալինի վերջին ճառից յետոյ, դատապարտեց այդ երեւոյթը. «Ձի կարելի այլ ևս հանդուրժել այնպիսի դրութիւն, երբ Հայաստանի առաջատար արդիւնաբերութեան բանւորները աշխատավարձը, որոնք ծանր աշխատանք են կատարում հանքահանքում և պղնձածուլարանների հնոցների մօտ, աւելի ցածր մակարդակի վրա է, քան մեր արդիւնաբերութեան միւս երկրորդական ճիւղերում» (Պ. Հ.՝ 2 սեպտ.): Բայց և այնպէս հանդուրժուում է և «հասարակացման» սկզբունքը չի վերանում: Շատ անգիւր բարձրակի և անորակ բանւորները գրեթէ նոյն ոտճիկն են ստանում. այսպէս, օրինակ, Երևանի «միտաքի» գործարանում ամենացածր աշխատավարձը 41 րուբլէ, իսկ ամենաբարձրը՝ 54 ր.:

Երկրորդ ցուր բանւորական ընակարանների խնդիրն է. գործարաններում, բայց, ամենանոյր, հանքային շրջաններում բանւորները ապրում են անտանելի պայմաններում. «Հիմնական բացերից մէկը, որը մինչև օրս դանդաղեցրել է պղնձարդիւնաբերութեան տեմպերը, գանգատուում է Ալլահվերդու կոմբինատի վարիչ Ջալալթեանը, դա բանւորների ընակարանային պահանջներին անհրաժեշտ չարիով չբաւարարելն է... Ալլահվերդում մինչև հիմա բանւորութեան միայն 50% է ապահովել ընակարանով»: Ղափանում «1924 թից ի վեր կառուցումներ կեն կատարում բանւորութիւնը ընակարանով ապահովելու համար, սակայն, մինչև հիմա բանւորութեան ոչ պակաս 60%, մօտ 100 հոգի, ամէն օր 2-10 կիլոմետր ճանապարհ է կտրում տուն դնալ-գալու համար, որովհետեւ ապրում է գիւղերում: Նոր շինւած շէնքերում բանւորներ չկան. № 1 և 2 նոր շէնքերի 50 բնակիչներից միայն 2 են բանւոր. № 3 և 4 շէնքում 50 սենակից բանւորները դրացեցնում են միայն 4 սենակ: Իսկ ութը՞ր են ապրում այդ շէնքերում: Մարտիկ, որ ոչ մի կապ չունեն կոմբինատի հետ» (Պ. Հ.՝ 8 սեպտ.):

Երևանի մետաքի և հացի գործարանի «բանւորների ընակարանային պայմանները անբաւարար են. շատերն ապրում են խոնաւ նկուղներում: Արդիւնյալաններում նախատեսել են գումարներ ընդհանրաբարութեան համար, բայց այդ գումարները միշտ էլ զնդել են»: «Ցեմէնի բանւորներն ապրում են ընակարանային վատ պայմաններում: Եղած բարակները չեն բաւարարում բանւորների անգամ մինիմում պահանջները... Գըռուում են հակասահիտարական գրութեան մէջ: Բանւորների պահանջները ընդհարան տրամադրելու մասին մատուցել են յանցագործ անուշաղբութեան»: Կարի գործարանի «բանւորութեան 60% կարօտ է ընակարանի մի մասը բոլորովին ընակարան չունի, միւսն էլ ապրում է հակաստորջապահական ընակարաններում»:

Խորհրդային արդիւնաբերութեան բոլոր վայրերում կացութիւնը նոյնն է. բանւորութեան խոշոր մասը գուրկ է բնակարանից և ապրում է շատ վատ պայմաններում, աւելի՛ վատ, քան սրատրագովից առաջ:

Նոյն է կացութիւնը և սնունդի ու աստղապահական տեսակէտից: «Ցեմէնի կօօպերատիւ խանութը խայտառակ թերութիւններ ունի... Բանւորների համար յատկացուող սննդամթերքն ու վեֆիլիտային ապրանքները մեծ քանակով բաց են թողնուում զիւղացիներին և Ցեմէնի հետ ոչ մի առնչութիւն չունեցող կողմնակի մարդկանց... Սնունդը անորակ է: Շարաքներով թարմ կանաչ չի գործածուում: Ամսի 1ին և 2ին 400 քաժին աւելի պարբառած ճաշը թափել են, իսկ 5-6ին հարիւրաւոր բանւորներ քաղցած են մնացել... Ճաշարանի մաքրութիւնը միխթարական չէ»: Ղափանի ձմուռարանի 60 բանւոր մայիս ամսւայ շաբաթն ստացել են միայն օգոստոսին: Կօօպերատիւ բոլոր խանութները բաց են միայն ցերեկ... Բանւորներն ու ինժեներներն արտադրութիւնից կարելով հերթի են կանչուում: Բանւորները մինչև բանւորներին հասնելը փչանում էին:

Երևանի կաշեգործարանում «երկու ամիս է ինչ խոտան կաշիները, որոնք պէտք է արէին Ուսիւսիւրոյին ստոյնձ պարբաստելու համար, մնացել են բակում, արևի և անձրևների տակ, որդերի փէջ կորած՝ իրենց շրջապատը տարածելով գարշահոտութիւն... Կաշեգործարանի ճաշարանն այնքան էլ միխթարական գրութեան մէջ չի գտնուում. օրինակ՝ խոհարարը և միւս աշխատակիցներն ունեն ընդամենը մէկական խալաթ, որը, ըստ իրենց յայտարարութեան, լւանում են ամիսը մէկ անգամ. նոյն վիճակում են նաև սրբիչները: Կենսամթերքները թափփում են ուղղակի դետինի, մատուցում չունեն, տակառները կափարիչ չունեն, ծածկած են կեղտոտ խալաթներով, սառնարան չկայ. զբոսից անձրևի լուրը հոտում է ուղղակի ներք»... «Էլ՝ ամառի խայտառակ դրութեան մէջ է Սոյիւզ-Տրանսի թէյարանը»: «Կարեւոր գործարանի բոլոր ցեխերի ապակիները, կառուցման օրից մինչև օրս, չեն մաքրուել»: Մարմարի գործարանում «չկայ ճաշարան. հանդուստի սենակի ու սնունդը ընդունելու շէնքը փոքր և կեղտոտ լինելու հետևանքով բանւորները ստիպւած են լինում դրսում թէյի և համադրանքի»: «Չորջ հուանդանոցում շաբաթներով բաղնիքը չի աշխատում: Հիւանդներ կան, որ մէկ ամիս է ինչ բաղնիք չեն գնացել»: Արթիկ-Տուֆի «ճաշարանը շէնքը զիւղական դոմի է նմանում. վերելից սննդահատ հող է թափուում ներքև, կամ աւելի ճիշտ՝ ուղիւ ճաշի մէջ»: Մեղրու ճաշարանում «յաճախորդներն ստիպւած են լինում ժամերով հերթի սպասել: Ջուրն անպատ, որը հոտում է 50 քայլ հեռավորութեան վրա, տրուում է նորմայով: Իւրքանջներ յաճախորդ մի բաժակից աւելի իրաւունք չունի խմելու»:

Եւ այսպէս անվերջ: Օրինակները կարելի է բազմապատկել ու բիւրացապտկել: Բանւորութիւնը տապալուում է խորհրդային արդիւնաբերութեան դժոխային պայմաններում: Նրա կեանքը կանգ չէ, այլ անընդհատ նահատակութիւն: Դրանով է բացատրուում բանւորների յարածուն «հոսունութիւնը» գործարաններից

ու հանքերից մարդիկ դուրս առած՝ փախչում են: Նոյն երևույթով է բացատրում և զելզացու անօրինակ «աբրուտաժը»: Ճիշտ է, զելզացու վիճակն էլ նախանձելի չէ: «Երոխողը» հեղգհետէ նրա ազատութիւնն էլ է սահմանափակում, բայց և այնպէս, բանուրի համեմատութեամբ, նա աւելի աղատ է. զելզական աշխատանքի բնոյթը հէնց այնպէս է, որ աշխատուորի կատարեալ ճորտացումը անհամեմատ աւելի դժւար է, քան գործարանի ու հանքերի սահմանափակ միջավայրում: Հայաստանի զելզումը դեռ որոշ ազատութիւն մնացել է, մինչդեռ գործարանն ու հանքերը ամբողջապէս գտնուում են բոլշևիկեան որոգայթներէ մէջ:

Ահա, ընդհանուր արմամբ, «բանուրի հոսունութեան» բացատրութիւնը? Այստեղ ո՛չ «դասակարգային թշնամին» դեր ունի, ո՛չ «կուլախն» ու «զաշակ»ը, ոչ էլ որեւէ արտաքին ոյժ: Առաւել ևս դեր չունի «գործադրուորի սով»ը, թէկուզ այն պարզ պատճառով, որ, ինչպէս ասացինք, գործադրուորիները ընտելեցուած չէ խորհրդային իշխանութեան մէջ, և, առհասարակ, զեկրետով գործադրուորիներ չի լուծուում: Դեկրետով կարելի է փակել աշխատանքի բարանները, այրել գործադրուորիների ցուցակները, զրկել նպատուրից — այդպէս էլ արին բոլշևիկները, բայց զեկրետով միջոնուոր անդործներին աշխատանք չի տրւի:

Եւ տարբերակ պիտի լինէր, եթէ, իրօք, գործադրուորիներ գոյութիւն չունենար խորհրդային սահմաններում, ուր ոչ բւարար չափով գործարաններ կան, ոչ արտադրութեան հարուստ միջոցներ, ոչ հում նիւթ, ուր հարելք միջոնուորի աւելի զելզացիներ ապրում են ազատութեան և սակաւահողութեան նախնական պայմաններում: Հէնց այն հանգամանքը, որ օրէնքով բանուորութեան աւելի իրաւունքներ են յատկացւած, պարենաւորման տեսակէտից գործարաններին որոշ առաւելութիւններ են տրուում, հէնց քաղաքի ընդհանուր դրանութիւնը պատճառ պիտի լինին, որ զելզի մարդկային ոյժի աւելցումը հոտեր զէպի քաղաքները, և եթէ չի հոտում, պատճառը ամենին նման

աւելցուելի չգոյութիւնը չէ, այլ վերև յիշւած հանգամանքները:

Բոլշևիկներէրի առածը ճիշտ կը լինէր, եթէ Ռուսաստանն ունենար զարգացած ճարտարարեստ և ըսպումաման լայն հնարաւորութիւններ: Սակայն, ոչ այս կայ և ոչ այն: Խորհրդային արդիւնաբերութիւնը իր մի կարեւոր մասով դեռ «վերականգնում» չըջան է ապրում, իսկ հնգամեայ ծրագրի իրական ծաւալը շատ հեռու է այն «տեմպերից», որոնք ցոյց են տրուում քարոզական որոշ նպատակներով և, յամենայն զէպս, շատ հեռու է որեւէ մեծ արդիւնաբերական երկրէ ինարարութեան ծաւալից ու թափից: Միւս կողմից, երկրի ներքին գնոգական կարողութիւնը բացարձակ անգոր է սպասելու գործարանների ու հանքերի արտադրութիւնը, և խորհրդային իշխանութիւնը ստիպւած է արտաքին շուկաներ յետեից ընկնել, սեփական ժողովրդի կողմէր սովի գնով՝ իր ունեցածը արտածել ուրիշ երկրներ, այսինքն՝ վարել անտեսական միլեոնյ քաղաքականութիւնը, որին հետևում են դրամատիրական պետութիւնները: Եւ մինչ վերջիններիս սահմաններում գործադրուորիների թիւր միջոններով է հաշուում, բոլշևիկների երջանիկ աշխարհում «գործադրուորիները լուծարքի է ենթարկւած», ո՛չ թէ գործի, այլ գործարարի սով է տիրում: Ինչպէ՞ս է կատարել այս հրաշքը — մնում է ըբացատրւած: Ձի բացատրւած և այն, որ եթէ զեկրետով կարելի էր «գործադրուորիները լուծարքի ենթարկել», ինչո՞ւ նման զեկրետով կարելի չի լինում զելզացիական ծովից «բանուորական կազմեր» պատրաստել, ինչո՞ւ «համատարած տեխնիկացումը» չի սալիս պահանջւած «բանուր» և հարկ է լինում դիմել Գերմանիա, Աւստրիա ու մինչև հեռուոր Ամերիկաները «կազմեր» ստանալու համար: Եւ ուրիշ շատ «ինչու»ներ էլ մնում են առանց պատասխանի ու մութ: Պարզ է ու հասկանալի միայն «բանուրի հոսունութիւնը»: Բանուորութիւնը շարունակում է փախչել գործարաններից ու հանքերից, խորհրդային ողջ արդիւնաբերութիւնից...

Ս. ՎՐԱՑԵԱՆ

ԱՆ ԳԼԻ ԱԿԱՆ ՏԱԳՆ ԱՊՐ

Անգլիական տապնայը, որ իր ծաւալով ու արտադրութեամբ շատ աւելի լայն է, քան Անգլիայի պետական սահմանները, շարունակում է մնալ միջկարգային ուղարկութեան կենտրոն: Չկայ մի երկիր ու ժողովուրդ, որի վրա նա, այս կամ այն չափով, անդրադարձում ունեցած չլինի:

Ենթադրուած էր, որ աշխատուորական դաշինի հրամարումով (24 օգ.) և, այսպէս կոչւած, «ազգային կառավարութեան» կազմութիւնից յետոյ, սկսւած խուճապը կը հանդարտի, և կեններ կը մտնէ բնականին հոուն մէջ: Սակայն, այդպէս չեղաւ: Երևոյթները ցոյց տւին, որ հրանդուութիւնը անհամեմատ աւելի խորն է և շատ աւելի լուրջ դարմանի կարօտ: Պարզեց, որ տապնայը մասնակի բնոյթ չունի. խնդիրը միայն տրնտեսական ու երմտական դժուարութիւնների մէջ չէ, այլ ամբողջ պետական կազմի խանգարման:

Հէնց, թէկուզ, երկրի քաղաքական կողմը վաղուց Խորհրդարանի վարը Անգլիայում այնպէս ընկած չի եղել, որքան այսօր, երբ ժողովրդական լայն գանգաւանները մեծ չափով կորցրել են իրենց վստահութիւնը դէպի այդ բարձր հիմնարկութիւնը: Վաղուց անգլիական քաղաքական կուսակցութիւնները ներքին այնպիսի սուր ջլատումների ու փոշեացման շնն ենթարկւել, որքան այժմ: Եւ, վերջապէս, բրիտանական կայսերապետութիւնը երբեք այնքան մտաւոր փորձութեան մասնակց չի եղել, որքան վերջին տարիները: Կարծես թէ Մեծ Բրիտանիայի աշխարհակալութեան արեւը սկսել է թեքւել դէպի արեւմուտք: Եւ եթէ այս կացութիւնը շարունակի, այնքան էլ չափագանցութիւն չի լինի անգլիական նախարարներից մէկի արտասոյսած վախը, թէ՛ «Անգլիան կը կրճատուի ու կը հասնի Հոլանդիայի կամ Պորտուգալիայի աստիճանին»:

Եւ, իրօք, նայեցէք՝ ի՞նչ է կատարում անգլիական մինչև այժմ ուրիշների համար օրինակ ծառայող կուսակցութիւնների ներքը — բոլոր՝ կուսակցութիւնների անխտր: Պահպանողականները, որոնք համարեա միշտ աչքի են ընկել իրենց բիրեկացած զաղափարներով ու կուս հանրաշխութեամբ, այսօր պատկուած են աւելի քան երբեք: Պետութեան կենսոց յուզող դրեթէ բոլոր հիմնական խնդիրներում նրանց մէջ կայ երկու՝ իրար դէմ պէնք ճօճող բանակ — Բոլղոսիին թեւ մի կողմ, Ջըբշիլ, Լոյպ Թոթեմուր, Երզնիսիցիները իրենց ազդեցիկ մամուլով և շատ ուրիշներ՝ միւս կողմ: Վերջերս տեղի ունեցող խորհրդարանական մի շարք մասնակի բնորոտութիւններ ժամանակ երկու կողմերը դուրս եկան առանձին թեկնածուներով, միմիանց պահանջները ժխտող առաջարկներով, իրար դէմ նախնորական կատարող պայքար մղեցին և նպաստեցին իրենց պարտութեան ու հակառակորդների յաջողութեան: Անձնական փաստիւրութիւնները չեն, ի հարկէ, հակամարտութեան պատճառները, ոչ էլ թեթև խնդիրները: Բրիտանական կայսրութեան պոլիտիկանը պայմանաւորող դործօնների շուրջ էլ բախուած, ինչպէս Հնդկաստանի հացըր, մաքսապաշտպան գրութիւնը, մայր-երկրի և դոմինիոնների փոխյարաբերութեան ձեւը: Այսպիսի ծանրակշիւ ու դժուարալոյծ հարցերի շուրջ էլ դարգանում մտքերի ճիւղաւորումը պահպանողական կուսակցութեան ծոցում:

Պակաս կենտոն չէ վիճակ և ազատականների բանակում: Լոյք Ջորջի յամառ ավակցութիւնը ախտաւորականներին եթէ մի կողմից թուլացրեց վերջիններեա միութիւնը և դէպի ազատամիտ բուրժուազիայի դիրքերը քաշեց աջ-չափաւորականները որոշ տարբեր, միւս կողմից, իրեն պատասխանատու Մակդոնալդի կառավարութեան վարած քաղաքականութեան համար, կուսակցութիւնը մատնեց իր համախոհների բուն դժգոհութեան: Այդ հողի վրա էլ, որ տեղի ունեցաւ Ջոն Սայմոնի հատուածի բմբոստացումն ու բանտումը Լոյք Ջորջից:

Անհամեմատ աւելի խոր ու փոթորկալոյց ապրումների է մատնւած Աշխատաւորական կուսակցութիւնը: Մի կողմ թողած Մոսկւայի կէս-Փաշտոնական խմբակի անջատումը, Մակդոնալդի, Մետուզինի ու Քոմասի պէս փորձած ու հեղինակաւոր առաջնորդների, կարելի է, աւել Աշխատաւորական կուսակցութեան ստեղծողների, հետագումը ինքնին արդէն ծանր հարւած է կուսակցութեան համար: Աշխատաւորականները աջ թեւի համակրանքն աւելի հեռացածնեքի հետ է: Ինքը՝ Հէն-տէրալնը, որ Մակդոնալդի տեղը բռնեց, իրեն կուսակցութեան՝ առաջնորդ, իր հոգեբանութեամբ, զաղափարներով ու գործելու եղանակով նոյնպէս աւելի հեռացողներին մօտ է, քան, այսպէս կոչւած, կիպոլիւր-սայդիլներին, կամ անկախականներին, որոնց ղեկավարն է Մաքսուլը: Վերջիններս անհաշտ ընդդիմադրութեան մէջ են ներկայ կառավարութեան հանդէպ և համոզւած ջատագովներ ընկերային արմատական բարեփոխութիւնների: Աշխատաւորական սկզբունքների անշեղ կիրառում, ընկերայնական հետեւողական քաղաքականութիւն — ահա ձայն թեւի պահանջը Աշխատաւորական կուսակցութիւնից: Եւ ձայն ու աջը իրենց մտայ-

նութեամբ ու հայեացքներով, իրենց գործելակերպով ու կարգապահութեամբ այլևս այնքան հեռու են մի-միանցից, որ աւելի ճիշտ կը լինէր իսուել երկու առանձին կուսակցութիւնների մասին:

Կուսակցութիւնների ներքին պատկերը և փոխադարձ յարաբերութիւնները՝ երկրում ու խորհրդարանում ստեղծել են այնպիսի վերաբերում, որ միանգամայն արգարանում է այն խօսքը, թէ Անգլիան ապրում է զփտահոգութեան տագնապ, և նման տագնապը իր հետեւանքներով շատ աւելի վատնպատր է, քան ուրիշ որեւէ հասարակական հիւանդութիւն: Երբ մի ժողովուրդ սկսում է այլևս չյարգել ու չհաստատել իր առաջնորդներին, ո՛չ ի մի արհեստական միջոցով կարելի է վերականգնել կենսոցի խանգարւած ընթացքը:

Ներքին-քաղաքական այս ճգնաժամը, որ ըստ էութեան արդիւնք է աւելի արտաքին ու տնտեսական դժուարութիւնների, իր հերթին խանգարում է վերջիններիս զարգացումը: Կուսակցութիւնների վարկաբեկումն ու ժողովրդականութեան նեղումը, անշուշտ, ծնունդ են այն առարկայական պայմանների, որոնց մէջ գտնուում է Անգլիան — արդիւնաբերութեան և առևտրի անկում, գործազրկութեան աճում, ելմտական խտրող բացեր, դրամատիրական հաւասարակշիւութեան խախտում, բարգոթութիւններ Հնդկաստանում — բայց այս վերջիններս էլ, իրենց հեթոթին, սաստկացնում են առաջինների հիւանդութիւնը: Ինչպէս յիշեցինք, պահպանողականների ներկուսակցութեան հակամարտութեան զըլ-խաւոր առանցքը Հնդկաստանի, համալայսբանական դէպքերի և մաքսային հարցի մէջ է: Աշխատաւորական կառավարութեան անյաջողութիւնը և, հետևաբար, աշխատաւորականների վերջին ներքին խլրտումը ոսկու արժէքի անկման անմիջական պտուղն է: Մտքերի շր-փոթն ու անհակացողութիւնները անդլիական իրականութեան մէջ ամբողջապէս բացատրում են ծագած խնդիրների բարդութեամբ և տիրող քաոսով, որոնց անմե թուում է թէ՛ այլ ևս անդոր են դրամատիրական ժամանակակից կարգերի վրա հաստատւած հաստատութիւններն ու կազմակերպութիւնները:

Իրւած խնդիրները, իրօք որ, չափազանց մեծ են: Պատերազմից ի վեր անդլիական ճարտարաբանաւոր և արտաքին առևտուրը բունած են մահացնող հիւանդութեամբ: Հանքերի ու գործարարների մի ահապին մաս փակւած է: Երկու միլիոն եօթը հարիւր հազար բանւորներ չեն աշխատում և իրենց գոյութիւնը պահում են պետական նպաստով: Տարեկան 84 միլիոն ոսկի ծախսւում է սրանց ապրուստի վրա: Վերջին տարւայ ընթացքում է Անգլիան ներսածել է աւելի քան մէկ միլիարդ ոսկու ապրանք և փոխարէնը արտածել է ընդամենը 570 միլիոնի, աւել է երկրի արտաքին առևտուրը, այսինքն ժողովրդական տնտեսութիւնը չորս հարիւր միլիոնից աւելի բայց է ունեցել: Միւս կողմից, իրեն հետևանք տնտեսական ընդհանուր անկայուն վիճակի և վտահոգութեան խախտման՝ անդլիական դրամական հաստատութիւնների մէջ հաւաքւած գումարները սկսեցին արագօրէն հոսել դէպի արտասահման և սովու ու թղթադրամի համաշարիութիւնը խանգարեց արտակարգ կերպով, ոսկին ընկաւ 90 Փրանկից էլ ցած: Այսպիսի երևոթիւններից է բխում այն հզակայական

բացը, որ դոյացել է պետական ելեմուտքի և, առհասարակ, Անդլիայի դրամական գործառնութեանց մէջ: Նոյն երևոյթներով է բացատրուում և այն հանգամանքը, որ Փրանսայի ու Ամերիկայից կատարուած խոշոր փոխառութիւնները չկարողացան վերականգնել նախ-

կին ոյժը: Ու շնն էլ կարող, մինչև որ չգտնուի հիմնական դրամար—արդիւնաբերութեան և առևտրի վերակազմութիւնը այնպիսի սկզբունքներով, որ արտադրութիւնն ու նութական միջոցների կուտակումը նորից գերազանցեն սպառումն ու վատնումը: Ս. ՄԱՍ.

Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Շ ՈՒ Ր Ջ

Վերջին ամիսներու ընթացքին, աւելի յաճախ կը լսուի Թուրքիոյ անուրճ՝ Եւրոպայի և Ամերիկայի մէջ: Եւ կը թւի թէ Թուրքիա ինքն ալ մասնաւոր ճիգեր կը թափէ, ուշադրութիւն դրաւելու համար:

Այսպէս, սիրայօտար կընդունի ամէն հրաւեր, Ազգերու Դաշնակցութեան այս կամ այն յանձնախումբէն: Կը մասնակցի, կը խօսի, տեսակէտներ կը պարզէ, առանց բոլորովին կապելու իր գիտակցին՝ խորհրդային իշխանութեան: Նոյն իսկ ինքզինքը աւելի ազատ կը զգայ, գետին պատրաստելու համար անդամակցութեան: Վերջերս շատ խօսեցաւ այս մասին, թէ և ոչինչ կայ դրական, և պրպտումներ է որ կը կատարուին:

Բաղդատելով նախընթաց տարիներու հետ, ինկիւրի այսօր աւելի տրամադիր է մտնելու ժքնեւի Արիսպագոսին մէջ, կը բաւէ որ երկրորդական գծի վրա շղնեն զինքը, և նախապէս ապահովեն մնայուն աթոռ մը՝ Ազգերու Դաշնակցութեան խորհուրդին մէջ: Իր վիճարդ մտահոգութիւնն է՝ այնպէս մը ներս մտնել, որ միւսները չհամարձակին հարցումներ ուղղել իր յանձնառութեանց մասին:

Օրինակ, Թուրքիան պարտաւորութիւններ ունի Ազգերու Դաշնակցութեան առջև, Լոպանի դաշնադրով: Կրօնն ու պետութիւնը բաժնելով, գեիցեքական օրէնքը թարգմանելով, կը կարծէ ապատած ըլլալ այդ յանձնառութիւններէն, մանաւանդ որ Թուրքիա մնացած փոքրամասնութիւնները գանցառելի քանակութիւն մը կը կապեն, և չպիտի համարձակին բողոքել: Այդ փոքրամասնութիւններէն շրջանները հանդիսաւորապէս հրատարակեցան Լոպանի ճիւղումը՝ իրաւունքներէն. հռոմէական Հայերը Երկուրէ բաժնեցան, Յոյները այլ ևս ձայն չեն կրնար հանել Վենիզելոսի համաձայնութեան յետոյ (1930 հոկտ. 30), իսկ Հայերը... Ո՞վ կը համարձակուի խօսել, կամ ո՞վ կը լսէ: Փքնեւէն ներս մտած օրն իսկ, Թուրքիան կրնայ հաւատարմութեան լիովնակուտակ ուղերձներ շարել սեղանի վրա: Կրնայ իրրև հնչուն դրած արթնցնել գանոնք և փակել հաշիւը:

Նոյն ուսմամբայր՝ օտար դպրոցներու մասին: Թուրքիան աշխարհական պիտուի ինչ հոշակամ ըլլալով, անչնչու չի կրնար հանդուրժիլ կրօնական-միաբանական հաստատութեանց: Փրանսան ինք պիտի հանդուրժէ՞ր: Եւ քանի որ Անգլիացիները և միւսները համակերպած են, Փրանսան ինչո՞ւ կը գանդատի, կամ ինչո՞ւ կը յամառի: Թուրքիան ալ ինքզինքն է իր երկրին մէջ, ինչպէս Փրանսան. հետեւաբար, իրաւունք

չունի առանձնաշնորհաւ վիճակ պահանջելու: Ինչ որ իրրև հարստանք կը ներկայացնեն, պարզապէս օրէնքին գործադրութիւնն է: Կամ կը համակերպին օրէնքին, և կամ կելլեն կերթան:

Ուրեմն, այս կէտին մէջ ալ, վախնալու բան չունի զեմալապետութիւնը:

Կը մնան բուն քաղաքական ինչպիւրները, — Հայկական Դատ, Քիւրտեր, Ասորիներ, Չեքերներ:

Ազգերու Դաշնակցութիւնը երեք հանդիսաւոր առիթներով որոշումներ քուէարկած է Հայկական Դատի մասին: Քուէարկած է այնպիսի ժամանակներու մէջ երբ զեմալապետութիւնը դեռ «ի վննելութեան» էր, շունչը այնքան ինքնավստահութիւն՝ ապարկզ կարգալու համար: Եւ այն ատեն տակաւին փորձուած չէր Ազգերու Դաշնակցութեան ուժը: Միւս կողմէ, դեռ աշխարհը չունէր ներկայ պայթուցիկ, խառնափնթոր վիճակը:

Արդ, այդ օրերուն Ազգերու Դաշնակցութիւնը ինքզինքը ի վիճակի չզգաց պարտաւորելու իր որոշումները: — Չկրցաւ գործադրել նոյն իսկ մասնաւոր յանձնախումբի մը առաջման որոշումը: Պիլատոսի պէս լայց երկու ձեռքերը, երբ Թուրքերը Հայաստան կարշաւէին:

Իսկ այնուհետ մենք տեսանք Քորֆուն, և ահաւախի Մանչուրիոյ միջադէպը: Մուսոլինին անարդէկ դուրս հանց ինչ որ ծրարած էր Յունաստանի հանդէպ, առաջակային զէպի մը առթիւ. իսկ ձափոնը, թէ և աւելի խեղճ, նոյնքան ուժգնութեամբ կը մերժէ գործօն միջմատութիւն: Հարկ կ'ուս. ճնչլ ոչ միայն Ազգերու Դաշնակցութեան հեղինակութեամբ, այլ և մասնաւոր դիմումներով, և Միացեալ Նահանգներուն միջոցաւ, սրնք անդամ շեն Ազգերու Դաշնակցութեան:

Իսկ աշխարհը կատարեալ քսու է դարձած հիմա, իր քաղաքական թնճուկներով և տնտեսական վերիվայրումներով: Աւելի քան երեք, իւրաքանչիւր երկիր ստիպուած է կծկել ինքն իր մէջ, և խուսափել արտաքին բարդութիւններէ:

Ուրեմն, հանգստանքները նպաստաւոր են Թուրքիոյ մուտքին համար:

Բայց Թուրքերը հեռառես են, և չեն տարւել երևույթներէն: Կը խաբեն, բայց չեն խաբւիր: «Նէ՛ օլուր, Ա՛՛ օլմազ» (Ի՛նչ կըլլայ, Ի՛նչ չըլլար): Եւ կողքին ամէն բան ամուր կապել: Ասոր համար ալ, տարիներ է վեր կը ջանան խօսք առնել, մասնաւորապէս Մեծն Բրիտանիայէն, թէ՛ ո՞ր և է ձևով չպիտի խախտի իրենց հողային ամբողջականութիւնը, եթէ մտնեն Ազգերու

Դաշնակցութեան մէջ: Միւս կողմէ, ստիպւած են նկատի առնել Պորժբոյսի Միութեան դիրքը:

Պարզ է որ հետզհետէ կը գորտանայ Մոսկուայի միջազգային կազմութիւնը: Էնկիւրի չի կրնար մէկ անգամէն ճակատ կամ կոնակ փոխել, առանց աւելի հեռուները նայելու: 1918 էն ի վեր կապելով Մոսկուայի շարժանիւն, նոր Թուրքիան անհունապէս շահեցաւ զինուորական և քաղաքական տեսակէտով: Բայց այդ երկուքը, զինուորական ու քաղաքականը, ամէն բան չեն, կանգուն պահելու, զարգացնելու համար պետութիւն մը, մասնաւոր թուրքերոյ պէս աւեր-աւերակ երկիր մը:

Քեմալպաշտութիւնը հասած է անսկիւրեան ասփը, և պետական յօրինածքը կը պահէ զամբողջ երկրին կենսական երակները: Պորժբոյս Միութիւնը ինքն ալ անսկիւր, չի կրնար այս գետնի վրա որ և է աւաւելութիւն ընծայել իրեն: Տարեկան մէկ-երկու միլիոն տղարի առևտուր ոչործելի փշրանք մըն էր արդէն, իսկ այս տարի դարձաւ տեսակ մը կեղծօք: Թրքական վաճառականութիւնը չէ որ պիտի շահէ այդ պայմանազրկն, այլ Մոսկուայի արտաքին առևտուրի գրասենեակը, ուղղակի գնելով իր ուղածը, և իր ուղած չափով:

Կը հետևի թէ, Թուրքիան տակաւին երկար ատեն պիտի տատանի երկու կախարչական ուժերուն, Ռուսաստանի և արեւմտեան Եւրոպայի միջև: Քաղաքական տեսակէտով, չի կրնար իր կայտերը կարելի Մոսկուայի հետ: Իսկ տնտեսապէս՝ ծանրութիւնը կը հակի դէպի արեւմուտք: Ըսմէ՞ք կը յամտի հաւատալ խորհրդային բարեկամութեան առաւելութիւններուն, իսկ իր շրջապատը, երկրին տնտեսական ապագան մտածող տարրը աչքերն ուղղած է դէպի Եւրոպա:

Ո՛ր տեսակէտը պիտի յարթէ, — Թուրքերը իրենք ալ չեն գիտեր:

Առ այժմ, Թուրքիա լրջօրէն կաշխատի ամբացնել, աւելի զգալի դարձնել իր արեւելքութիւնը Պալքաններու մէջ: Յունական բարեկամութիւնը մեծապէս նպաստեց այս քաղաքականութեան: Պալքանեան Պորժբոյսի գործը, որուն առաջինը դումարեցաւ 1930 հոկտեմբերին, Աթէնքի մէջ, և երկրորդը կը գումարի ներկայ հոկտեմբերին, Պոլսոյ մէջ, մասնաւոր ղեկավարութիւն մը կը ընծայի Թուրքիոյ: Որովհետև — ճակատադրական դժբախտութիւն — պալքանեան պետութիւններէ իւրաքանչիւրը շատ աւելի շարակամ և չկամ է իր հարեւանին հետ, քան ամէն մէկը Թուրքիոյ հետ, գտապատ: Այս աղտոյ սկսաւ 1912-13ի պատերազմին, և դարձած է կատարելաւ անվճար, այդ օրերէն ի վեր...

Թուրքը հեռուէն բարեկամութիւնը արդէն դարձած է սիրահարութիւն: Միւրեւնի Կրետացիքն մէկ ծալելով ինքնէն զլոյսելով միւսը, այլ ևս տարբերութիւն չի տեսնել որ, Ազգերու Դաշնակցութեան մէջ, Յունաստանը ներկայացնէ Թուրքիան, և փոխադարձաբար... Եոյն եղանակով միւս պահէն:

Անշուշտ, ըսելու ձեւեր են ասոնք, բայց կը հաստատեն անփոփոխ ճշմարտութիւն մը: — Թուրքիան երկար ժամանակի մը համար ապահով կը զգայ ինքզինքը Պալքաններէն, և մասնաւորապէս Յունաստանէն: Անցեալ տարի, Թուրքը հեռուէն դաշնակցին ստորագրութիւն

նէն անմիջապէս յետոյ, երբ հայրենասէրներ և զինուորականներ հարցապնդումներու տեղատարափ մը կը թափէին վէճեցեղանի վրա, վարչապետը չվարանցարացատրել թէ՛ լուրջ կատակածին ունի հարեւանէ մը (Եռկոտլավիա), և ուրիշ էլք չկար, կոնակը ապահովելու համար: Միւս պատճառները տնտեսական են, և ոչ այնքան վճռական:

Բայց միայն Եւրոպական յենարանները չեն որ կը զբաղեցնեն Թուրքիան:

Այս միջոցին թրքական և թրքանոպատ քարոզութիւնը լայն թափ ստացած է Մ. Նահանգներուն մէջ, շնորհիւ միսիոններուն և դրամատէրներուն:

Քանի մը տարի առաջ, մարդիկ հայել կը համարձակէին պաշտպան կանգնել Թուրքիոյ, այս կամ այն տեսակէտով: Այսօր ջարդերն անգամ կարգաբացելին, Թուրքիան կը ներկայացուի արդիացած, տիպար երկիր մը, և Պայտէ էտրոյները ոչ միայն բնմէ բնմ՝ կը ցատկեն, այլ և զիրք ու թրթի իր սպէն: (Ահաւաստի թրքուհի մը, որ, առանձին, տասը հայ զաղպատէրծի գործ կը կատարէ):

Անշուշտ քաղաքական պայքարը չէ որ ծնունդ կուտայ այս յարաճուն գործունէութեան: Թուրքերը դրամի պէտք ունին: Ամերիկացիներն ալ շահաստան կը փնտռեն: Ամերիկայի հանրային կարծիքը «նախապաշարած» է Թուրքերոյ հանդէպ, տարիներու հայանպատ պրոպագանտէն: Ուրեմն, պէտք է նախ միաբերը շտկել, միջոցորտ և արամազութիւն ստեղծել, վստահութիւն ներշնչել, որպէսզի զերբանայ դրամի հոսումը: Մնացածը՝ պաշտօնական մարդոց գործն է, և արդէն Թէվֆիք Րիշտի պէլըս պատրաստած է Ամերիկա երթալու:

Կը յարողո՞թէ ձեռնոնեայն կը դառնայ: Պատասխան պիտի տան անոնք որ Ամերիկա կը գտնին, և զիտեն թէ ինչ կը նշանակէ հայանպատ կամ թրքանպատ պրոպագանտ: Թուրքերը իրենք խոստովանեցին, թէ հայկական պրոպագանտը մեծ վնաս պատճառեց իրենց դրամին: Ե երբ հիմա այնքան համարձակութիւն ստացել են որ արտաքին գործալարն ալ Ամերիկա կը զրկեն, կը ճշանակէ թէ անոնք տեղաւորել են մեր լքած դետոնի վրա: Եթէ նոյն իսկ չլարուկեն խոշոր փոխառութիւն մը կնքել, Թէվֆիք Րիշտի կրնայ Ամերիկայի սեղանադրական և ճարտարագործական շրջանակներու աջակցութիւնն ապահովել, հանրօգուտ շինութեանց, ճամբաներու և երկաթուղիներու կառուցման համար: Կամ գոնէ միջոցներ գտնել, քանի մը հարիւր հազար զարկականներ տեղաւորելու համար արեւելեան նահանգներուն մէջ, ինչպէս ծրարած են: Պոլսոյ նախկին բարձրագույն, նառա՛ էֆէնտի, առաջին կարգի գործ-կիող է, և կրնայ ճամբայ հարթել, իրեն ներկայացուցել ամերիկեան ընկերութեանց:

Պէտք է շեշտել որ, Թուրքիա այս միջոցին ինքզինքը ապահով կը զգայ արեւելեան ճակատին վրա: Պորժբոյս Միութիւնը իրեն հետ միասին և միահամ է՛քրտական գործին մէջ: Պարսկաստանն ալ լիովին գոհացած աւաւ Թուրքիոյ սահանջներուն, գործակցելով Արարատի պաշարման, տեղահանելով սահմանաճեւրճ աշխրէթներուն և խափանելով ո՛րեւէ շարժում: Իսկ Իրաքի Թաղաւորին այցելութիւնը դէպի Էնկիւրի՛

զարձակ նպատակ թուրքերոյ շահերուն, փարատելով այդ ճակատի մտահոգութիւնը: Մեծն Բրիտանիան էր այս ծրարքին հողեւոր հայրը, միշտ հետևոր ծրագիրներով, — լայն եռանկիւն մը կազմել հարաւէն, արև-մուտքէն և արևելքէն (Իրաք, Թուրքիա և Պարսկաստան), ընդդէմ այսօրան կամ վաղան Ռուսիոյ, և ի պաշտպանութիւն Հնդկաստանի:

Այս անժամեայ կամ խարուսիկ ապահովութիւնն է որ մղում կուտայ Թուրքերոյ իր աչքերն ու ձեռքերը ուղղել դէպի Եւրոպա և դէպի Ամերիկա:

Մէկ աստղով, Թուրքիան կը գործէ լայն ճակատի մը վրա, շնորհիւ իր վայելած խաղաղութեան, և միջազգային անտարբերութեան:

Աշխարհը գործողին է...

„ՍՈՑԻԱԼԻԶՄ ԵՆ ԿԱՌՈՒՅՈՒՄ“

«Սոցիալիզմի կառուցումը» դարգանում է «բայլ-չեղիկան տեսպերով»: Լեհինականի քաղաքային «կուսակուրտը» օգոստոս ամսին Հանած մի բանձնով 4 հետևեալ պատկերն է տալիս Հայաստանի «հնգամեակի երրորդ վճռական տարւայ» արդիւնաբերութեան. «վրճուական տարւայ անցեալ ամիսներում արդիւնաբերութեան մի շարք կարևոր ճիւղեր լուրջ կերպով յետ մնացին և մի քանիսներում ճեղքաձգները դնալով խորացան, որի հետևանքով արդիւնաբերութեան առաջին կիսամեակի արտալանը կատարւած է 81,8 տոկոսով, աշխատանքի արտադրողականութեան պլանը՝ 88%, ինքնարժէքը 15,7%: Բոխարէն իջել է միայն 2,6%, իսկ մի քանի ճիւղերում էլ նոյնիսկ բարձրացել է:

«Անհանդուրժելի կերպով թերակատարումներ են տալիս այնպիսի կարևոր ճիւղեր», ինչպէս պղնձարդիւնաբերութիւնը, Տեքստիլը, ինչպէս նաև Երևանի ու Լեհինականի մի քանի ձեռնարկներ և գործարաններ, ու կապիտալ և քնակարանային շինարարութիւնը:

Այնուհետև ակտիւր միանգամայն համամիտ կենտրոնի պլենումի որոշմամբ՝ հաստատում է, որ, իրօք, կուստեոսական շարժման տեսպը Հայաստանում դեռ անբաւարար է, և այդ ուղղութիւնը մենք յետ ենք մտնւմ Հարևան եղբայրական հանրագոտութիւններից: Նոյնպիսի յետամնացութիւն ունենք նաև սոցիալիստական անասնաբուժութեան ապարիզում:

«Թէ թերակատարումներն ու ճեղքաձգներն և թէ կուստեոսական յետամնացութեան հիմնական ու վըր-լաւոր պատճառը՝ աջ սոցիալիստական պրակտիկան է և ինքնահոսը, ինչպէս և «ձախ» խտորումները, որ սեռ են դտնում ոչ միայն տեղական կազմակերպութիւնների, այլ և կենտրոնական ղեկավար օրգանների մի շարք օղակներում, որոքք իրենց կոնկրետ գաղցնել տան Ստեփանականի, Դարաքրիտայի և, առանձնապէս, Դարալազիակի դասերով: Լեհինական քաղաքի ակտիւն առանձնապէս նշում է խորհրդային ապարատի (թէ կենտրոնական և թէ տեղական) մի շարք օղակների միանգամայն անընդունակ լինելն ու յետ մնալը մեր քաղաքային տեսպերից ու մարտական խնդիրներից:

Ակտիւր նշում է, որ այնպիսի կարևոր, առաջնակարգ արդիւնաբերական և դիւղատեոսական ճիւղեր, ինչպիսիք պղինձը, սեքստիլը, բամբակը, անասնաբուժութեան Փրոնսը շատ թոյլ են ղեկավարւում համապատասխան կենտրոնական խորհրդային ապարատների

կողմից (ժողովնախորհ, Հողօրդկումատ, Ժողովխորհ, Մատժողկումատ ևն), որոնք մի շարք օղակներում ուղղակի թերագնահատման տենդենցներ են յայտարարում, մաննանդ դէպի համամիութենական և Ֆիդէրատիւ նշանակութիւն ունեցող արդիւնաբերութեան և դիւղատեոսութեան ճիւղերը: Այդ տենդենցները որիչ կերպ չեն կարող որակել, քան նացիոնալ-կոնցրուսի արտալալտութիւն» (ՊՄ. Հ.՝ 19 օգ.):

Այսպէս է խորհրդային արդիւնաբերութեան ընդհանուր վիճակը ըստ բոլշևեկների: Հիմա տեսնենք արդիւնաբերութեան առանձին ճիւղերի վիճակը: Սկսենք բամբակից, որ խորհրդային անտեոսութեան այսօրւայ ամենէն «մարտական» խնդիրն է: «Ողջ հասարակչուութիւնը» ոտքի է հանւած բամբակաձշակութեան «տեսպերը» բարձրացնելու համար: «Պորհրդ. Հայաստանը» իր 7 օգոստ. խմբադրականում գրում է. — «Գրեթէ բոլոր բամբակացան շրջաններում բամբակի մշակութիւնն ընթանում է անթոյլաբերելի դանդաղկոտութեամբ: Բազակալում է աշխատանքի մարտական տեսպը: Այդ կարևորագոյն գործը — մշակութիւնը — որով պայմանաւորւած է բամբակի բարձր բերքը, հետևապէս և տեքստիլ արդիւնաբերութեան հումքի բազայի ամբարցում — մատնւած է աջ օպորտունիստական ինքնահոսի:

Ն(բ)Կ կենտրոնի որոշմամբ՝ առաջին քալանը, կուլտիվացիայի և նօսրացման հետ միասին, պէտք է սկսել մայիս 29ից և վերջնաւոր յունիս 7ին: Մինչդեռ մինչև այսօր Դամարլուի, Վեղու և Վաղպատի ճօսլացումը դեռ չի վերջացել, որի հետևանքով խոշոր վըտանդ է սպաւնում բարձր բերքատուութեանը: Երկրորդ ցաղցնը, կուլտիվացիայի հետ միասին, պէտք է ընկուկել Երևան 17ից և վերջնաւոր յունիս 7ին, սակայն, շատ վայրերում այս աշխատանքն անշնորհք, անկադմակերպ ձևով սկսելու, իսկ յաճախ «երկիրօղական գործ» համարելու շնորհիւ, միևնջեւ այսօր էլ 2րդ քալանը դեռ չի վերջացել: Աւելի յայտատակ է գրութիւնը Դամարլուի շրջանում, որտեղ մտակաւ-տրակտայային կայանի թթի տակ, Ուլուխանլու գիւղում, 300 հեկտար բամբակը փշանում է մոլախոտերի մէջ, իսկ կուտեոսութեան աշխատաւոր ձեւերից շատերը լոքրութիւն (ծուլութիւն) են անում ևւ դաշտ դուրս չեն գալիս: Իսկ Դամարլուի շրջանում ևւ շրջկոմստամիութիւնը

կոնկրետ միջոցներէ չեն դիմել բամբակի փշացումը կանխելու համար:

Նոյն համարից. Նարմանուրէ 700 հեկտար «բամբակի արտերը մոլախոտերի մէջ կորել են. քաղհանը կատարում են միմիայն բուգսրի (օգնութեան) եկած ընկերները, իսկ տեղի բանւորական ուժը դաշտ չի դուրս գալիս, չնորհիւ օպերտուկետս ղեկավարների: Բամբակի արտերի 45 տոկոսը վտանգւած է՝ ժամանակին չլքելու եւ շքազանեկու պատճառով... Երևան է եկել բամբակեկու «չոռ» հիւանդութիւնը, որի դէմ պայքարելու միջոցներ նոյնպէս դեռ չեն ձեռնարկուած:

Մի քանի օր յետոյ, «Նորհրդ». Հայաստան» արդէն հարգողում է, որ Նարմանուրէ 210 հեկտար բամբակ բորբոքիին փշացել է, որի համար հետապնդում է սկսած կլոնտեսութեան եւ դիւղտորհրի նախագահների դէմ: Նոյն թւից իմանում ենք, որ Անդրերկրի բերքն ահագանդում է, որ ատապաճան կառուցախիբի տակ է դրւում 1931թ. բամբակի պլանի կատարումը:

Նոյն թւից. «Ջաննաթուրի կլոնտեսութիւնը ցանկ է 6 հեկտար բամբակ, բայց իր 35 աշխտող ձեռքերով չի կորողացել մշակել այդ 6 հեկտարը եւ բամբակը խեղդուել է մոլախոտերի մէջ»:

«Սարգարպատի խորհտեսութեան Ամասիայի բամբակուց ունի 240 հեկտար բամբակի ցանք: Վերջին ստուգումից պարզել, որ առ 10 օգոստ. 36 հեկտար բամբակ դեռ առաջին երես չի քաղհանուած. երկրորդ երես չի քաղհանուած 82 հեկտար, իսկ երրորդ երես քաղհանուած է միայն 50 հեկտար: Քաղհանի աշխատանքները ղեկավարող չի եղել. դիւրեկցիան անուշադիր է գտնուել դժգոյի բամբակի մշակութիւնը: Քաղհանի համար որոշուած նորմաները մնացել են թղթի վրա: Գոյտեսութիւններից եկած բանւորներին կանտուարը չեն օգտագործել: Ջաննաթուրից եկած 127 բանւորը մի օրում 16 հեկտարի փոխարին քաղհանել է 1,75 հեկտար: Խորհրանտեսութեան միւս բամբակուցումը 400 հեկտար բամբակի վրա աշխատում են 5 գրւգատեսնա, մինչդեռ Ամասիայում ո՛չ մի դիւղտեսնա չկայ: Ամասիայում «չոռ»ի դէմ մինչեւ օրս ոչ մի միջոցի չեն դիմել, մինչդեռ 60 հեկտար բամբակ արդէն վարակուած է «չոռով»:

«Դուրդուգուրու շրջանի Շահրիար դիւղի բամբակը շրջանում է առանց ջրի: 40 հեկտար բամբակ դեռ բորբոքիին չի ջրւած: Եթէ այսպէս շարունակել, բամբակի արտերի 80—90% կը փշանայ»:

«Ն.Ղամարլուում, երկրի պաշտպանութեան Փոնդը ուժեղացնելու համար, ցանուած է 2 հեկտար բամբակ, որն առատ անձրեւների շնորհիւ լաւ է բուսել և բարձրացել կէս մետրից աւելի, սակայն, կանոնաւոր բուսած այդ բամբակի արտը մինչև հիմա ոչ քաղհանուած է ոչ էլ նսարացուած: Բամբակի արտում եղէջը երկու մետրից բարձր է կանգնած» («Ն». Ղ. շ» 20 օգ.):

Սեպտ. 1ին Հայաստանի Ժողովրդային և կոմկուսի Կենտկոմը վերաքննութեան են ենթարկում բամբակի մշակման 1931թ. կամպանիայի արդիւնները» և մատնանշում են, որ «բամբակի ցանքերի մի մասը մնացել է բորբոքիին անձալ — Վարպատի շրջանում 168 հեկտար, Դուրդուգուրուի շրջանում 150 հեկտար, Ղամար-

լուի շրջանում 240 հ. և Վեդու շրջանում 100 հ. » («Ն. Ղ» 1 սեպտ.):

«Այսպէս է դրութիւնը բամբակի մշակութեան ֆրոնտում», երբափակնք «Սորհրդային Հայաստան»ի հետ միասին:

Սեպտեմբերից սկսել է «բերքահաւաքի կամպանիան»: Համաձայն «Հայկոմկուսի Անդրերկրի դիւղտեսների» որոշած է Հայաստանում այս տարի հաւաքել 259,609 ցենտներ, որից կլոնտեսական հատածը տարւ է 127,498 ցենտներ, խորհրանտեսականը՝ 7000 ցենտներ և անհատականները՝ 125,201ց. »:

Բամբակից ոչ պակաս «հարւածային» է և «պղնձի պարլիմը»: Ըստ «պլանի», 1931թ. պէտք է արտադրել 6600 տոն զուտ պղնձ: «Մեզ մօտ, դրոճ է «Սորհրդ. Հայաստան»ը սեպտ. 2ին, պղնձարդիւնարութիւնը շարունակում է մնալ միանգամայն անբաւարար վիճակում, մինչդեռ մինչև տարւայ վերջը մնացել է միայն 4 տոն: Եթէ այդ ժամանակամիջոցում մենք չլքարողացանք իրտա շրջադարձ ստեղծել պղնձարդիւնարութեան աշխատանքում, այսպէս Հայաստանի արդիւնարութեան հիմնական առաջատար և համախոռութեան կան նշանակուելիւս ունեցող ճիւղի 3րդ վճարական տարւայ պլանը իր վիճի»:

Հայկոմկուսի Կենտկոմի քարտուղարութիւնը, օգոստ. 29 որոշումով, հետեւեալ թւական պատկերն է տալիս պղնձարդիւնարութեան վիճակի. « 1931թ. առաջին կիսամեակում պլանով նախատեսուած 6000 տոն պղնձի փոխարէն ձուլւել է ընդամենը 1.537 տոն, այսինքն՝ պլանի 25,6 տոկոսը: Եօթն ամսում հանքի հանոթի պլանը կատարւել է ընդամենը 72%, իսկ պնձաձուլման պլանը՝ 59,9%: Օդոստոսին Անդրպղնձ կոմբինատի աշխատանքում ոչ միայն չի նկատուում բարելաւում, այլ և նարգու է հանքի հանոթին ու ձուլումը թէ Ալլահվերդում և թէ Ջանդեղուրի ձեռնարկութիւններում: Օրինակ, օգոստոսի առաջին տասնօրեակում հանքի հանոթը Ալլահվերդու պղնձահանքում յուլիսի 84 տոկոսից իջել է 79,9 տոկոսի, իսկ Ղափանում՝ 39 տոկոսից՝ 36,7 տոկոսի. պղնձի ձուլումը համապատասխանօրէն իջել է Ալլահվերդում՝ 65ից մինչև 53,1 տոկոսի, իսկ Ղափանում՝ 49,3 տոկոսից՝ 42 տոկոսի: Պղնձարդիւնարութեան այդքան յետ մնալը պլանից պայտուած է վիճեցնել հնգամեակի 3րդ, վճարական տարւայ ծրագրի կատարումը պղնձարդիւնարութեան ասպարէզում» («Ն. Ղ. շ» 2 սեպտ.):

«Օդոստոսի 3րդ տասնօրեակում Ղափանի պղնձահանքերը տւել են 15 տոն հանքաբար և 35 տոն կոնցենտրատ: Երրորդ տասնօրեակի հանքային արտադրանքը կազմում է ամբողջ ամաւայ պլանի 6,6 տոկոսը, իսկ պղնձի արտադրանքը՝ ամբողջ պլանի 8 տոկոսը: Այսպիսով Ղափանը չափազանց յետ է մնում՝ ինքնահոսն աշրեղի դրութեան տէրն է» («Ն. Ղ. շ» 2 սեպտ.):

Իսկ թէ ինչ է թերակատարութիւնը պատճառը, կարող է յստակ գազափար տալ խորհրդային բերւորատնտիւղմի հետեւեալ նորոշը «Սորհրդ. Հայաստան»ի 22 օգոստ. համարից.

«Ալլահվերդու և Ջանդեղուրի հանքերն այս տարւայ 6000 տոն պղնձի դիմաց, 1932 թւին տարւել են 10.000 տոնից աւելի: Սրանից միայն Ջանդեղուրը պէտք է տայ 6000 տոն և աւելի: Սակայն, առաջիկայ տարիին

10.000 տան պղնձի արտադրելու հնարաւորութիւններն ստեղծելու համար Զանգեզուրում, բայտ ծրագրի, եկող տարի կառուցելիք Փրոտային (հարստացուցիչ) Փարբիկան, ՊԷՏԲ և ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԻ ՀԷՆՏ ԱՅՍ ՏԱՐԻՒ համաձայն բարձրագոյն մարմինների կարգադրութեան: Այդ ճիւղն և սեղին կարգադրութիւնն արւած է այս տարւայ սկզբին: Բայց արդէն վճարական տարւայ 3րդ կարտայի հիտանու ենք և մինչև օրս, բացի Բաշ-էրուկից ոչինչ չի արւել: Խոսելով փաստերով — զուհարար մետաղների արտար 22/3-31 թւի № 85-2310 գրութեամբ ուղարկու է Փարբիկայում գործի գրութիւնը մոտորների ցուցակից որպէսզի տեղական մարմինները պատուէր տան մոտորների ժամանակին ստանալու համար: Յիշեալ տրեստի Թիֆլիսի բաժանմունքը 1931 թւի ապրիլ 1ի №16900 գրութեամբ պաշտօնապէս յայտնում է ցուցակը համախորհրդական երկտրական սարքաւորումների միւտարման. Թիֆլիսի բաժանմունքին: Միտարները ճնմում է ցուցակը, յատուկ թերթիկ է ուղարկում զուհարար մետաղների տրեստի Թիֆլիսի բաժանմունքին 9/45-31թ. № 12-23 գրութեամբ լրացնելու և յետ վերադարձնելու: Տրեստն էլ իր հերթին № 16-902 գրութեամբ ուղարկում է Զանգեզուր, որպէսզի լրացնեն և յետ վերադարձնեն:

• Համեմեկտրամիտարումը 29/5-31 թ. №70 11/231 գրութեամբ յայտնում է նաև, որ պատուէրած մոտորները 1931 թւին պատրաստ չեն կարող լինել: Նոյն միտարումը 27/6-31 թւի № 70 11-231 գրութեամբ, պատուէրած մոտորների մասին լրացուցիչ տեղեկանք է պահանջում. Զանգեզուրից:

Միտարումը նորից 28/6-31 թ. № 70 11-231 գրութեամբ, ուրիշ տեղեկանքներ է պահանջում... Սակայն, ՉԱՆԳԵԶՈՒՐԸ ԷՒԻ ԿԱՐ ԱՌՈՒԹԻՒՆԻ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՒ ՈՅ ՄԻ ՊԱՏԱՆԱՆԸ ՉԻ ՏԱԼԻՄ:

Համեմեկտրամիտարումը մի գրութիւն էլ է գրում (2/6-31թ. №11-321), որ եթէ տեղեկութիւնները լրիւ և ժամանակին ստացնեն, մոտորները պատրաստ կը լինեն ոչ ուր քան 1933 թիւը: Այս գրութեան մասին Յվետմետոլոտայի Թիֆլիսի բաժանմունքն անմիջապէս հետազոտում է Զանգեզուր և Զակմեղկոմբիւնարին: Զանգեզուրը քննից զարթնում է և, վերջապէս, №1019 27/7-31 հեռագրով բողոքում է ժամանակի մասին, պահանջում է այս առթի տալ մոտորները: Նոյն բանն անում է և Զակմեղկոմբիւնարը:

Բողոքից յետոյ, Յ. Մ. Չ. Թիֆլիսի բաժանմունքն էլ իր հերթին հեռագրով բողոքում է Մոսկւա: Այսպէս... մէկը բողոքում է, միւրս՝ պահանջում է, Զանգեզուրը՝ լուծում, իսկ ՅԱՄՏԱՅԻՆԻ ԻՄԲՐԻԿԱՆ ՄՆՈՒՄ ԵՒ ԱՌԱՆՑ ՍԱՐԿԱՆՈՒՄԱՆ: Եւ խալտուակ փաստն այն է, որ մինչև օրս ոչ մի մոտորի պատուէր չի ձեակերպւած, Զանգեզուրը ոչ մի տեղեկանքի մասին չի պատասխանել ում հարկն էր:

Բոլշեակները, սակայն, համաձայն չեն, որ պղնձարդիւնաբերութեան «պլանի վիժման» մեղքը իրենցն է: Ընդհակառակը, նրանք ուրիշի վրին են ձգում պատասխանատուութիւնը: Այլապէս ըստ բանտների բերանով նրանք յայտարարում են. «Մենք լաւ ենք զիտակցում, որ պղնձի համար մյուսը պայքարի ճակատը դասակարգային պայքարի լուրջ ճակատամարտներից մէկն է: Մեր դասակարգային թշնամիները — կուլտուր, նրա իդէոլոգիան, զանազան ուժերն չեն խնայում մեր պլանների կատարումը վիժեցնելու համար: Արտագրութիւններից չվողները, գործարիները, սիմուլանտները ջուր են լցնում կուլտուրի և դաճակի ջրաղացին, իսկ Խաչնակցութեան ազնետուրը հանդիսացող նացիոնալ սկզբնիստները մեր շարքերում» արգելք են հան-

դիտանում պղնձի պլանների կատարմանը». («ՈՒ. Հ.», 3 սեպտ.):

Ամենքը մեղաւոր են, բացի, ի հարկէ, բոլշեակներից: «Այսպէս է դրութիւնը պղնձի Փրոտոտում»:

«Այնտիկթար» են և Հայաստանի երկաթուղու գործերը:

«Երկաթուղում նորից սկսում են յաճախակի երելոյթ դառնալ զնացքների ուշացումները, վազոններն ու ցիստերները մի քանի հարեւր կիրմեար սխալ և իրուր ուղարկելը, վազոնները լրիւ չօդտազործելը, տասնեակ վազոններ օրերով իրուր կանգնելը, վատորակ նորոգումները, անպատասխանատու, անիոյթ և յանցաւոր վերաբերմունք դէպի աշխատանքը, և այլն, և այլն»:

Իերենք մի քանի փաստ:

Օգոստոս 3ին Հայտար մի վազոն (№ 330275) երկաթ է ուղարկում Երևան կայարանից Լենինական. երբ գնացքը հասնում է Անի կայարանը, տեսնում են, որ այդ վազոնը դատարկ է, ուստի և ուղարկում են սեմեզա բաժնուր: Վերքը պարզում է, որ երկաթի վազոնը թաղի, մէկ ուրիշ դատարկ վազոնի վրա են փաստաթուղք կապում:

Օգոստոս 4ին Սալուցտրանք մի վազոն (№242129) ապրանք է ուղարկում Երևան կայարանից Ստեփանաւան, բայց վազոնի փաստաթուղքը կազմում է Նորաչէն կայարանի վրա. այսպիսով մի վազոնի համար երկու դոկումենտ է կազմում, որը և աշխատակիցներին չիփոխեցնում է մասնում: Այսպիսով, վազոնների փաստաթղթերը խառնում են իրար և աճազին դժարութիւններ առաջացնում:

Օգոստոս 4ին Լենինականից Նախիջևան են ուղարկում է ցիստերն մագուրճ, իւրաքանչիւրը 45 տոն, բայց Նախիջևանը, տեղ չունենալու պատճառով, այդ ցիստերները լիքը յետ է ուղարկում դէպի Լենինական. երբ ցիստերները հասնում են Ուլուխայուր, Լենինականը կարգադրում է № № 182475 և 694923 լիք ցիստերներն ուղարկել Երևան, չնայած Երևանին իր հերթին հեռագրում է, թէ իր մօտ տեղ չկայ: Կարծես այդ էլ բաւական չէր, չորս ցիստերները երկու օր է քսուրութիւ կատարելուց յետոյ, միւս օրը նորից երկու ցիստերն մագուրճ Լենինականից ուղարկում են Նախիջևան և այնտեղից նորից վերադարձնում Երևան:

Օգոստոսի 9ին № 954 գնացքը պատրաստ էր Ուլուխայուրից Երևան մեկնելու, սակայն, գլխաւոր կոնդուկտոր Մեյլիք Գրիգորեանը գնացքը թողել, գնացել էր իր համար կոն (չպալ) գողանալու, որի պատճառով և գնացքը 25 րոպէս իրուր կանգնեց՝ խախտելով բոլոր գնացքների շացուցակը: Պէտք է արձանագրել, որ այս վարմունքն առաջինը չէ գլխաւոր կադուկտոր Մեյլիք Գրիգորեանի կողմից:

Օգոստոսի 10ին հաւաքական № 953 գնացքը Երևանից Զուլֆա մեկնելիս, 4րդ շրջանի հերթապալէ կարգադրութեամբ Ուլուխայուր կայարանից երեք կաթնայ ջուր է տանում Դամարու և Արարատ կայարանների համար. սակայն, Դամարու և Արարատ հրաժարում են ջուրն ընդունելուց: Երբ գնացքը հասնում է Արագածան, այնտեղ չնայած ջուր պէտք չի լինում, գլխաւոր կադուկտորը երկու կաթնայ ջուր է թողնում, մէկ կաթնայ էլ տանում, թողնում է Նորաչէն կայարանում: Օգոստոս 11ին №954 գնացքը Զուլֆայից վերադառնալիս, թէ Նորաչէնում և թէ Արագածանում թողած ջրի կաթնայները լիքը յետ է բերում նորից Ուլուխայուր և այդտեղ ջուրը թափում:

Օգոստոսի 11ին № 407 գնացքով Երևան կայարանից մի ցիստերն (№ 180080) մագուրճ են ուղարկւում Արարատ կայարան. սակայն, ցիստերնը հինգ ժամ լիքը կանգնելուց յետոյ, նորից վերադառնում է Երևան:

Օգոստոսի 12ին րանուրական գնացքով Երևան կա-

յարան են բերում 12 վագոն աւազ. պարզում է, որ իւրաքանչիւր վագոնի մէջ 10 խ. մ. աւազ փոխարէն լցւած է 2 խ. մ. աւազ: Այսպիսով, վագոնները 100 տոկոսի փոխարէն 20 տոկոսով էլ չեն օգտագործուում:

Մի ուրիշ փաստ, որը նոյնպէս վնասարարութիւն կարող ենք կոչել: Երեւանի գելոլոյի № 5217 շոգեմեքենան՝ նախ քան Լենինական նորոգման գնալը՝ ամենալաւ շոգեմեքենաներից մէկն էր, բայց երբ ուղարկւեց Լենինական միջին նորոգման՝ առողջ գնաց և հիւանդ վերադարձւաւ: Մի ամիս է, որ այդ շոգեմեքենան վերադարձել է Լենինականից, բայց ինչպէս պէտք է, չի աշխատում և շարունակ վնաս է հասցնում թէ դեպոյի և թէ գնացքներէ շացուցակին: Կայարանի կազմակերպութիւնն ստիպւած եղաւ յատուկ յանձնաժողով հրահրել և քննութեան ենթարկել շոգեմեքենան. պարուել, ար Լենինականի դպարն փոխանակ վերանորոգելու, շոգեմեքենայի ստույգ մասերը համել է և № 1465 շոգեմեքենայի փշայած մասերն է դրել նրանց տեղը: Յանձնաժողովը արձանագրեց մի շարք փաստեր, որոնք շարժանութեան կնիք են կրում:

Նման փաստեր շատ կան»: («Պ. Հ.», 20 օդ.):

Այո՛, շա՛տ կան. «Եթէ մենք մի ակնարկ ձգելու լինենք վերջին ամիսների ընթացքում քրդ շրջանում տեղի ունեցած պատահարների վրա, կը տեսնենք հետեւեալ անմխիթար պատկերը. մարտ ամսին տեղի է ունեցել 24 պատահար, ապրիլին՝ 24, մայիսին՝ 28, յունիսին՝ 28, յուլիսին՝ 32, օգոստոսի 17 օրւայ ընթացքում՝ 22 գէպք»: Քննութիւնը ցոյց է տւել, որ «եղևի են դէպքեր, որ 10-12 վագոն օրերով, նոյն իսկ շարքներով, ի գործ կանգնել են: Եղևի են նաև վազոնների և կաթնասնների բաղձաթիւն փշացումներ: Այս հանգամանքն ազդել է ոչ միայն երկաթուղու պլանների կատարման վրա, այլ և հսկայական հարւած է հասցրել շինարկների պլանների կատարմանը»։ («Պ. Հ.» 5 սեպտ.):

«Շատ է իտուում և պայթար մղում և սպրանքների կորուստի դէմ (երկաթուղու վրա)... սակայն, Երեւանի կայարանում քիչ է պատահում, որ ստացւած սպրանքը լրիւ և անվնաս յանձնել իր տիրոջը»: Այսպէս, «օգոստոս 1-10 պակաս է եղել... Հայկօսպի 84 արկղ ծխախոտից պակասել է 140 կիլոգրամ: Հայարի 18 արկղ ոտնամանից պակասել 39 գոյգ: Բանկօսպի 23 արկղ ոտնամանից՝ 25 գոյգ: Հայկօսպի 12 արկղ կոնսերվից՝ 8 բանկա, 8 պարկ շաքարից՝ 24 կիլոգրամ, բանկօսպի 24 արկղ ծխախոտից՝ 27 տուփ, 16 արկղ ոտնամանից՝ 4 գոյգ, Հայկօսպի 11 արկղ ոտնամանից՝ 3 գոյգ, Կուլտայի 2 արկղ մատուխից՝ 2 կիլոգրամ, Հայարի 18 արկղ կեռօքից՝ 2 արկղ, կաշեգործարանի 46 կապոց կաշուց՝ 2 կապոց (իւրաքանչիւր կապոցը 10-12 կաշի) և այլն»:

Գողանում են:

«Պայտասակի 1 գրուժիւր և շիմաքարութեան սոպարեզով՝ թէ՛ բնակարանային և թէ՛ դպրոցական: Այսպէս, Հայկօսպի Երեւանի ազգայնաբնական բուհակարանային տարածութիւնը որոշ չափով աւելի ցածր է քաղաքի միջին նորմայից և կազմում է միմիայն 2,2 քառ. մետր... Վերջին 3 տարւում շինարարութեան փաստական կատարումը զգալիօրէն յետ է մնում հնգամեակի պլանային ենթարարութիւններից (81,5

հազար քառ. մետր փոխանակ 106,4 հազար քառ. մետրի)... Ընթացիկ տարւայ շինարարութեան ծրագրի վիճման վտանգ է սպառնում»: Բացի այդ, «գոլոսթիւն ունեցող բնակարանային ֆոնդի շահագործումը զլուսնւում է աննորմալ պայմաններում, այն մտքով, որ տնային բիւզընէն դիֆֆիլիտային է (ամսական 50-55 կոպ. ծախս մի քառակուսի մետրի վրա, 30 կոպ. հկառուտ»։ («Պ. Հ.», 27 օդ.): Մոլլա Նաթրգրդիի ստուտուրը չի՞ յիշեցնում այս «շահագործումը» — 55 կոպէկ արժող տեղը տրւում է 30 կոպէկով...

Լուսժողովը կարգադրել է ուսումնական տարին սկսել սեպտ. 10ին, իսկ «Կոտայքի դպրոցաշինարարութեան գործում հանդէս է եկել աջօպորտուներստական և նացիոնալօպորտուներստական վերաբերմունք»: Դաւա-Պարաբա, Գողթ, Գեամրեզ, Գէոյքլիսա, ձաթղւան, էյլար գիւղերի դպրոցներէ վերանորոգութիւնն ու շինութիւնը «ինքնահոսի» է մատուած:

Մարտունիի շրջանում «այս տարի ո՛չ մի դպրոցական չէնք չի կառուցւած: Կան կիսաւարտ չէնքեր և որոնք այս տարի հնարաւոր չէ վերջացնել, որովհետև ժամանակին համապատասխան ինստիւթիւր և դրամ չեն ստացւել... Լուսժողովատը խոստացել էր տալ 2 վագոն շինանիւթ, բայց մինչև հիմա ոչինչ չի ստացւած: 22 խոշոր դպրոց կարիք են գզում մեծ վերանորոգման: Անհանգուրթիւ վիճակում է գտնուում դպրոցական ինվենտարի գործը. 173 աշակերտ ունեն 20 նստարան. կան դպրոցներ, ուր անցեալ տարի երեխաները նստարանի փոխարէն նստում էին աթարների վրա»: Միսիանում դպրոցական նոր շինարարութեան համար դեռ քիչ բան է արւած: Լուրջ է նոյնպէս վերանորոգող չէնքեր և դպրոցական ինվենտարի խընդիրը»։ («Պ. Հ.», 1 սեպտ.):

«Աշտարակի շրջանում նախատեսւած էր կառուցել 9 դպրոցական նոր չէնք և վերանորոգման ենթարկել 11 դպրոցական չէնք՝ միաժամանակ պատրաստելով մեծ քանակութեամբ նստարան և գրասխտակ: Սակայն, մինչև օրս ոչ մի աշխատանք չի տարւած այդ ուղղութեամբ... Մինչդեռ 15 օրից յետոյ ուսումնական նոր տարին կը սկսուի»: Նոյնն է վիճակը և Նոր-Բայազէտի շրջանում. քաղաքի կիսակառոյց չէնքը թողնւել է անաւարտ: «Գիւղալուղ դիւղում կառուցւած նոր դպրոցական չէնքը, որ մէկ տարւայ պատմութիւն ունի, վերջին անգրեներէ և վրատ կառուցւած լինելու հետեանքով փուլ է եկել»։ («Պ. Հ.», 26 օդ.):

«Քիշեանի դաւառում դպրոցական շինարարութիւնը մասնւել է անուշադրութեան: Օգոստ. 28ից սկսւում է դպրոցական նոր տարին, սակայն, մինչև այժմ չըջանում դպրոցական չէնքերը չեն վերանորոգւում... Մի շարք գիւղերում դպրոցական նոր կառուցող չէնքերը մնացել են կիսաւարտ»...

Ամէն կողմ անփութութիւն, «ինքնահոս», թերահատարում ու քաօս, իսկ Հայաստանի Կենտրոնական ու Ժողկոմխորհը օգոստ. 2ի դէկրետով որոշել են մինչև 1932թ. վերացնել անդրազխտութիւնն ու կիսադրագիտութիւնը: Երանելի՛ մարդիկ...

Վերջերս «ինքնահոսի» է մատնւած և ազգային

իտքաբանաճուրի մեծերի ճակատը. չորս կողմից տեղի-
 կուծիկներն են հասնում հայերի «Էծածափտական շո-
 վինիզմի» մասին. արդարև փոքրամասնութիւնները ե-
 իտի վրա են ձգւած: Ախտայի շրջանի ուսու, մալա-
 կան, թուրք 10 դիւղերում շկա ոչ մի կոլտնտեսական.
 «անպամ շատ դիւղացիներ չգիտեն կոլտնտեսութեան
 նշանակութիւնն ու ստանալութիւնները»: «Շ գիւղերում
 չկան դպրոց, խրճիթ, լիկլիսան. դիւղացիները մեծ
 մասն անդրադէտ է... Բոլոր գիւղերում էլ աչք են
 ծակում հին կենցաղի սալանդակութիւններ: Կրօնամ-
 թութիւնն ուժեղ է մասնաւորապէս Դարաշիշակի —
 Սուխոյ-Ճանտանի և Ն. Ախտայի ուսու մալախանները
 մէջ... Երջ. լուսաբծինը, ինչպէս նաև Լուստողկոմա-
 տը անտարբեր վերաբերմունք են ցոյց տւել Ախտայի
 շրջանի յատկապէս թուրքական գիւղերում գլուխներ
 բացելու պրծին» («Յ. Հ.», 14 օր.):

«Ղայիանի Լեհհանքերում աշխատում են բուսական
 թւով ուսու և թուրք բանւորներ: Սակայն, պիտի ար-
 ձանաբար, որ այդ տարբեր ազգութիւնների բանու-
 րութեան մէջ կուսուրական և ինտերնացիոնալ դաս-
 տիրակիցական բաւարար աշխատանք չի տարու-
 կուսակցական և կոմիւնիստական մի շարք ընկերներ թե-
 րապահանջատու են այդ աշխատանքը և, յաճախ, իրենց
 վերաբերմունքով անտողջ տրամադրութիւններ ստեղ-
 ծում ազգային հողի վրա: Վատ վերաբերմունքի հե-
 տեանքով էր, որ Ի-Պ ուսու թողի աշխատանքը և հե-
 ոացան հանգեց» («Յ. Հ.», 22 օր.):

Նոյն երևոյթը, աւելի սուր կերպով, տիրում է Ի-
 Բասարգեշարի շրջանում. «Մօտ ժամանակներս Բա-
 սարգեշարի շրջանի Ղըլլեթիխա (Ղըրվանք) գիւղից՝
 թուրքական առանձին տնտեսութիւններ որոշում են
 տեղափոխուել Ազրբէյջան: Այդ տնտեսութիւններն Ազր-
 բէյջանի հողային օրգաններին ուղղած յայտարարու-
 թեան մէջ, խնդրելով իրենց հող յատկացնել, գրել են.
 «Ոչ ոքի վրա ոչ մի բողոք չունենք»:

«Հէնց որ այս մասին յայտնի եղաւ Բասարգեշա-
 րում, շրջկուսովն անմիջապէս յատուկ յանձնաժողով
 ուղարկեց Ղըլլեթիխա, և տեղում կատարած մանրա-
 դնին հետազոտութիւնը պարզեց, որ Ղըլլեթիխայի
 աշխատաւոր բնակչութիւնն իրաւունք ունի խոչոր բո-
 ղոքներ յարուցելու Բասարգեշարի շրջանային օրգաննե-
 րի դէմ»:

Մինչև յեղափոխութիւնը Ղըլլեթիխան բնակւած է
 եղել բացառապէս թուրքերով: Դանապետի արհաւիր-
 շակ տիրապետութեան շրջանում մաուդերիստները ճան-
 կերից ազատեց թուրքերը ստիպւած էին անցնել Ազր-
 բէյջան: Հայաստանի իտրքաբնակացումից յետոյ, երբ
 երկրում ազգային համերաշխութիւն է հաստատուում,
 զըլլեթիխայից նորից վերադառնում են իրենց հայրե-
 նի գիւղը: Սակայն, մինչև նրանց վերադարձը (1922—
 23թ.) Ղըլլեթիխայի ջրով և լաւ հողերի մի մասը
 բռնուել էր արդէն հարեան գիւղերից յայտնի քանակու-
 թիւն հաստատած հայերի կողմից: Հայրենիք վերա-
 դարձած թուրքերն իրենց յոյսը դնում են այն բանի
 վրա, որ տեղի կունենայ հողերի ճիշտ պատակարար-
 յին վերարարկում: Սակայն, այդ տեղի չի ունենում և
 շրջանային կազմակերպութիւնների աչքի առաջ հո-
 գային յանձնաժողովը, որի մէջ խցկւած են եղել հայ-

կական մասի կուլակային էլիմենտներ, հողերի այն-
 պիսի «բաժանում» են կատարում, որ Ղըլլեթիխայի
 բնակչութեան 50 տոկոսը կազմող թուրքերին հասնում
 են վատթարագոյն հողերը: Այս բանում յանցաւոր են
 շրջանային կազմակերպութիւնները, որոնք տարիներ
 շարունակ հանդիօրեմ էլ են արգելին քաղաքականու-
 թեան նման կողմից շեղումը, բայց յանցաւոր է նաև
 Ղըլլեթիխայի կոմբըլը...:

«Յօթր տարւայ րնթացում ոչ մի թուրք չի ըն-
 դունել կուսակցութեան մէջ... Ղըլլեթիխայում բոլոր
 մթերումները զխաւաւորապէս կատարել են թուրքերի
 հաւելն. այդ նպատակով թուրք միջակներին արհե-
 տականօրէն վեր են ածել «ունեւորները», իսկ ունեւոր-
 ներին՝ «կուլակները»: Յասկապէս խալտատակ կեր-
 պով են կատարել անցակ ձմրան լրացուցիչ հացա-
 մթերումները. համարեա գիւղի ամբողջ առաջարկու-
 քը՝ 335 ցննոնեք՝ իրացւած է եղել թուրք ազգաբնա-
 կութեան շրջանում: «Մթերումները» կատարել են հե-
 տեալ կերպով. «կոմունիստները» հրացաններով դի-
 րած՝ գիշերները խուզարկել են թուրքերի տները և
 գրաւած հարց վերցրել են «մթերում» համար, որի
 հետևանքով թուրքական տները մի մասը, դեռ ձմրան
 ամիսներից սկսած, ստիպւած է եղել շուկայից հաց
 գնելու, այն ժամանակ, երբ մթերման տակ չընկած
 հայկական ունեւոր տնտեսութիւնները մինչև այսօր էլ
 շուկայում վաճառում են իրենց անցեալ տարւայ հա-
 ցը...:

«Առանձին դժգոհութիւն առաջացրեց թուրք աշ-
 խատաւորութեան մէջ Ղըլլեթիխայում կազմակերպու-
 լիք պիտիներական կոլեկտիւի անդամներ համար շըր-
 վանից ուղարկւած 35 կոմպլեքս պիտիներական պէտտի
 «բաշխումը». այդ հազարուները բաշխում են մի-
 այն հայ երեխաների միջև: Ղըլլեթիխայում կար եր-
 կու մանկապարտէզ, երկուսն էլ՝ հայկական: Կոլտն-
 տեսութիւնը բաղկացած էր 16 տնտեսութիւնից, որոն-
 ցից 2 էին ազգային փոքրամասնութիւններից: Մօտ
 ժամանակներս գիւղխորհրդի նախագահ Ազարէզը յայ-
 տարարում է ժողովում. «Մթթէ կարող է թուրքերից
 կոլտնտեսական դուրս գալ. երկու թուրք կոլտնտես-
 կան ունենք, նրանք էլ պատրաստուել են թողնել կոլ-
 տնտեսութիւնը...»:

«Շրջանային ապարատի 230 աշխատողներից մի-
 միայն 28 հողի են թուրք: Եւ այդ այն ժամանակ, երբ
 ամբողջ Բասարգեշարի շրջանում թուրքերը կաղում
 են ազգաբնակչութեան 60 տոկոսը: Գիւղերի գերակշռող
 մեծամասնութեան հետ շրջանային կազմակերպութիւն-
 ների գրագրութիւնը կատարում է հայերէն, և այդ
 գրութիւնները չեն ընթերցւում անգամ գիւղի թուրք
 աշխատողների կողմից: Հայկական մանկապարտէզնե-
 րը յաճախում են 760 երեխայ, իսկ թուրքականները՝
 միայն 360: Հայ ազգաբնակչութեան մէջ կոլեկտիւա-
 ցումը կազմում է 19.5%, իսկ թուրք ազգաբնակչու-
 թեան մէջ՝ 15.5%: Կուսակազմակերպութեան մէջ հա-
 յերը կազմում են 169 հոգի, իսկ թուրքերը՝ 127»:

Այս ամենի հանդէպ բարձր իշխանութիւնները որո-
 շել են ճանդոք պատժել տեղական նացիոնալիզմն ար-
 տայալող կոնկրետ անձնատնտեսութիւններին. պատաս-
 իանատուները «անյայտալ ձեռքակալուցին, և նրանց

գործը յանձնեց դատախազին ու շրջանային վեր. յանձնագործովին: Գիւղ ուղարկելցին աշխատելու մի շարք պատասխանատու թուրք ընկերներ: Որոշեց անյապազ վերանայել հողային և հարկային հարցերը, բանալ գիւղում թուրքական մանկապարտեզ, կառուցանել գիւղխորհրդի ու խրճիթ-ընթերցարանի շէնքեր և այլն: (ՁՆ. 2. >, 31 օր. 1):

Ինչո՞վ է բացատրում այսպիսի փութկոտութիւնը:— Նրանով, որ Ազրբէջանի կոմունիստները բողոքել են Բուսարբէշարի թուրքերի նկատմամբ գործուղ անհարգութիւնները դէմ: Իսկ երբ հազարաւոր հայ գիւղացիներ խրատակեցին և անհարգութիւնից նեղած գաղթում են Ազրբէջան, թուրքեստան, Հիւսիսային Կովկաս, Ինչ են անում հայ բուլեիկ իշխանատուները. մատը մատի խիտ՞ում են...

«Ինքնահոսի», «անհանդուրժելի» ու «խայտառակ» երկույթները ուրիշ բազմաթիւ օրինակներ էլ կարելի է առաջ բերել Հայաստանի տնտեսութեան բոլոր ճիւղերից, բայց, մասնաւոր, գիւղի հաւաքական և խորհրդային տնտեսութեան կամ կօօպերացիայի ընագաւառից. ցանքսերը խեղդում են «մոլախոտի» մէջ, հրձուած խոր փշանում է, անասունները կոտորում են անինամութիւնից, տրակտորներն ու հնձորու մեքենաները վարչւում ու դէն են շարուում, ապրանքները փութում ու որդնոտում են — բացարձակ անտէրութիւն: Բայց մեր յօդուածը շատ երկարեց, և արդէն տրած փաստերն էլ աւելի քան բաւական են ցոյց տալու համար, թէ «սոցիալիստի կառուցման» անունով սողովրդական տնտեսութեան Ինչ անք է տեղի ունենում խորհրդային իշխանութեան տակ: Վերջացնենք հետեւի մէկ արդարակոչ փաստով:

Օգոստոս 27 «հրամանով» հանրապետական արտակարգ լրագոր Գուրյանքը» հանդարձ է հնչեցնում և ստաշարկում է «ամենաճճական միջոցներ, այլեզործութեան մշակումն ու դարգացումը ապահովելու համար»: Գուրյանքը խտովանում է, որ «տեղերում կատարած հետազոտումները ցոյց են տալիս, որ խաղողի այգիների մշակութիւնն անինամ փիճակում է, մոլախոտերով ծածկման են ամբողջ ալիքները, պայքարը վնասատուների դէմ տարւում է չափազանց անբաւարար, ժողկոմխորհի այդ առթիւ հրատարակած որոշումը չի կիրառւում և, առհասարակ, այդ ամբողջ աշխատանքները մատնւած են ինքնահոսի»։ (ՁՆ. 2. > 27 օր. 1):

Նոյն օրւայ ձորհրդ. Հայաստան»ում տպւած է «Փրկել Այգեգործութիւնը» վերնագրով մի յօդուած, որից, իսկայէւ, «ճարտու. մագերը բիզբից են կանգնում»: Հայաստանի այգեգործութիւնը հոգեվարքի մէջ է: Հայկենտգործկոմի պաշտօնաթերթը գրում է.

«Մեր երկրի գիւղատնտեսութեան մէջ այգեգործութեան դերը չափազանց խուրճ է: Այս տարւայ փաճառքի նորմալ գնրով նրա արտադրանքի արժէքը, վերաձակւած փիճակում, սողովրդական տնտեսութեանը կարող է մասի մի քանի մասնակ միլիոն բուրդու եկամուտ, ըստ որում միայն պետական բիւջէին մօտ 6-8 միլիոն եկամուտ, որոն այնքան անհրաժեշտ է երկրի ինդուստրիալիզմի և գիւղի սոցիալիստական վերակառուցման համար:

«Քրում է, որ այս պերճախօս թւերը միանշամայն բաւական են լինի գնահատականը տարւ մասնաւորապէս մեր խաղողագործութեանը»: Բայց «այսօր այլեզործութիւնն ամենախախտի պլանն է դաւել: Վերականգնման շրջանը չի կերպ աւարտուել յետոյ, նրա դարգացումը բոլորովին կանգ է առել, իսկ վերջերս էլ, ընդհակառակը, ջալքսթան նաններ են երևում. այլ կերպ չի կարելի որակել նրա սայօրւայ փիճակը:

«Անցեալ տարի խաղողի միջին բերքը մէկ հեկտարից եղել է 82.5 ցենտներ, իսկ առ 15ն օգոստ. եղած տեւայներով Պետականի էքսպերտ յանձնագործը այս տարւայ բերքը որոշել է մօտ 50 ցենտներ, ըստ որում խաղողագործութեան հիմնական շրջանում՝ Ղամարուում — 45 ցենտներ, Երևանում — 40 ցենտներ: Հայաստանի համար աւելի ցածր բերք չի կարելի երեակայիլ...

«Ինչո՞վ բացատրել այս: Դրա պատճառը պէտք է որոնել այն յանցագործութեան համող անդրոյթի և ուղղակի օպորտունիստական վերաբերումների մէջ, որ այստարերել են ստաշին հերթին տեղական և ապա նաև կենտրոնական շահագրգրուած մարմիններն ու կազմակերպութիւնները դէպի գիւղատնտեսութեան այս վարերը ճիւղի սպասարկումը: Դեռ ևս անցեալ տարի և այս գարնան արձանագրել են այգիները շարամօտէն շմշակելու բազմաթիւ դէպքեր (չեն թաղել, չեն փորել, գիշարել ձեւով են էտել և այլն): Այս յանցագործութեան համար ոչ ոք պատասխանատուութեան չի կանչւել, թէ՛ և պարզ էր, որ այդ բոլորը դատաւարական ինչնամու պարտկալիքներն, աղիտացիայի արգիւնք է: Այգիների մեծ մասում մինչև այժմ գրեթէ ոչ մի աշխատանք չի կատարւել:

«Առանձնապէս փառ է գրութիւնը Ղամարուի շրջանի այգիներում: Այստեղ այգիները չեն մաքրել մոլախոտերից, այդու ամենաոտերիմ թնշամին — դաղձը (կուսկուտա) բունէ է բոլոր այգիները և քայլ առ քայլ, ամենակատաղի յամատութեամբ ծծում է խաղողի վաղի «արեան» վերջին կաթիլները: Մարդու մաղբը բիզբից են կանգնում, երբ տեսնում է, ինչպէս հազարամեայ պատմութիւն ունեցող թանկարժէք կուլտուրան, շնորհի միայն և միայն տեղական կազմակերպութիւնների անհակացողութեան, ուղղակի վնասարարութեան հանող անտարբերութեան և գիտակից կոլտնտեսականների ու շքութիւնի կարգից այգեգործների առաջարած ձեռնարկումները չկիրառուել — քայլքալւում է: Տեղական կազմակերպութիւնները չկարողացան գործավարձի լայն կիրառումով այնպէս կազմակերպել աշխատանքները, որ բարձրի հետ միայն անպայման մշակւեն և այգիները: Նրանք ըստ երևույթին կարծում են, որ կուսակցութիւնը պահանջելով մտրիլիզացիայի ենթակից մասաներին բամբակի համար մղուղ պայքարի շուրջը, ատում է՝ միանշամայն անուշաղորութեան մատնեց այգեգործութիւնը...

«Չարեքը փորը կը լինէր, եթէ ինքը միայն Ղամարուի շրջանին վերաբերէր: Գրեթէ նոյն վիճակի է տիրում նաև Վարդարշապատի ու Աղտարակի շրջաններում: Արդարաւայու ոչ մի հոմէ չունեն մասնաւոր Աղտարակի ընկերները, որտեղ խաղողը միակ կուլտուրան է և բամբակը մէջ բերելու մասին իօսք անկամ չի կարող լինել: Նրանք ուղղակի չկարողացան գիտարել այս աշխատանքները, ոտքի հանել մասաներին կուսակային պրոդուկացիայի ու ոտնձգութիւնների դէմ, ընկճել նրա վերջին մահամբձը գիմարուի մասին տնտեսական պայքարի ճակատում և դրանով իսկ ապահովել այգիների մշակումն ու բուժումը, բարձր բերքատուութիւնը և դրա հիման վրա այգեգործութեան հետագայ արագ կոլեկտիւացումը:

«Քանն այն տեղն է հանում, որ կոլեկտիւները մէկի վարչութեան նախապէս յայտարարւում է.— «Որտեղ անմշակ և առանց բուժելու այգի կը տեսնէ՛,

ինացէք, որ դա կոյտոգինն է» (Փարսաք) : Եւ այսպիսի մարդիկ կոյտոգինն են դիւաւարում...
 «Մարդիկ չեն հասկանում, որ ԼՅԷ կարտոֆիլին սպառնացող ահեղի վտանգը (մի քանի շրջաններում ցանքերն ամբողջապէս վարակւած են հիւանդութեամբ) կարող է ոչնչացնել կարտոֆիլի այս տարւայ բերքը,

այսպ այդիների ներկայ վիճակը, ԼՅԷ այն չփոխենք, կը զրկենք խաղողի բերքից 3-4 տարի, անընդհատ, որովհետեւ վայրն ուժասպառ կը լինեն» :

Այսպէս է «կառուցում» սոցիալիզմը Հայաստանում...

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

Ա. ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերջերս խորիւրդ Միութեան սահմաններից դուրս եկած լաւատեղեակ մի անձնաւորութիւն հարորդում է մեզ հետեւեալ տեղեկութիւնները, որոնք հաստատուում են և ուրիշ աղբիւրներից : ԽՄԲ.

Ես բանտարկւել եմ 1930թ. դեկտեմբերին, Երևանում : Ինձ մեղադրում էին, որ ես երկաթուղւոյ չինարարական բանւորների մէջ հակախորհրդային ազիտացիա և կազմակերպչական աշխատք եմ տանում յօգուտ Գաշնակցութեան և գինեւծ կուռում եմ կոլտոգ շարժման դէմ : Գէպէտուամ իմ առջև գրին մի հարցացուցակ բազմաթիւ հարցումներով և ամիսներ շարունակ աշխատում էին ստանալ նրանց պատասխանը : Տեսնելով, որ յարուցած մեղադրանքները իմ կողմից չեն իւրացւում, յուլիսին, գործը ինձ հետ միասին՝ ուղարկեցին Թիֆլիս Ձաղէպէտի տրամադրութեան տակ : Երեւանի բանտում նստած էին շուրջ 300 հոգի, որոնք օրը օրին սպասում էին իրենց վճռին Սիրիբ գնալու համար : Նրանք մեղադրւում էին իբր ազիտատորներ և կազմակերպիչներ : Բոլորն էլ ձերբակալւած էին 1930 թվի ապրիլ-դեկտեմբեր ամիսներին : Մի քանիսը միայն ձերբակալւել էին 1931թ. մայիս 5ին : Բռնւածներից մի քանիսին Գէպէտուն առաջարկել էր լրտեսական աշխատանք կատարել Հասարակութեան մէջ և, մասնաւորապէս, դաշնակցականների մասին տեղեկութիւն տալ : Ամէնքն էլ պատասխանել էին մերժումով :

Բոլոր բանտարկւածների առջև դնում են ընդարձակ վիճակացոյց-հարցարան, որը պէտք է լեցնել : Հարցարանում, ի մէջ այլոց, կային այսպիսի կէտեր.

1. Ո՞րտեղից և ե՞րբ էք եկել Խորհրդ. Միութիւնը (ԼՅԷ տեղացի չէք) :
2. Ի՞նչ կուսակցութեան էք պատկանել անցելու :
3. Որտե՞ղ էք եղել մինչև 1914թ., այսպէս ինչ յետոյ մինչև 1917թ., ինչո՞վ էք գրաւուել : 1921թ. խորհրդայնացման օրից սկսած ի՞նչ պաշտօններ էք վարել և ո՞րտեղ :
4. Ձեր ծանօթներից և բարեկամներից ովքե՞ր կան արտասահմանում, ի՞նչ են ձեր յարաբերութիւնները նրանց հետ :
5. Ներկայացրէ՛ք ցուցակը ձեր Գաշնակցութեան միութեան :
6. Ձեր պաշտօնը վարելիս ինչպիսի՞ վնասներ էք

հասցրել Խորհրդ. Միութեան :

7. Ինչպէ՞ս և ո՞ւմ ժամադրութեամբ գէնք էք ձեռք բերել :

8. Ո՞ր կամաւորական խմբումն էք եղել, և այլն, և այլն :

Պատասխանը պէտք է գրել հանդամանօրէն և ամենայն ճշտութեամբ :

Սկզբի օրանից մինչև օրս Հայաստանից սքսորւած են գանազան վայրեր մօտ 10,000 հոգի, որոնցից 75 տոկոսը մեղադրւում է դաշնակցական լինելու մէջ : ամբողջ Խորհրդ. Միութեան մէջ սքսորականների թիւը միլիոններով է հաշււում : 1931թ. յունւար ամսից մինչև յունիս ամիսը համարակալւած և սքսորւած են Թիֆլիսի Մետեխից և բանտից 5300 հոգի, բացի այն մի քանի հազար բանտարկալներից, որոնք, առանց համարի, ուղարկւել են կոլտոգներում ձրի աշխատելու :

Բանտարկւածներին տալիս են օրական մէկ ու ջարդը Փոշուտ հում, ցելիի նման հաց և մի արկէ խաւած ձուար կամ մակարոնի, երբեմն էլ սեւ գարուց ապուր, շատ քիչ ձէթ մէջը : Չուր չլինելու դէպքում բանտարկալներին տալիս են շէշը 60 կողպէտով սիտոք : Իւրաքանչիւր խցում սպրում են 45ից մինչև 135 բանտարկալներ : Քրէակալնա յանցաւորները աւելի ազատ են. սովորական երևոյթ է, որ քրէակալները ծեծուում են քաղաքական բանտարկալներին. պատիժ չկայ : Առհասարակ, ծեծը խորհրդային բանտերում սովորական բան է :

Վերջերս գինւորութեան մէջ էլ է ցեց ընկել : Օր չէր անցնում, որ Մետեխ չբերէին 10-15 հոգի գինւորականներ, բոլորն էլ մեղադրւում էին հակախորհրդային կազմակերպութեան և ազիտացիայի մէջ :

Հայաստանից յետոյ, գանաւածային ձերբակալութիւններ են սկսւել Կախիթու շրջանում, վրացիներէ մէջ, Սուխումի շրջանում, որտեղ պատամբուել են չեն ուզում կատարել իշխանութեան հրահանգները : Օրական 75-100 հոգի ձերբակալւում և Մետեխ էին բերուում Կուրանի շրջանի ուսանելից, որոնց իրենց տեղերից աքսորել էին Անդրկովկաս. այժմ ձերբակալւում և շարաթական 3-500 հոգի պահակով ուղարկւում էին կոլտոգները աշխատելու :

Ձախ թեքումը Կոմկուսակցութեան մէջ ծնունդ առ-

նելուց ի վեր զհեղացիութիւնը ամէն կերպ աշխատում է խանդարել կառավարութեան գործունէութեան և գարկ տալ թէ ինչ, որովհետեւ իր փրկութիւնը տեսնում է առջեւերի յաղթանակի մէջ. «առջեւեր զհեղացիութեան աւելի մօտ են համարւում: Բանւորներն ամէն տեղ համոզւած են, որ իրենք խաբւած են, և հէնց այդ

է զլիաւոր պատճառը, որ դանազան գործարաններում և հիմնարկներում ծնունդ են առել զործաւրջում, սառն վերաբերմունք, անտարբերութիւն, վնասարարութիւն, սպրանքի որակ փչացնել և այլն: Գնացնուն լարում է իր բոլոր ուժերը զբանջ դէմ կուելու համար, բայց անգոր է...

Բ. ԱՎԱՆԱՏԵՍ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՊԱՏՄԱԾՆԵՐԻՑ

Վերջերս Հայաստանից արտասահման է անցել մի երիտասարդ, որ մեր քրթրակցիին հաղադել է հետևեալ տեղեկութիւնները: Առաջ եմք բերում անհոփոխ:

ԽՄԲ.

..... Սեպտեմբեր 5.

Նախ քան բուհիկները Կովկասում երևալը, մեր բնութանը ամբողջովին տարւած էր Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեամբ: Հայրս ու եղբայրներս գործուն աշխատանքներ էին կատարում մեր շրջանում: Չունայած որ այդ օրերին ես փոքր էի, բայց միշտ էլ մեր տան եղած գրոյցներին ուշադրութեամբ կը հետևէի, իսկ երբ դիւնւած մտքովի կը զայն մեր սրտն, ուրախութեան չափ ու սահման չէր լինի. միշտ նրանց գէնքերի շուրջ կը պտտէի:

Համալսարանային պատերազմի ժամանակ հայրս, որպէս դիւնուորակն, դնաց Բերսու-Լիտովսկի ծառայութեան: Ժամանակաւոր կառավարութեան ընկնելուց յետոյ, երկրագործութեամբ էր զբաղւում: Երբ բուհիկները մտան Հայաստան, առաջին հերթին հօրս աքսորեցին Սիբիր, ուր երկու տարի մնալուց յետոյ՝ մասացաւ: 1927ին երկու եղբայրներին, որպէս հակաինգլիսականի որդիներ, աքսորեցին Հիւսիսային Կովկաս: Մեծ եղբորս այնտեղից չեղցին Սիբիր, ուր և մշնում է մինչև օրս, իսկ միջնակ եղբորս վերադարձրին. նա է այժմ պահուած մեր ընտանիքը:

Մեր ընտանիքի հոգիներն ու դաժման չեկիտաների արարքները ինձ զազան էին դարձրել. անվերջ մտածում էի որևէ կերպով վրէժխնդիր լինել:

1929 թվականին, դպրոցում եղած ժամանակս, իմ շուրջս հաւաքեցի ինձ նման մտածողներից չորս ուսանողներ և փոքրիկ իմասկ կազմելով կամպագիւմայ մեր թիւը հասցրինք 25ի: Գոչւում էինք Դաշ-Երիտասարդներ (դաշնակցական երիտասարդներ):

Մեր աշխխտանքը այն էր, որ մեր ժողովներում զննադատում էինք կառավարութեան գործունէութիւնը, թէ Կոմունիստական Կուսակցութեան գործնակեղբուր ո՞ր պէտք է հասցնի հայ ժողովուրդը: Ապա իւրաքանչիւրս աշխատում էր զբոսում տեղեկութիւններ հաւաքել Դաշնակցութեան անցեալ գործունէութիւնից և տեղեկացնել մեր իմբակներին: Այնտեղ ենք Դաշնակցութեան փրկարեւորող դրականութիւնը անդ բերել, բայց չի յարդուել: Ձրապէս ենք նաև անտեսակալ դրականութեամբ. կարգադէլ ենք Պլեխանովի և Մարքսի գործերը և ուրիշ հասարակագիտական գրքեր:

Պէտք է ստեճ որ Դաշնակցութիւնը նրկում շատ մեծ համակրանք ունի ժողովրդի մէջ. իսկ այդ համակրանքը հայ չեկիտաները չեն կարողանում հանդուր-

ժել և անվերջ սուտ ու չինծու մեղադրանքներ ստեղծելով, ձերբակալում են իրենց աչքում կասկածելի երևացող մարդկանց:

Նրկի տեսնական վիճակը ստիպել է. հնգամալ ծրարիքը իրագործելու և յանուն կոլեկտիւացման, երկրի մի ծալից միւսը, անքում է բանտարկութիւններ, աքսորանքներ, գրկանքներ ու հալածանքների տակ: Կարելի է սակ, որ Հայաստանի աղղարնախութեան 50%ը մեռած վիճակում է ապրում, իսկ մնացածը մի կերպ քարշ է գալիս, կամ աւելի ճիշտ, սողում է չեկիտաների ոտքերի տակ:

Վերջերս գրկւելուց քաց արին փոքր, որպէսզի քաղաքներ նման գիւղացիներին էլ չեկերով հաց տան: Բաղաքներում իւրաքանչիւր շնչին մէկ Ֆունտի չափ սև հաց է տրւում, իսկ բանտներին՝ 2 Ֆունտի չափ, այն էլ այնպիսի սև հաց, որ շունն անգամ չի ուտի: Շաքարը արւում է երկու ամիսը մէկ անգամ և հաղիւ 15 օրւայ է բաւակահանում. շաքարի կիլօն ծախում են 75 կոպէկով: Վերջերս մեծ քանակութեամբ բերեց, սակայն կիլօն 3 բուրլի 50 կոպէկով ծախեցին: Նոյն վիճակի մէջ են միւս անհրաժեշտ կենսամթերքները:

Տիրող պայմաններն ու հալածանքները ամէն կողմ դուրս է բերում կառավարութեան ղէմ ըմբռանքներ, որոնք գէնքերը ձեւերին՝ բարձրանում են լեռները և կուում իշխանութեան ղէմ: Այդպիսի խռովութիւններ այժմ կան Աշտարակում, Ալազեաղում, Բաշ-Արարանում, Նոր-Բայազետում, Դարալագեաղում, Չանգիբասարում, Չանգիգուրում, և ուրիշ շրջաններում:

Առհասարակ, խորհրդային իշխանութիւնը անպատմութիւնների ժամանակ, թոյլ չի տալիս իրենց թերթերում այդ ուղղութեամբ որևէ բան գրելու. միայն միտինդներ է դուռարում և հարայ-հրոց ձգում, որ բացողները այս ինչ շրջանում նորէն գլուխ են բարձրացրել և այլն: Երբեմն էլ մահազոյներից իմացւում է, որ բանդիտները այս կամ այն պատասխանատու կոմունիստին են սպանել: Բացի ապստամբներից, շատ յաճախ է պատահում, որ իրենց կոմունիստների մէջ էլ կոլիանք են տեղի ունենում. նման դէպք պատահել է Նոր-Բայազետի շրջանում:

Մեծ դէպքեր են տեղի ունեցել նաև Վրաստանում ու Ադրբէյջանում: Խօսւում էր, որ Վրաստանում բացւել է մենչեկեական դաւադրութիւն:

Առանձին պրոպագանդի նիւթ են դարձրել քրդական կոլիանքը. ամէն կողմ խօսում և գրում են, որ դաշնակցականները քրդերի հետ միացած՝ խորհրդային իշխանութեան ղէմ պատերազմ են պատրաստում:

Մ Ե Ր Զ Ո Ն Ե Ր Ը



ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐՊԷՏԵՐԵԱՆ
(Տես «Դրօշակ» 1931թ. № 7-8)

Մ Ա Ր Ը

Յունիս 21 «Ռորհրդ. Հայաստան» ի մահազդի բաժնում կարգում ենք. «Մասնիկեանի անուան մանկավարժական կոմբինատի վարչութիւնը, կոյնկտիւը, ուսանողութիւնը, արհկոմը և ԿՅՅԵՄ բջիջը խոր վշտով յայտնում են կոմբինատի դասատու՝ Միխայէլ Տէր-Մարտիրոսեանի (Մար) մահը, որ տեղի ունեցաւ ս.թ. յունիս 19ին: Թաղումը ամսոյս 21ին, երեկոյեան ժամը 4ին»: Եւ քիչ յետոյ՝ ընտանիքի և սրբականներէ երկու մահազդ:

Այսքան միայն: Եւ ո՛չ մի արտայայտութիւն, վըրտի ու համակրանքի ո՛չ մի ցոյց Մարի դաղափարակիցներէ և իսկական ընկերներէ ու բարեկամներէ կողմէ: Երեւանի մամուլում՝ ո՛չ մի տող նրա կեանքի ու գործի մասին: «Ամսոյս 21 ին, երեկոյեան ժամը 4ին, տարիւ թաղել են «մանկավարժական կոմբինատի դասատու» Միքայէլ Տէր-Մարտիրոսեանին — վերջացաւ զնաց...»

Մեզ համար, սակայն, Մարը միայն դասատու չէր: Նրա անունը անխցելի կապերով կապւած է հայ յեղափոխական շարժման և, մասնաւորապէս, Հ. Յ. Դաւ-

նակցութեան գործունէութեան յուզումնալից շրջանների հետ: Մարը դաշնակցական մտաւարականութեան տիպար դէմքերից մէկն էր, ապրեց, աքնեց ու տառապեց և զերեզման իջաւ Դաշնակցութեան դաղափարը սրտում:

Վաղ պատանեկութիւնից նա արդէն դաշնակցական էր: Ե՛ւ միջավայրը, և՛ ընտանեկան շրջապատը նրան մղում էին դէպի հասարակական գործունէութիւն: Մնւած Նոր-Բայազետում, ուսած թեմական դպրոցում, զբաղումով դասատու ազգային դպրոցներում, իր եղբայրները՝ ծանօթ հասարակական գործիչներ Երեւանում, ապրելով ու շնչելով ինքնական թւականների ազգային-յեղափոխական տաք մթնոլորտում, բնաւորութեամբ դիւրահաղորդ, հարցասէր, խանդավաւուող, անկեղծ ու շիտակ նկարագրի տէր՝ Մարը չէր կարող չուսարել Դաշնակցութեան դաղափարներով և շուտով դարձաւ նրա ներկւած ու եռանդուն գործիչներից մէկը:

Դժբախտաբար, մեզ պակասում են նրա հետաքրքրական կեանքի մանրամասնութիւնները: Նա մէկն էր այն ընկերներից, որոնք, Զուարեանի, Վարդանի և ուրիշների պէս, կուսակցութեան որոշումով անցան Կիւրիկիա՝ ուսումնասիրական և կազմակերպական նպա-

տակներով: Մարը երկիր մտաւ բուլղարական անցագրով, իբրև շրջուն նազաճու: Պատում էր տեղեց տեղ, նազալով սպրուտ էր հայթաթում և միաժամանակ ծանօթանում էր երկրի պայմաններին, ժողովրդի վիճակներ, յարաբերութիւններ էր ստեղծում, կերներ հետ: Այս գործունէութիւնը, սակայն, երկար չտեսեց. շուտով ձերբակալեց և, իբրև յեղափոխական, դատապարտեց բանտարկութեան: Թէ ջննիչի առջև, թէ՛ դատի ժամանակ և թէ բանտում, մինչև վերջ, Մարը մերժեց իր հայ և յեղափոխական լինելը: պնդեց, թէ բուլղար է: Եւ այնուհետև, 6-7 տարի բանտում, ո՛չ մի բառ չխօսեց հայերէն և ո՛չ մի հայի չներկայացաւ իբրև ազգակից: Կարելի է երևակայել, թէ ի՞նչ տաժանելի կեանք էր բանտային այդ կեանքը: Դրան ընկերների թափած երկար ու հոգեմաշ քանքերից յետոյ, բուլղարական կառավարութեան յանդուրեց ազատել իր «չպատակ» թիրաբական դժոխքից ու հանել արտասահման:

Այնուհետև Մարը մի քանի տարի մնաց Ժընև, ուսանելով մանկավարժութիւն և զործակեցելով «Դրօշակ» խմբագրութեան: «Դրօշակ»ում հրատարակեց իր բանաստեղծական յօւնքերը, որոնք յետոյ լոյս տեսան առանձին գրքոյով՝ «Թիրաբերոյ բանտերէն»:

Օրը. Մամանադութիւնից յետոյ, Մարը անցաւ Պոլիս, իբրև վարիչ-դաստառու Սիլիւստարի ճեմարանի: Միաժամանակ աշխատակցում էր «Ազատամարտ»ին և մասնակցում կուսակցական կեանքին: Պատերազմից առաջ արդէն Կովկասում էր, Բաղում, ուր կուլեց կարեւոր ուսուցչական պաշտօններ: Հայաստանի Հանրապետութեան ստեղծումից յետոյ, տեղափոխեց Երևան, ուր և մնաց մինչև մահ: Անկախութեան օրերին աշխատում էր դպրոցական և կուսակցական ասպարէզում: Խորհրդակցացումից յետոյ, որը ընդմիջումսնորով, վարեց ուսուցչական պաշտօններ: Հակառակ նրա թական ծանր դրկանքների և ստեղծած հոգևայան, անհանդուրժելի պայմանների՝ Մարը մինչև մահ էլ չկորցրեց մտքի արելութիւնն ու պայծառատեսութիւնը, մնաց անաղարտ իղէպլիստ, արդարութեան, պատուութեան ու ժողովրդապետութեան սկզբունքներ յայթանակին հաւատացող և այդ համոզումներով էլ իջաւ դերակցման: Իջաւ գերեզման, արտաքինով որպէս «կոմբինատի դաստառու», բայց հողով՝ հաւատացեալ դաշնակցական մտաւորական...

Ս. Վ.

ՄԱՇՈՒՆ ԽԷՅՕ
(ՅՈՒՆՇԵՐ ԱՆՅԵԱԼԻՑ)

Մաժուն Ուէջուն յայտնի էր և Չարազար Ուէջօ անունով: Նրա իսկական անունը Գրիգոր Միրզաբէգեան էր: 1909—1912 թւականներն էին, երբ Ռուսաստանի բանակապետութեան յորձանքը Պարսկաստան էլ հասնելով՝ աշխատում էր սաղմի մէջ խեղճել պարսկական մանուկ յեղափոխութիւնն էլ, որը եփերմի գերմարզկային ջանքերով, Գաջարական գահի աւերակների վրա ճգնում էր ամբացնել Պարսկաստանի Մահմանադրութիւնը:

Ռուսական բանակը Թաւրիզի և Ռաշտի վրայով մտաւ Հիւսիսային Պարսկաստան: Ու շուրհներ տարածեցին, որ պիտի ձերբակալեն Պարսկաստանի սահմանադրական կոնիւներին մասնակցող գործիչները:

1912 թի դեկտեմբեր ամիսն էր: Մի խումբ բնիկներ, փողոցում կանգնած խօսում էինք օրւայ անց ու դարձի մասին, Երբ անցնող ոտու կողակներին մեկ ծանօթ մէկը ձին մտրակելով՝ մօտեցաւ մեզ և հարկւ յսելի ձայնով սասց՝ «Հեռացէ՛ք այտոտից»: Հեռացանք և մի յարմար տեղ կանգնեցինք: Յանկարծ, լուեց հրացանի մի պայթում, որին արձադանդեցին համագարկեր: Կասկածից դուրս էր, որ ինչ որ լուրջ բան էր պատրաստուում: Հէյց նոյն օրն իսկ Հիւսիսային Պարսկաստանի բոլոր մասերում ձերբակալեցին և կախաղան հանեցին ասպարէզի վրա մնացած յեղափոխականները:

Ռաշտի ուսուական Հիւպատոսարանին մօտ ծանօթ եղողներից մէկը մեզ զգուշացրեց, որ թողնե՛ք քաղաքը՝ չձերբակալելու համար: Երեք օր պահակցիւք սներում և, ի վերջոյ, որոշեցինք ցրել կանաղան ուղղութեամբ:

Երեք հողով՝ Մարտիրոս վարժապետը, Մաժուն Ուէջուն և տողներս դրողը, — որոշեցինք անցնել Թաւրիզ թուրքի անտաններ, իբրև ամենալու պահակու վայր, մանաւանդ որ, այնտեղ ունէինք վատահելի ծանօթ պարսիկներ:

Մարտիրոս վարժապետի հետ վաղուց ծանօթ էինք: Իբրև քաղաքական յանցաւոր, նա արտուած էր Սիրիբ, որտեղից՝ փակել-եկել էր Պարսկաստան, Ղարազաղի գծով:

Յոգնած ու ջարդամած՝ իլեկանցիւք անտառի մէջ սպրող մի պարսիկի խրճիթում. քայլել էինք գիւշերցերեկ և երկու օրւայ ճամբան անցել մէկ օրում: Շատ դձալի էր, մանաւանդ՝ Մարտիրոս վարժապետի յոյնածութիւնը. պարկած խոտէ անկողնի վրա՝ ինքն իրեն խօսում էր և անիթը կրկնում. «Այն, յեղափոխութիւն, յեղափոխութիւն, քո տունը չքանալի: Սիրիբի անտաններէքներից պատուելով հասանք Պարսկաստանի աղատ երկիրը, յաւտել էլ հանդիտ լծողիբ մեզ»...

Այս թագստոցում մնացինք ամբողջ 45 օր: Մեր ժամանակը անց էինք կացնում պատմութիւններով ու զարճակընքերով: Մի օր խնդրեցինք Ուէջոյին որ պատմի իր կեանքից, Չարամնալի է. շատախօս, դարթ և ուրբա մարդ էր, քայց շատ զիչ էր խօսում իր մասին, շէր սիրում խօսել իր անձի մասին: Այս անգամ, սակայն, մեր թախանձանքները պսակեցին յանդուրժեամբ: Նա պատմեց հետեւեալը. «Ղարաբաղի վարանդա դաւառի փիղջմալ դիւղիցն եմ. ծնողներս ունեցել են բարեկեցիկ վիճակ. ևս եղել եմ նրանց միակ արու գաւակը: Նախնական կրթութիւնս ստացել եմ մեր գիւղի դպրոցում, որից յետոյ անցել եմ Շուշիի թեմական դպրոցը, ուր մնացել եմ մինչև 20 տարեկան հասակը: «Այդ ժամանակները Շուշիում սպել էր կազմակերպւել Հ. Յ. Դաշնակցութիւնը. պարտասուում էր Սեւ Քարեցի Սաքոյի, վարդանի ու Դուսանի ղեկավարութեամբ 25 հոգիների մի խումբ՝ երկիր անցնելու նպատակով: Ես ևս ծանօթացայ նրանց հետ ու մտայ նրանց շարքեր 1894ին: A.R.A.R.©

«Շուտով մեկնեցինք Պարսկաստան: Գիշերայ ժամը 2ին մեր խումբը մտնեցաւ Արաքսին: ԽուզաՔերին կամուրջի ծովով անցանք Ղարաղաղ և լուսադէմին հասանք Քեան զաւառի Բերդ գիւղի մօտ գտնւած մետաքսի դործարանը, որի տէրը հայ էր Պօղոս անունով: Այստեղ էլ իջևանեցինք: Պօղոսը մեզ շատ սիրով ընդունեց և հարկ եղած միջոցները ձեռք առաւ, որպէսզի կառավարութիւնը չիմանայ:

Այստեղ երկար շնացինք: Երկու օրից յետոյ ճամբայ ընկանք դէպի Թաւրիզ և երրորդ օրը լուսարացին հասանք: Թաւրիզում իմացանք, որ Բերդի գիւղապետի մատուցեամբ կառավարութիւնը ձերբակալել է Պօղոսին ու պահանջել 25 յեղափոխականներին, բայց նա 4000 դրան տուաւնք տալով՝ ազատել էր: Այդ առթիւ Թաւրիզի Ձիւորական Մարմինը որոշել էր պատժել գիւղապետին, բայց Պօղոսի խնդրանք չըպատժեց:

«Թաւրիզում մենք լծեցինք աշխատանքի. շուտով երեք ընկերներով մեկնեցինք Կովկաս գէնք փոխադրելու համար: Կրկին վերադարձանք Թաւրիզ՝ մեզ հետ բերելով ուղղամթերք, որը տեղափոխեցինք կենտրոն՝ Մարմաստ: Այսպէս, մենք սկսեցինք գրադուել փոխադրակամ գործով, որպէս զինակիր խումբ: Մի անգամ Թաւրիզից անցանք Երեան՝ գէնք բերելու նպատակով: Այստեղ մենք հաստատուեցինք քաղաքի շրջակայքը զբտնւած աղբիներում: Քաղաքից էջերով գէնք էինք տեղափոխուած աղբիները, որտեղից ձերբով բերում էինք Մարմաստ: Բազմաթիւ պատահարներէրց յիշատակեմ միայն մի դէպք. ուղղամթերքը լցնում էինք զամբիւղների մէջ, երեքը աւելցնում ծիրան, իսկ ես գիւղացու հագուստով, էջերն առջևս գցած, ջրում էի դէպի գիւղ՝ ճամբին «լաւ ծիրան», «լաւ ծիրան» կանչելով: Մի անգամ մի խանութպան մօտեցաւ և կամեցաւ ծիրանները գնել. ես առարկեցի թէ բռններն ծախւած են և միայն ձեռքիս կապոցն եմ ծախում: Սկսեցինք վիճել ու աղմուկել, երբ ինձ հետեղ ընկերներս վրա հասան և ինձ ազատեցին փորձանքից:

«Այսպէս մնացի մինչև 1896 թիւը և ստացայ «Ջարվադար Ուէջօ» մականունը: Ես շատ էի սիրում մածուն ուտել. ուր որ հասնում էինք՝ մածուն էի պահանջում: Մի օր Սաջօն կատակով ասաց. «Ի՞նչ է, մածունի՞ց ես շինւած, որ այդքան մածուն ես ուտում: Այսուհետև քեզ Մածուն Ուէջօ պիտի կոչենք»: Այդպէս էլ եղաւ. անունս մնաց Մածուն Ուէջօ:

«1897 թ.ին մասնակցեցի Խանասորի արշաւանքին, որից յետոյ, պարսից կառավարութեան հարձանքի հետևանքով, երեք ընկերով անցանք Կովկաս: Ես հաստատուեցի Բազում»:

Այստեղ էլ վերջացրեց Ուէջօն իր պատմութիւնը: Ուշ գիշեր էր. բոլորս մտանք քուն: Լուսարացին Ուէջօն քի «Առաւօտ Լուսոյ» երգով արթնացրեց մեզ: Մարտիրոս վարժապետը շատ էր նեղուած փախւած կենքիցի:

Ուէջօյի հետ վաղուց էի ծանօթ: Առաջին անգամ նրան հանդիպեցի 1896 թ.ի սկիզբները, Ղարաղաղում, երբ Եփրեմը Թաւրիզի գերեզմանատանը՝ նշանառութեան փորձերի ժամանակ սպանել էր մի պարսիկի և

այսպեստան էր գտել Ղարաղաղում՝ Ուէջօյի հետ միասին:

Թաւրիզում՝ Եփրեմի փոխարէն կառավարութիւնը ձերբակալեց մեր զինագործ Մարգարին և երկու ուրիշների, որոնք բաւական նեղութիւն կրեցին և ազատեցին տուգանքով:

Այնուհետև Ուէջօյին տեսայ Բազում, 1905 թ.ին, Պապաշայի (ընկ. Լեւոն Քաղէտեանի) մօտ, երբ երիտասարդ Գրիգոր Աղաճանեանի հետ, որպէս պրոպագանդիստներ, պատրաստուած էինք անցնել Միրզոյի նաւթագործարանը՝ մեր զարադաղցի հայ բանւորներին կազմակերպելու համար: Ուէջօն էլ ընկերակցեց մեզ: Նա Բազում ծառայում էր Ակոպովների մօտ և յաճախ Հ. Յ. Դաշնակցութեան կողմից վարում էր բանւորական գործադուլներ:



ՄԱՍՈՒՆ ԽԷՉՈՒ ԿՆՈՋ ԵՒ ԵՐԵՆԱՆԵՐԻ ՀԵՏ

Հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, կուսակցութեան հրահանգով Ուէջօն անցաւ Ղարաղաղ — Վարանդայի շրջանը՝ ղեկավարելու համար հայկական խմբերը: Այստեղ Ուէջօն երեան բերեց ուղղամական փայլուն կարողութիւն: (Տես «Իրօշակ» 1905թ. № 13, էրես 201-7) 4

1907 թ.ից սկսուած հակադաշնակցական հարձանքները ստիպեցին Ուէջօյին, 1910ին, անցնելու Պարսկաստան՝ Ռաշտ-Գիլան: Այստեղից, 1911թ. սեպտեմբերին, Եփրեմի հեռադրական պահանջով գնում, է Քեհրան, որտեղ Եփրեմը յանձնուած է նրան Քեհրանի պաշտպանութիւնը և ինքը մեկնում Երազազաւանքը՝ ապրտամբութիւնները ճնշելու նպատակով: Ուէջօն այստեղ էլ յաջողութեամբ կատարում է իր վրա դրւած պարականութիւնը և Եփրեմի վերադարձից յետոյ, նորից անցնում է Ռաշտ և դրադուում փայտի առևտուրով: Իբրև յեղափոխական, շնորհիւ բժիշկ Աթաբէկեանի, մասնւում է Ռաշտի ուսու հիւպատոսարանին, ձերբակալուում և փոխադրուում է Բազում, այս Դաշնակի բանուր, որտեղ վեց ամիս պահուելուց յետոյ, դատապարտուում

է ցմահ բանտարկութեան Սիրիբում՝ Ենիսէյսկի նահանգում:

Սիրիբում տաժանկէ կէանք է քաշում Սէջուն, բայց երբեք չի վհատում ու մնում է հաւատարիմ յեղափոխութեան գաղափարին: 1914թ. փետր. 13ին Ենիսէյսկից նա դնում էր իր մի ընկերով: «Գրում եմ քեզ Սիրիբոյց, հազար ու մի յիշողութիւններով ու զարգերով լցած: Եթէ ես ինձ առատ դրայի, ի՞նչ կապակալած չզգայի ընտանեկան կապանքներով, երկար ու բարակ չէի մտածի ու 20րդ օրը այդտեղ կը լինէի: Հէնց այդ կաշկանդումն է ինձ անապատ դարձնում, թոխըս մեռնում է և թեւք կտորում և զրոււմ եմ, որ շատ եմ անպիտանացած, քանի որ այդչափ սանձահարկած եմ:

Սիրիբը մի անվերջ տարածութիւն է նոսր բնակեցւած, հիմա միայն երևում է ձիւն ու անտառներ, բացօթեայ դռներին ապրող տաւար ու ձիեր. այս բոլոր ու բարան երկրում էլ ուրիշ ոչինչ. ամէն մի գիւղում մի քանի քաղաքական յանցաւորներ կան, իսկ 50 վերստի վրա մեծ Տասնեայ անունով գիւղ կայ, որտեղ 90 աւելի քաղաքական յանցաւորներ կան. մեզ նմաններ վրա առանձին հակողութիւն՝ ստորաձինկներ կան: Այդտեղ է Մարտիրոս վարժապետը, նրան բարեկեր:

Նոյն տարւայ մայիս օրին, մի ուրիշ նամակում գրում է: «Ենտրակալ եմ, թէպէտ ուշ ես պատասխանել, բայց բաւականին հետաքրքրութեամբ կարդացի նամակդ, շատ խնդրում եմ, որ ինձ մոռացութեան չը տաս, դո՛ւն է մամակն մի անգամ նամակ գրի: Ինչպէս երևում է կէանքը այդտեղ ետում է, շատ ուշագրտու է և նոյնիսկ ցանկալի, որ հակառակորդներն էլ են կազմակերպւում ձեր դէմ, դա կը հարկադրի ձեզ, որ ձեր ընկերային կապերն աւելի սերտ լինի: Անկեղծ, ուրախ եմ, որ իրար ետեւից չէք փախչում, այլ կըրոււմ էք, ինչպէս կարգապահ ու մարգած գիւնտերներ: Աշխատեցէ՛ք, որ վայելչութեան սաճմաններից դուրս չդաք և ձեր կուռ ու ամուր կազմակերպւած ուժը պայքարի բոլոր քաղաքակիրթ ձևերով միայն դէմ դնէք ձեր դէմ եղողներին: Ի սէր Աստուծո՛ւ, աշխատեցէ՛ք դրադարանը կարգի բերել, բոլորիդ էլ կրթութիւնն ու դաստիարակութիւնը յառաջ տանել, համապատասխան դաստիարակութիւններ ու ընկերական վիճաբանութիւններ սարքեցէ՛ք: Համբերատարութեամբ լսեցէ՛ք ձեր դէմ կանգնածի կարծիքը և համեմատութեան մէջ դնելով՝ ըստ այնմ կազմեցէ՛ք ձեր կարծիքը, համոզմունքը ու յետոյ պի՛նք պահեցէ՛ք ու հաւատացէ՛ք, որ ձեր երջանկութիւնը հէնց այնպիսիով համոզումների պահպանման մէջ է և դէպի նա ձեր յոյսերն վառ և հաւատն խոր պահելու մէջ: Իսկ այդ բոլորի համար հարկաւոր է մտաւոր, բարոյական աշխատանք. միշտ ձեր առօրեայ հոգսերի և հաշիւների ծառայելուց ի նկատի առէ՛ք և երբե՛ք չմոռանաք, որ ձեր «աստուծո՛ւն» նիւթական ու բարոյական պարագ ընէ՛ք հատուցանելու: Նոր խօսքեր չեն քանք, ի հակերջ, բայց չ՞ե որ բազում ասածներից շա՛տ քիչ մասն է ծիլ սքանկում մարդկանց հոգու մէջ: Ձե՛զ մատաղ, դայիմ ու նամուսով կացէ՛ք, դատարկ բաների համար երբեք ձեր մէջ տարաձայնութիւններ չզցէ՛ք: Եղ՛՛ք սիրով և վառ պահեցէ՛ք «Չձայի» կրակը: Օ՛ր, ի՛նչքան ուրախ եմ, որ «ծաղիկները չեն թառամում»: ձեր անխառն հաւատի

ու կենսունակութեան մէջ որոնեցէ՛ք և ձեր անհատական երջանկութիւնը: Որչափ էլ տարիքն իր խօսքն ասի, ձեր մտքերը ձերմակին և ձեր մէջը կրքանայ, բայց ձեր երիտասարդի վայել անխախտ վառ ու թըռուրտան հաւատը ձեզ էլ անհատապէս թարմութիւն պիտի ներշնչի, և դուք ձեզ պիտի զգաք ջահէրներ — հողով: Ես այդ փորձով գիտեմ: Միայն մի բան, մի մեծ սպաշանք, մի մեծ նախագործացում, որ շատ անգամ էք լսել, աշխատեցէ՛ք ամբողջովին չկլանել առօրեայ և այլ հոգաբարձական հաշիւներով միայն. ի նկատի ունեցէ՛ք, որ սոսկ ազատականներ չէք յետամնացութեան դէմ, յիշեցէ՛ք, որ ձեր հաւատոյ հանդեպի մէջ ուրիշ շա՛տ բաներ կան դրւած և նրանց պէտք է անպատճառ հետեւէ՛ք: Նա է ապրում, ով նայում է դէպի առաջ՝ ասած խօսքեր են, լս՛ւ խօսքեր»:

Վրա է հասնում համաշխարհային պատերազմը: Ծառերի հետ Սէջուն էլ ադատեց Սիրիբոյց ու վերադարձաւ քաղաքում առողջութեամբ: Ծիլտ այդ ժամանակ Բագում կամուրդներ էին հաւաքում: Սէջուն էլ դրեց իր թեկնածութիւնը, բայց ընկերները աչքի առաջ ունենալով նրա տնտեսական ու առողջական վիճակը, թոյլ չուրին, որ զնայ. պէտք է մնար ու կազդուրէր:

1917 թ.ին Սէջուն կրկին անցաւ Ռաշտ: 1918ին, երբ տաճկական զօրքը մտնեում էր Բագւին և մեծ պէտք կար դիւնորական հմուտ սեփերի, Սէջուն էլ դիմեց ճակատ: Իր երեխաների, կնոջ ու ընկերների արցունքները չկարողացան յետ կեցնել նրան: Գնաց ու էլ յետ չեկաւ. օրհասական մի ճակատամարտում, երբ կուռւմ էր առաջին դիրքերում, գերի ընկաւ թշնամու ձեռքը և տեղն ու տեղը սպանեց՝ վրէժի անէ՛ծքը չրթունքներին:

Ն. ՄԻՆԱՍԵԱՆ

ՁԻՆԱԳՈՐԾ ՄԱՐԳԱՐ

Ձինաղործ Մարգարի իսկական անունը Մարգար Յովսէփեան էր, Երևանի շրջանի Գարգալու գիւղից: Սովորել է Երևանի թեմական դպրոցում, սակայն, ըստիպւած է եղել ուսումը կիսատ թողնել ու մտնել իր եղբոր զինագործարանը Երևանում: Այդտեղ էլ երկար չի մնում. նրան հանգստութիւն չեն տալիս տաճկահայ եղբայրների տառապանքները և մտածում է օգնութեան զնայ նրանց: Այդ նպատակով մի խումբ ընկերների հետ անցնում է Թաւրիշ, որտեղ պատահում է Գ. Ալոյսանին, Ա. Զօրեանին և ուրիշներին, որոնք ուրախութեամբ ընդունում են նրան Հ. Յ. Դ. զինւորական արհեստանոցը:

Մեծ եռանդով ընկ. Մարգարը մի քանի տարի աշխատում է արհեստանոցում: Այդ ժամանակամիջոցին երկու անգամ ձերբակալոււմ է պարսից կառավարութեան կողմից. առաջին անգամ 1895ի վերջերին Եփրատի փոխարէն, երկրորդ անգամ 1896ին Թաւրիղից դէնք փոխադրելիս: Մասնակցում է Պանասարի արշաւանքին, որից յետոյ մինչև 1901 թիւը մնում է Թաւրիղում և դարձեալ աշխատում արհեստանոցում:

Քաւրիլովմ ամուսնանում է և 1901ի սկիզբները տեղափոխում է Ռաշտ: Ռաշտում Հ. Յ. Դ. կազմակերպութիւն ղեկ չկար: Մի քանի դարադաշից արհեստաւորներ, որոնց հետ և այս տողերիս գրողը, մեր անձնական գործերով անցել էինք Ռաշտ և տեղումս ծանօթացել հանգուցեալ Յակոբ Ղազարեանի (Հազո) հետ, որ ղեկավար Հնչակեաններից էր: Վերջինիս վրա Բագւի իմ բարեկամներից մէկի կողմից յանձնարարական ունեի և շատ մօտ էի Հաղոյի հետ: Այդ ժամանակները ընկեր Մարգարը մտնում է մեզ, մի քանի անգամ իր մօտ ճաշ է հրաւիրում և աշխատում է հասկանալ, թէ ի՞նչ կուսակցութեան ենք պատկանում: Մինչ այդ կարծում էր, որ մենք եւս Հնչակեաններ ենք, սակայն, երբ իմացաւ, որ Հնչակեաններ չենք, մի խորհրդակցական ժողով հրաւիրեց՝ Հ. Յ. Դ. կազմակերպութեան հիմքը ղեկու համար Ռաշտում:

Սնանաորի արշաւներից յետոյ ուսանական և տանկական ղեկավարների պահանջով պարսից կառավարութիւնը հաշտում էր յեղափոխականներին, ուստի և շատ զգուշութեամբ և մեծ գաղտնապահութեամբ ձեռնարկեց տեղիս կազմակերպական աշխատանքներին: Ռաշտի առաջին «Արշաւանք» խումբը բաղկացած էր ընդամենը հինգ հոգուց, որի խմբապետն էր ընկ. Մարգարը: Մի տարի յետոյ «Արշաւանք» խմբի մէջ մտան Կովկասից տեղս եկած ընկեր Ջումշուղ Ղարիբեանը և շատախցի Մուրադ Մարգարեանը, որը 1894-97թ. եղել էր վալազ Վազգէնի և Դուսնի խմբերում:

1903թ. ճարտարապետ Թորոսեանների գործով տեղս դալով բնակութիւն հաստատեց և Եփրեմը. նա ևս մշտաւ «Արշաւանք» խմբի մէջ:

Եփրեմի գալուց յետոյ տեղիս կազմակերպութիւնը աստիճանաբար ուժեղանում է, կազմում են մի քանի խմբեր և հիմնում է Գիլան անունով կոմիտէ, որպէս Աւարպատականի Կ. Կ-ն շրջան: Ռաշտում եւս ընկեր Մարգարը երկար չբաւանջ էր անձնական գործերով: Մի երկու տարի մնալուց յետոյ, անցաւ Բագու, որտեղ նրան յանձնեցին կուսակցական գաղտնի գրականութեան տեղափոխութիւնը Պարսկաստանից, Աստարայի վրայով Բագու: Այդ նպատակով դարձեալ վերադարձաւ Ռաշտ և մի երկու անգամ յաղորդութեամբ կատարեց տեղափոխութիւնը, սակայն, բերորդ անգամին Աստարայում ձերբակալւեց և առաջնորդեց Լենքորանի բանար: Վեց ամիս բանտում մնալուց յետոյ, Բագուի Հ. Յ. Դ. Կ. Կոմիտէին յաշտում է նրան բանտից փախցնել և նորից անցկացնել Պարսկաստան: Ռաշտից ընտանիքով տեղափոխում է Երևան, երբ ըսկում են Հայ-Թրքական ընդհարումները: Ընկ. Մարգարը այստեղ էլ գործի վրա է: Գիշեր ցերեկ ղէնքեր է մաքրում, կտորւածները շինում, հարկ եղած դէպքում ղէնքեր տեղափոխում:

Հայ-Թրքական ընդհարումներից յետոյ տեղափոխւեց Ռստոլով, որտեղ եղբայրը մեծ գործ ունէր և մնաց մինչև համաշխարհային պատերազմը: Կամաւորական շարժումը սկսելուն պէս թողնում է ընտանիքը, գալիս Երևան և ամբողջովին ներքում կամաւորական խմբերի գործերին: Վերջանում է մեծ պատերազմը և ընկ. Մարգարը ազատ ու անկախ Հայաստանի մայրաքաղաքում մտածում է հանգստանալ ու խաղաղ պայ-

մաներում իր ընտանիքի սպրուտի միջոցները հայթայթել: Հազիւ մի երկու տարի անցած՝ նորից փոթորկում է հայկական մթնոլորտը, բոլշևիկեան հորդանները վերջ են դնում մեր նորածին Հանրապետութեան ու սկսում են քաղաքացիական կռիւները Հայաստանում: Որպէս պարսկահպատակ, ընկեր Մարգարը իրաւունք է ստանում ընտանիքով դուրս գալ Հո-



ՄԱՐԳԱՐ ՅՈՎՍԷՓԵԱՆ (Զինագործ Մարգար)

յաստանից ու տեղափոխում է Թիֆլիս: Այստեղ եւս նրան հանդիստ չեն թողնում և շատերի հետ նրան եւս ձերբակալում և նետում են Չեկայի նկուղները: Վեց ամիս սուկալի տանջանքներ կրելուց յետոյ, ապաւում է բանտից և որպէս Պարսկահպատակ, աքսորում Պարսկաստան: Չեկայի զինանոս ստանում է շաքարախտ և ըրլորովին հիւժւած ու մաշած հասնում է Ռաշտ, ուր մի քանի տարի այդ հիւանդութեամբ տառապելուց յետոյ, 1926թ., մեռնում է 45 տարեկան հասակում:

Նրա աստանդական և տանջալից կեանքը և նրա լուսաւոր յիշատակը միշտ թարմ կը մնայ իր մօտ ընկերների համար:

ԱՐՇԱԿ ՄԻՍԿԱՐԵԱՆ

1900 Թականների սկիզբներից մինչև 1908 Թականը, մեր ընկերներից ով որ դէթ մի քանի օրով մտել է Գանձակ, անշուշտ, եղած կը լինի Արշակ Միսկարեանի դրախտութիւնը, Գանձակի հայկական քաղաքամասի ամենաբանուկ վայրում, Հայոց առաջնորդարանի վարի յարկում: Այդ խանութը դաշակցականների ժողմաբայալյոն էր:

Ընկ. Արշակը զեւ 90ական թւականների վերջերից անդամ էր Հ. Յ. Գ. Գանձակի «Մարշիմոն» անդրանիկ խմբի և ընկերական ու զաղջը բնառութեան շնորհիվ վայելում էր ոչ միայն մեր ընկերների, այլ և հակուսակորդների և ամբողջ ժողովրդի սէրն ու յարգանքը: Առաւօտից մինչև ուշ զիշեր նրա խանութը և խանութի առջևը խոնամ բազմութիւնը ասում-խօսում, վիճում, կատակում և զանազան հասարակական ու կուսակցական հարցեր էր քննում:

Արշակը բոլորի համար մի տեսակ տեղեկատու բերօ էր և հաղորդակցութեան կապ ընկերների միջև: 1903թ. օգոստ. 29ի հայ եկեղեցական կալուածքների դրաման առթիւ եղած արինայի համաժողովրդական ցոյցին, ինչ խօսք, Արշակն էլ գործօն մասնակցութիւն ունեցաւ, որի սլոտնառով երկար ամիսներ տառապեց Գանձակի բանտում: 1905-6ի հայ-թրքական ընդհարումներին Արշակը մի խումբ ուումբաժիգներով երկու քաղաքամասերը իրար միացնող միակ կամուրջի դերօքայաճն էր:

Հայ-թրքական ընդհարումներից յետոյ Արշակը նորից նեւուեց կուսակցական կապի և պրոպագանդի գործին: Մանաւանդ մեծ ազդեցութիւն ունեցաւ ուսւ զինւորների և կողակների մէջ, ուր կատարած կենդանի աշխատանքով նպաստում էր հակահայ տրամադրութիւնները ցրելուն: Նրա միջոցով էին դրսի հետ յարաբերութիւններ պահում և բանտարկեալ ընկերները:

1907թ. օգոստոսեան պոգրոսից յետոյ, Արշակը նորից բանտարկեց, բայց դատական իշխանութիւնը ոչ մի փաստ չկարողացաւ յայտնաբերել նրան դատելու համար: Գանձակի նահանգապետ տիրահոչակի կազմւելովը նրան դատապարտեց հինգ տարւայ վարչական աքսորի Ռուսաստանի Աստրախան քաղաքը, որ յայտնի է իր անառողջ կլիմայով: Մեկնելուց առաջ Արշակը ներկայանում է նահանգապետին և բացատրութիւն պար

հանջում: Նահանգապետը պատասխանում է, թէ՛ դու համոզւած դաշնակցական ես, իսկ ես՝ համոզւած միւսկետական: այդ պատճառով էլ աքսորում եմ նահանգից:

Աստրախանում Արշակը հիւանդացաւ թրքախոով և իշխանութեան թոյլուութեամբ, 1908ի աշնանը, վերադարձաւ Գանձակ, որսկից, բոխչկների խորհուրդով, անցաւ Սուխում: Մի քանի ամսից յետոյ, անյոյս վիճակում վերադարձաւ հայրենիք և 1909թ. փետրուարի վերջերին կնքեց իր մահկանացուն:

ԲէնՕ

ՄԻՆԱՍ ԼԱՅՐԱՊԵՏԵԱՆ

Օգոստ. 9ին, Թրոյ քաղաքին մէջ, յետ երկար և տառապալի հիւանդութեան, մեռած է Գաշնակցութեան Ամերիկայի կազմի գործօն ու վաստակաւոր ընկերներէն Մինաս Հայրապետեանը: Ընկ. Հայրապետեան Արարկիբի էր: Շատ երիտասարդ հասակին հետանալով ծննդավայրէն՝ կանցնի Պոլիս, ապա՝ Ամերիկա, ուր ապրեցաւ 35 տարի: Յարելով Գաշնակցութեան՝ ընկ. Հայրապետեան դարձաւ անոր ամենատանգուն մէկ անդամը: Ան էր, որ ընկ. Յ. Իւսուֆեանի առաջնորդութեամբ հիմնեց Թրոյի կոմիտէն, որու գործօն անդամը մնաց մինչև մահ՝ մասնակցելով միաժամանակ և ազգային-հայրենակցական ուրիշ շատ կազմակերպութիւններու և հիմնարկութիւններու: Հայաստանի Հանրապետութեան օրերուն վարեց փոխ-հիւպատոսի պաշտօնը Թրոյի և շրջանի հայութեան համար: Ընկ. Հայրապետեանի մահով, Ամերիկայի մեր կազմը, կը կորսնցնէ իր հաւատաւոր ու գործոճէկէայ աշխատակորներէն մէկը:

Բ Ո Վ Ա Ն Դ Ս Կ Ո Ւ Թ Ի Ի Ե

Ինֆանտոփում և աշխատանք (Խմբագրական)	225	«Բանուժի հոսուցութիւնը» (Ս. Վրացեան)	235
Սոցիալիստական յեղափոխութիւնը (Ռոստոմ)	227	Անգլիական տագնապը (Ս. Մաս.)	230
Քրիստափոր բանաստեղծ	228	Թուրքիայ շուրջ	241
Կուսակցական պայքարը (Ս. Զաւարեան)	228	Սոցիալիզմ եւ կառուցում	243
Հպարտ և յայքական (Աշոտ-Արծրունի)	229	Կացութիւնը Հայաստանում	249
Գաղնակցութեան դերը գաղութներում մէջ (Ասատուր)	231	Ալկանտես երիտասարդի պատմածներից	250
		Մեր գոհերը	251

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի
 Թիւն արժէ 2 Փր. 50 աման.

« Գ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցէն՝
 M-lle S. AGOPIAN
 5, rue des Gobelins, PARIS (13°)